

# Մ ի ռ Ն



Մ. ՅԱԿՈԲՅԱՆԻ ՎԱՆԵՐ ԵԱՅՈՑ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ

«سیون» مجله ارمنیة شهریه ، دینیة ، ادبیة ، ثقافیة ، للغة والبیان .  
 "SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology



ՍՐԲԱԶԱՆ ՔԱԶԱՆԱՅԱՊԵՏԸ ԵՒ ԱՍԵՆ. Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ

« سون » مجلة ارمنية شهرية ، دينية ، ادبية ، ثقافية ، للغة والبيان .

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology



# ԲՈՎՆԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Ամեն. Ս. Պատրիարք Հոր Ծննդեան պատգամը	1
Նորին Սրբութիւն Պօղոս Զ. Քահանայապետին պատմական այցելութիւնը յԵրուսաղեմ	3
Յունաց Տիեզերական Պատրիարք Աթենակորասի այցելութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հոր	11
<b>Ս. ԳՐԱԿԱՆ</b>	
— Օտարականը	13
Ծննդեան պատմութիւն	17
<b>ԿՐՈՆԱԿԱՆ</b>	
— Ստեփանոս Գալատական	18
<b>ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ</b>	
— * *	24
— Քառեակ	24
— Եփրատայ ...	25
— Անցեալս	26
— Երե գիտ օր մը լիք ...	27
<b>ԳՐԱԿԱՆ</b>	
— Ամանորի խոհեր	27
<b>ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ</b>	
— Հնդկաստանի Լահոր քաղաքի մէջ 1635ին գրուած Ոսկեփորիկ (Հաւաքածոյ) մը	29
<b>ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ</b>	
— Թուրք յԵրուսաղեմէ ի Հայս վասն Տեառնընդառաջին	33
— Օշականի անտիպերէն - Նարեկ	37
Ամենայն Հայոց Հայրապետի հարցազրոյցը Սովետական Հայաստանի ռախովոյի տէրի քրդակցի հետ	40
Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն	44
Շնորհաւորական եւ այլ հեռագիրներ եւ նամակներ	45
<b>Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ</b>	
— Եկեղեցական-Բեմական	46
— Պատգանական	48

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգրին Է,  
բոլոր երկիրներու համար, Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION  
Armenian Patriarchate,  
P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)



# —≡ Ս Ի Ո Ն ≡—

ԼՂ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

2013

1964

Յունուար — Փետրուար

Թիւ 1-2

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՅՈՐԴԱՆԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան այս խորհրդաւոր գիշերուանը մէջ, նորէն կը լեցուինք սիրոյ, լոյսի եւ ոյժի յաւերժական ժայթքով ու բխումով, որովհետեւ այս գիշեր բաց է վերստին երկինքը, եւ աստղի բեւով հրեշտակները երկիր կ'իջնեն, աւետելու սիրոյ եւ խաղաղութեան Իւստինի ծնունդը:

Մխիթարութեան առաջի բան մըն է այն հաւաստիք, թէ Աստուած ինքնին ծնած է իբր մարդ, մարդկութեան մէջ, եւ այս կերպով լեցուած է Աստուծոյ եւ մարդուն միջեւ եղած անջրպէսը. թէ Աւեր, աստուածային այդ զգացումը, եղած է այլեւս մարդկային կեանքի օրէնքը, մարդուն առջեւ բանալով բարձունքէ բարձունք վերացող լուսեղէն այն շաւիղը, որ իր ակօսք բացաւ այն օրէն երբ Բեթղեհէմի երկնքին վրայ ծագեցաւ սիրոյ եւ խաղաղութեան Իւստինի ծննդեան նորանշուղտ աստղը:

Այդ աստղը որ իր ծագած վայրկեանէն իր ետեւէն փառք հովիւներ, մոզեր եւ արհաւիրք, նոյն այդ աստղն է որ ցարդ կ'առաջնորդէ մարդկութիւնը, բարի հաւաստի եւ ընկերային ազնուական նուաճումներու բոլոր մարզերէն:

Ունայն բառ մը չէ «Այսօր երկիրս երկինք եղեն» արտայայտութիւնը, զոր սրբազան երգը կ'արձագանգէ ամէն տարի, Ծնունդի առաւօտուն, եկեղեցւոյ բեմէն, հոգեզմայլանքի անխառն հրճուանքով: Երբ արդարութեան, բարութեան պատգամներուն կենդանակերպերը աշխարհ կը դրկոյն նորանոր աստղերով, եւ կրկին անայց խորհրէն համբայ կ'իյնան մոզեր, արհաւիրք, ստաւիտով ու ոսկիով, զեղումի հանելու համար խորհրդաւոր այս գիշերը:

Յիսուսի հրաշալի Ծնունդը ոչ միայն աստուածպաշտութեան երկիրաւոր զգացումն ու խորհուրդը կը բերէ մեզի, այլ սիրոյ եւ ներդաժնութեան, գոյքի եւ զոհաբերման կամքը կը պատգարէ մեր տղա մարմիններուն մէջ: Աշխարհ բերուած այդ ոգիով մարդկային գիտակցութեան արժէքը բարձրացաւ



գերազանցօրէն, ներշնչելով մեզի մեր փրկութեան խառնիսն ելող հաւասֆր եւ մեզի հազցնելով հոգեւոր դիպցազնութեան մը անփերելի զէնն ու զրահը:

Բայց որպէսզի Քրիստոնէութիւնը կարենայ կասարել իր վերածնութեան փրկարար դերը, հարկ է որ Քրիստոս ամէն օր կարենայ ծնիլ մեր կեանքին մէջ, կարող ընելու զմեզ լսելու երկնային ձայնին բովիչ հնչիւնը, որ ըսէր մեզի «Ողորդ իմ ես դու, ես ես այսօր ծնայ զքեզ»:

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի, իմ եւ իմ սիրելի Միաբանութեան սիրքը դէպի հեղ է որ կը բացուի նորէն, նուիրական այս գիշերով, եւ կեցած Ս. Ծննդեան վեհախայրին մէջ, որուն հաւասֆր 20 դարերէ ի վեր կը լեցնէ ու կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանքը, հեզի կը փոխանցենք աւետիար մեր Փրկչի Ծննդեան տօնին, շնորհաբեր այս գիշերուան ընդմէջէն:

Այդ աւետիար, զոր օր մը հովիւներն ու հրեշտակները տուին աշխարհին, տալաւին կ'արձագանգէ կարծես այս սրբազան Այրին խորը: Զայն հեզի կը փոխանցենք նոյնութեամբ, ժողովուրդ Հայոց, առ եւ պահէ իբրեւ սպեղանի հաղցրութեան, իբրեւ խումկ օրհնութեան եւ իբրեւ պատգամ մխիթարութեան բովանդակ կեանքիդ համար:

Դուն կը հաւատամ, ժողովուրդ Հայոց, հաւատացեր ես միշտ արդարութեան, սիրոյ, խաղաղութեան եւ անոնց անկարելի փառքին: Շարունակէ հաւատալ Յաւերծի Ծննդեան եւ մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ Ծննդեան այս բեղմնաւոր գիշերուան մեծ խորհուրդովը:

Հաւատա սիրոյ եւ խաղաղութեան Իսխանին, եւ Իմով աշխարհ եկած առաքինութեանց կենարար զօրութեան: Մի ամպոսեր յոյսիդ պայծառութիւնը եւ բոյլ մի տուր որ պատահական ու վաղանցուկ իրադարձութիւններ կեղծես են հաւասֆիդ սրբութիւնը:

Սիրէ երկիրը ուր կ'ապրիս եւ ժողովուրդը որ ասպնջականած է զքեզ: Սիրէ Ազգդ եւ Մայրենի Սուրբ Եկեղեցիդ, եւ աղօթէ անոնց անհախտելի միութեան եւ պայծառութեանը համար, որպէսզի այս գիշեր մանկացող Փրկիչը արիացնէ զմեզ, այս Սուրբ Երկրին մէջ, աշխարհի նշանաւորագոյն ազգերու շարքին վրայ միշտ բարձր պահել կարենալու մեր պատիւնն ու իրաւունքը: Այդ փառքն ու իրաւունքը հուկդ է, ժողովուրդ Հայոց, մենք զինուորներ ենք միայն քո իրաւունքի դրօշին, այս օրհնեալ երկրին մէջ:

Մեր Տիրոջ սուրբ Ծննդեան այս բարեբաւոյն առիթով, մեր խորին երախտագիտութիւնը եւ անկեղծ հաւատարմութեան զգացումները մեր սիրելի քաղաւորին, Հիւսէյն Առաքինին, եւ իմով զխաւառուած Յորդանանի բոլոր վարիչներուն: Տէրը բոլ միշտ անսասան պահէ Հաշիմական Գահը, եւ անոր անզուգական Գահակալին շնորհէ անփորձ, երջանիկ եւ արդիւնաւատ տարիներ, իրագործել կարենալու իր երկրին եւ իրեն այնքան սիրելի ազնիւ ժողովուրդին ակնկալութիւնները:

185-98



19345 ահ



# ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ Զ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

Անցեալ տարուան Հոգովի մէջ զուամարուած Տիեզերական Բ. Ժողովի վերջաւորութեան, Պօղոս Զ. Սրբազան Քահանայապետը յայտարարեց ի լուր Ժողովին և ամբողջ աշխարհին՝ թէ որոշած էր Յունուար 4ին Ս. Երկիր այցելել, իբրև պարզ ուխտաւոր։ Անակնկալ այս լուրը, որ գուրս պիտի բերէր Ս. Քահանայապետը Վատիկանի իր առանձնարանէն, վերջ տալով դարաւոր մեկուսացումին, ընդհանուր հետաքրքրութեան և խանդավառութեան առիթը հանդիսացաւ բովանդակ քրիստոնեայ աշխարհին համար։

Յատկապէս զո՞հ եղաւ Յորդանանի մեր սիրելի Հիւսէյն Թագաւորը, որ իբրև Ս. Տեղեաց յանձանձիշ ու պաշտպան, քաղցր առիթը պիտի ունենար հիւրասիրելու և պատուելու Սրբազան Քահանայապետը, որ իբրև ուխտաւոր Ս. Երկիր կուգար։

Արժանավայել կերպով կարենալ դիմաւորելու համար Սրբազան Ուխտաւորը, Յորդանանի Կառավարութիւնը շաբաթներով պատրաստութիւններ տեսաւ, որոնց կը հսկէր անձամբ Վեհափառ Թագաւորը։ Ամմանի, Երուսաղէմի, Բեթղեհէմի փողոցներուն ու զանոնք միացնող ճամբաներուն վրայ բարձրացան բազմաթիւ կամարներ, իսկ բոլոր զլիւսաւոր մուտքերուն վրայ փակցուած էին Ս. Պապին և Հիւսէյն Թագաւորին նկարները։ Հազարէ աւելի թղթակիցներ և հեռատեսիլի ընկերութիւններ, օրեր տուա՞յ փութացած էին Յորդանան, պատմական այս այցելութեան իրադարձութիւնները աշխարհին հաղորդելու համար։

ԱՄՄԱՆԻ ՕԴԱԿԱՅԱՐԷ.— Հակառակ աննպաստ օդին, երբ Ս. Քահանայապետին օդանաւը մօտեցաւ Յորդանանեան սահմաններուն, Ամմանի զինուորական օդանաւերը դիմաւորեցին օդանաւը և խաղաղ ու ասպնով իջեցուցին զայն։ Ս. Պապը դիմաւորուեցաւ, օդակայանին մէջ, Վեհափառ Հիւսէյն Թագաւորէն, Յորդանանեան Կառավարութեան անդամներէն, արեւելքի պատրիարքներէն և բազմահազար ժողովուրդէն, իսկ երկու աղջնակներ, հազած Յորդանանեան և Վատիկանի դրօշներու գոյնով զգեստներ, մեծ Հիւրին ընծայեցին ձիթենիի ճիւղ մը և ծաղկեփունջեր, մինչ հեռուէն կ'արձակուէին աղաւթներու հոյլեր օդին մէջ։

Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորը յանուն Յորդանանի Կառավարութեան, Մահմետականներու և Քրիստոնեաներու միացեալ ընտանիքին և Աստուծոյ հաւատացող և բարի կամեցողութիւն ունեցող աշխարհի բոլոր Ժողովուրդներուն, բարի գալուստ մաղթեց մեծ Հիւրին։ Միայն այցելութիւնը, ըսաւ, բացառիկ պարագայ մըն է զոր միշտ պիտի յիշենք, և մեծ յոյս ունինք որ Զերայս ուխտաւորութիւնը պիտի ըլլայ բարենշան ամբողջ աշխարհի Ժողովուրդներէն։



րուն համար: Կը վստահեցնենք Ձերդ Սրբութիւնը, որ Յորդանանի մեր ժողովուրդը սիրով պիտի յայտնէ Ձեզի երախտագիտութեան սրտագին իր զգացումները, որ մերն ալ են Ձեր նկատմամբ: Ապա վերջացուց իր խօսքը ըսելով. «Բարի գալուստ կը մաղթենք Ձեզի, ի Յորդանան և ի Սուրբ Երկիր Ձեր այս ուխտաւորութեան առիթով, ո՛վ պատուական այր Աստուծոյ»:

Վեհափառ Թագաւորի բարիգալստեան խօսքին պատասխանեց Սրբազան Պապը, որ ի մէջ այլոց ըսաւ. «Վեհափառ Տէր, մեծապէս կը գնահատենք Ձեր բարութիւնը, որ անձամբ եկած էք մեզ ընդունելու Ձեր Թագաւորութեան մէջ, մեր ժամանումին այս առիթով: Մեր այցելութիւնը խոնարհ ուխտաւորութիւն մըն է, հոգևոր բնոյթով, այն սրբազան վայրերուն մէջ, որոնք սրբացած են մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Մնունդով, կեանքով, չարշարանքներով, մահուամբ, Յարութեամբ և Համբարձումով:

«Պիտի աղօթենք ի սրտէ այս սրբավայրերուն մէջ, աշխարհի խաղաղութեան համար, այն խաղաղութեան՝ զոր Քրիստոս թողուց իր աշակերտներուն և աշխարհին: Դիտենք, Վեհափառ Տէր, որ Դուք բազմացող էք Ձեր երկրի խաղաղութեան և Ձեր ժողովուրդի բաբօրութեան. կը մաղթենք ի սրտէ որ իրագործուին Ձեր բոլոր իղձերը: Պատիւ բոլոր անոնց՝ որոնք կ'ուզեն որ ազգերու մէջ տիրէ սէր, խաղաղութիւն և եղբայրութիւն»:

Յետոյ ընծաներ տուաւ Թագաւորին, Մայր Թագուհիին և արքայական ընտանիքի անդամներուն: Նորին Վեհափառութիւնը մինչև ինքնաշարժ ընկերացաւ Սրբազան Հիւրին և ապա վերադարձաւ պալատ: Իսկ Նորին Սրբութեան ինքնաշարժը հազարաւորներու ծափերու մէջէն շարժեցաւ դէպի Երուսաղէմ, իրեն հետ ունենալով արևելեան պատրիարքներ, կարտինալներ և պետական ու զինուորական բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Ապտուլահ իշխանին կամուրջին առջև, Յորդանան գետի վրայ, որ Ամմանի և Երուսաղէմի կէս ճամբան է, Նորին Սրբութիւնը դիմաւորուեցաւ Երուսաղէմի Կառավարիչէն, Քաղաքապետէն, Արևմտեան Յորդանանի զինուորական հրամանատարէն, Բեթղեհէմի Քաղաքապետէն և ուրիշ պաշտօնական անձնաւորութիւններէ: Վեհափառ Թագաւորը մինչև Երուսաղէմ հեղինակաւոր կը հետեւէր Ս. Պապին, անձամբ հսկելու համար ընդունելութեանց կազմակերպութեան: Յետոյ Ս. Պապը իջաւ ինքնաշարժէն և դէպի գետը ուղղուելով, աղօթեց սրտայոյզ: Ապա ինքնաշարժերու թափօրը շարունակեց իր ընթացքը դէպի Երուսաղէմ:

Երուսաղէմ, Դամասկոսի դուռ կոչուած մուտքին առջև, ժամերէ ի վեր սպասող կրօնական, պետական և զինուորական ներկայացուցիչները և ժողովրդական ամէն խաւերէ և ազգերէ բաղկացած մեծ բազմութիւն մը դիմաւորեց Սրբազան Քահանայապետը և իր հեղեղին մէջ առած, մարդկային ծովի ալիքներուն մէջէն տռաշնորդեց Մեծ Հիւրը դէպի Ս. Յարութեան Տաճար, գանցելով ծրագրուած բոլոր պատշաճութիւնները:

Դամասկոսի դրան մօտ, Սրբազան Հիւրը դիմաւորուելու էին զացեր, Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարքը և Լուսարարապետ Հայրիկ Արքեպիսկոպոսը, իրենց հետևորդներով, ինչպէս նաև Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Խորէն Կաթո-



զիկուսի ներկայացուցիչները, յանձին Գերշ. Տ. Տաճատ Արքեպիսկոպոսի և Տ. Տ. Գարեգին և Արտաւազդ ծայրագոյն վարդապետներու:

Ս. Յարութեան Տաճարին մէջ, ժամը 6.15ին, Նորին Սրբութիւնը պատարագեց Քրիստոսի Ս. Գերեզմանին առջև: Ներկայ էին ծովածաւալ բազմութեանը հետ միասին եկեղեցական և զինուորական պետեր: Պատարագէն յետոյ խօսեցաւ Յիսուսի չարչարանքներու, յարութեան և մարդկային վերկութեան մասին: Յետոյ բարձրացաւ Դողգոթա և ծնկաչոք աղօթեց: Ապա ժողովուրդի խանդավառ ցոյցերու մէջէն գնաց առաքելական Նուիրակատունը հանգչելու:

ԸՆԴԻՈՒՆԵԼ ՈՒԹԻՒՆՆԵՐ. — Առաքելական Նուիրակատան մէջ ժամը 8ին, համաձայն նախօրօք ճշդուած յայտագրին, Նորին Սրբութեան այցելեցին Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարքը և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Խորէն Վեհափառի ներկայացուցիչները, բարի գալուստ մաղթելու Նորին Սրբութեան, և յայտնելու իրենց շերմ խնդակցութիւնները այս պատմական ու շնորհաբեր այցելութեանը համար: Այս առիթով Ս. Պապը մետաղներ տուաւ այցելուներուն և ոսկեգօծ ու քարերով զարդարուած սկիհ մը՝ Ամեն. Եղիշէ Պատրիարքին:

Յետոյ Նորին Սրբութեան այցելեց Երուսաղէմի Յունաց Ամեն. Պէնէտիքթոս Պատրիարքը: Ս. Պապին ընդունելութեան արժանացան նաև միւս կրօնական յարանուանութիւններու ներկայացուցիչները: Նոյն օրը երեկոյեան ժամը 10ին, Սրբազան Պապը ընդունեց Ս. Երկրի Կաթողիկ Նուիրապետութիւնները, կրօնաւորներ ու մայրապետներ, Ս. Աննա Եկեղեցիին մէջ: Ժամը 10.30ին Գեթսեմանիի Եկեղեցին իջաւ զիշերային պաշտամունքի: Արարողութեան ընթացքին, քանի մը զլխաւոր լեզուներով կարդացուեցաւ Աւետարան, ընդ որս և հայերէն լեզուով:

Կիրակի, 5 Յունուարի առաւօտուն, Նորին Սրբութիւնը մեկնեցաւ դէպի Նաղարէթ, մեծ չքախումբով մը: Հոն նորաչէն եկեղեցիին մէջ պատարագեց ու քարոզեց, մեծածաւալ բազմութեան մը առջև: Յետոյ այցելեց Դալիլիոյ լիճը, Թաբոր լեռը, և ուրիշ սուրբգրական վայրեր, և երեկոյեան ժամը 9.15ին վերադարձաւ Երուսաղէմ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՊԱՊԻՆ ԵՒ ՅՈՒՆԱՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԱԹԵՆԱԿՈՐԱՍԻ. — Նոյն օրը Երուսաղէմ ժամանած էր Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարք Ամեն. Աթենակորաս Սրբազանը: Երուսաղէմի օղակայանին մէջ զինք զիմաւորելու եկած էին Վեհափառ Թագաւորը, զինուորական, քաղաքական և կրօնական ներկայացուցիչներ և Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարքը, անձամբ, Վեհ. Խորէն Կաթողիկոսի ներկայացուցիչներու հետ միասին:

Յունուար 5ի երեկոյեան ժամը 9.30ին, Ս. Պապին այցելեց Յունաց Ընդհանրական Պատրիարքը: 1439էն ի վեր առաջին անգամն էր որ Հռոմի Պապը և Տիեզերական Յոյն Պատրիարք մը իրարու կը հանդիպէին: Աթենակորաս Ընդհանրական Պատրիարքին կ'ընկերանային զանազան վայրերէ եկած Օրթոտոքս բարձրաստիճան եկեղեցականներ: Կը բացակայէին Յունաստանի պատուիրակները: Յունաց Տիեզերական Պատրիարքին և Ս. Պապին հանդիպումը եղաւ



ոչ հրապարակային: Երկուքը միասին ազօթեցին Գրիստոնեայ եկեղեցիներու Միութեան և եղբայրական սիրոյն համար: Այս հանդիպման ընթացքին Ս. Պապը ըսաւ. «Մեծ է մեր յուզումը, խորունկ՝ մեր ուրախութիւնը, որ այս խորապէս պատմական ժամուն, դարերու լուծեան և ակնկալութիւններէն վերջ, Կաթոլիկ եկեղեցին և Պոլսոյ Պատրիարքութիւնը իրարու կը հանդիպին, յանձին իրենց ամենէն բարձր ներկայացուցիչներուն: Այս հանդիպումը դուք ուզած էիք մեր անմոռանալի նախորդին օրով: Ան ևս ուզած էր այս հանդիպումը մեզի պէս, բայց անոր մահը արգիլեց այս բաղձանքին իրագործումը: Միութեան առաջնորդող ճամբաները կրնան լեցուն ըլլալ խոչընդոտներով, բայց բոլոր ճամբաները իրարու պէտք է զան, հասնելու Աւետարանի աղբիւրներուն:»

«Վարդապետական, ծիսական, բարեկարգուելու կարօտ տարրերութիւնները պէտք է քննուին միասնաբար, և, առաւելապէս, ճշմարտութեան հետեւում եղբայրական ոգիով: Ինչ որ հիմա կրնայ զարգանալ և պէտք է զարգանայ, եղբայրասիրութիւնն է, որ պիտի զիտնայ տանիլ արտայայտութեան նոր կերպեր, և օգտուելով անցեալի դասերէն, պատրաստ պէտք է ըլլայ ներելու, հակամէտ ըլլալով միշտ բարիին:»

«Ձեռք կրնար ըսել թէ որքան ազդուած ենք ձեր այս արարքէն: Ոչ միայն Հռոմի եկեղեցին, այլ ամբողջ քրիստոնեայ աշխարհը պիտի արձագանգէ մեծ ուրախութեամբ այս պատմական դէպքը: Այս առիթով ձեզի մնաս բարով չէ որ կ'ըսենք, այլ ցտեսութիւն, յուսալով նորանոր և արդիւնաբեր հանդիպումներ, յանուն Աստուծոյ:»

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի Ս. ԲԵԹՂԵՀԷՄ. — 6 Յունուար, առաւօտեան ժամը 7ին, Ս. Քահանայապետը մեկնեցաւ Բեթղեհէմ, ընկերակցութեամբ Կաթոլիկ Պատրիարքներու և պետական անձնաւորութիւններու: Բեթղեհէմի մէջ, մեր Տիրոջ Ս. Խննդեան Այրի Մսուրի Սեղանին վրայ պատարագեց և տուաւ իր պատգամը: Իր ամբողջ մարդկութեան ուղղած սիրոյ և խաղաղութեան պատգամը վերջապէս հետեւեալ բառերով. «Մեր ողջոյնը սահման չի ճանչնար, կ'անցնի բոլոր պատուարներէն և կը սիրէ հասնիլ բարի կամք ունեցող բոլոր մարդոց, նաև անոնց՝ որոնք ոչ մէկ բարեացակամութիւն կը ցուցնեն քրիստոնէութեան հանդէպ:»

Բեթղեհէմէն վերադարձին՝ փոխ այցելութիւն տուաւ Ամեն. Աթենակորաս Յոյն Օրթոտոքս Տիեզերական Պատրիարքին, և կարճ տեսակցութիւն մը ունեցան իրարու հետ և շերտօրէն ողջագուրուեցան: Ս. Պապը Պատրիարքին նուիրեց ռակեզօծ սկիհ մը, իսկ Աթենակորաս Պատրիարքը Ս. Պապին նուիրեց հին թանկարժէք սրբապատկեր մը: Մկի՛նը ընդունելէ վերջ, Պատրիարքը ըսաւ. «Ձերմապէս կը մաղթեմ որ Պօղոս Զ. և ես, օր մը, միասին խառնենք զինին և չուրր, այս բաժակին մէջ:»

Ս. ՊԱՊԸ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ. — Յունաց Տիեզերական Պատրիարքի հանդիպումէն յետոյ, Նորին Սրբութիւնը այցելեց Հայոց Պատրիարքարանը, Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարքին: Վանքի աւագ դռնէն մինչև Պատրիարքարանի շքեղ դահլիճը, ճամբան ծածկուած էր թանկագին զորգերով: Ամբողջ Միաբանութիւնը, Ս. Պատրիարքի զխաւորութեամբ, վանքի





Մրբազան Քահանայապետը կը յանձնէ Ամեն. Մրբազան Պատրիարք Հոր  
ոսկիէ եւ արծաթէ մեծալներ:



աւագ դռնէն ընդունեց Ս. Քահանայապետը, որ ժողովուրդի ծափերուն և դպրոցական աշակերտներու և պատուի կեցող սկաւառներու շարքերուն ընդմէջէն առաջնորդուեցաւ լոյսերուն մէջ շողացող Պատրիարքարանի դահլիճը:

Սրտազին այս ընդունելութիւնը խորապէս տպաւորած կը թուէր Նորին Սրբութիւնը, որ հակառակ իր յոգնութեան, զուարթ էր ու քաղցրօրէն կը ժպտէր բոլորին, շոյելով դպրոցական աշակերտներու այտերը:

Պատրիարքական գահուն վրայ Նորին Սրբութիւնը յոտնկայս օրհնեց դահլիճը լեցնող բազմութիւնը, ապա բազմեցաւ: Նորին Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը հայերէնով կարգաց բարիգալուստի հետեւալ ուղերձը:

«Զերդ Սրբութիւն,

«Յանուն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, քրիստոնէական սիրով եւ եղբայրական ոգիով կ'ողջունենք Զերդ Սրբութիւնը, դարաւոր այս Հաստատութեանը մէջ:

«Ուրախ ենք որ Զեր նկատմամբ մեր այս յարգանքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Մեծի Տանն Կիլիկիոյ Սթոպի Գահակալ Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչները, ամբողջական ընելու համար Հայց. Եկեղեցւոյ յարգանքի տուրքը Զերդ Սրբութեան հանդէպ:

«Առաքելական այս Հաստատութիւնը, զոր այսօր Զեր անծին շուքովը կը լեցնէք, առիթներ ունեցած է իր մէջ ողջունելու երջանկաբեր այցելութիւնը իշխաններու եւ արքաներու, ինչպէս կը վկայեն այս դահլիճին պատկերները:

«Սակայն, առաջին անգամն է որ բախտաւորութիւնը կ'ունենայ վայելելու շնորհաբեր ներկայութիւնը իշխաններու իշխանին, Արեւմտեան Քրիստոնեայ մեծ աշխարհին — յանձին Զեր Սրբութեան: Զեր այս այցելութիւնը կը նկատենք ոչ միայն մեծ պատիւ մը Պատրիարքարանին, այլ նաեւ Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին, որ առաջին անգամը չէ որ առարկայ կ'ըլլայ Կաթողիկ մեծ Եկեղեցւոյ Գերագոյն Պետի բարձր ուշադրութեան:

«Զեր աննախընթաց եւ պատմական ուխտաւորութիւնը ի Սուրբ Երկիր, Զեր անծին շնորհի մէջէն նոր փայլ մը եւ նոր գոյն մը կ'աւելցնէ Քրիստոնէական այս փառքին, որ մեր Տիրոջ արիւնովն է սրբագործուած եւ ատով չբարձած ներշնչարան քրիստոնէական սերունդներու, եղբայրութեան, նուիրումի, միութեան եւ սիրոյ ոգիով եւ խորհուրդով:

«Այս առիթով, ի սրտէ կ'աղօթենք որ մեր Երկնաւոր Հայրը, որ Իր Միաձին Որդին տուաւ մարդկութեան այս Սուրբ Քաղաքին մէջէն, օրհնէ եւ պտղաբերէ Զերդ Սրբութեան բոլոր ջանքերն ու գործերը, յօգուտ Քրիստոսի Եկեղեցիին, անոր միութեան, ամբացումին եւ հոգեւոր վերակենսաւորումին:

«Զեզի հետ մենք ալ կը հաւատանք որ Եկեղեցին, ինչպէս միշտ, այսօր ալ կ'ուշուած է մարդկութեան բերելու Քրիստոսի կենսատու պատգամը, կենդանի վկայութեամբ եւ միասնական, ներդաշնակ ծառայութեամբ, ի փառս Աստուծոյ եւ ի խաղաղութիւն աշխարհին»:



որուն անդերէն թարգմանութիւնը կարգացուեցաւ Խորէն Վեհափառի պատուիրակութեան անդամներէն, Հոգշ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Սարգիսեանի կողմէ։

Պատրիարք Ս. Հօր խօսքին թարգմանութենէն յետոյ, Նորին Սրբութիւնը խտալերէնով խօսեցաւ հետևեալը, որ տեղւոյն վրայ անդերէնի թարգմանուեցաւ։



Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը կը կարդայ իր բարեգալուստի ուղերձը։

«Նորին Ամենապատուութիւն,

«Սուրբ Երկիր մեր ուխտագնացութեան առթիւ, երջանիկ ենք հանդիպում ունենալով Ձերդ Ամենապատուութեան հետ, եւ կը գիտակցինք այն խոր նշանակութեան, որ կը ստանայ այս հանդիպումը երուսաղէմի մէջ։

«Այսօր կ'ուզենք շնորհակալութիւն յայտնել Ձեզի այն ընդունելութեան համար, որ վերապահուեցաւ մեզի Ձեր Միաբանութեան եւ հաւատացեալներուն կողմէ։ Շատ զգածուեցանք այն գործովանքին ու յարգանքին համար, որուն առարկայ դարձանք։ Նոյնպէս ուրախութեամբ իմացանք, որ անկեղծ գործակցութեան միջոցով մը կը տիրէ հիմա կաթողիկէ համայնքին եւ հայ համայնքին միջեւ՝ Սուրբ Յարութեան Տաճարի նորոգութեան համար։ Այս սրբավայրը քրիստոնեայ սրտերու համար աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ամենէն թանկագին բանն է։



«Արդարեւ, ատիկա ճիշդ այն վայրն է, ուր «Աստուած ուզեց բոլոր էակներուն հետ հաշտուիլ Քրիստոսի միջոցաւ: Խաղաղութիւն կ'ընելով Անոր խաչին արիւնով», ուր փառաւոր յարուցեալ Քրիստոսը դարձաւ մեր կեանքին սկզբունքը, մեր յորտիւթեան գրաւականը, միակ պետք, որուն մէջ ամէն բան պէտք է միաձուլուի: Բարձրօրէն խորհրդանշական է որ, հակառակ պատմութեան ծանրութեան եւ բազմաթիւ դժուարութիւններու, բրիտոնեաները, զրոյստարար բաժնուած, միասին կ'աշխատին նորոգելու այս Տաճարը, որ կերտած էին միութեան մէջ եւ որ կ'աւերուէր իրենց բաժանումով:

«Մեր ամենէն ջերմ մաղթանքն է որ ողորմութիւնը տիրէ մեր միջեւ, իսկական ողորմութիւն մը, անպաճոյճ:

«Գիտենք, թէ ի՛նչ է անձնական դերը Ձերդ Ամենապատուութեան, միջնորդի այս փոփոխութեան մէջ. ծանօթ ենք այն ճիգերուն, որոնք երկուստեք կը թափուին՝ վիճելի կէտերը անհետացնելու համար. ատոր համար խորապէս ուրախ ենք, եւ կ'արտայայտենք մեր ամբողջ երախտագիտութիւնը: Թող խաղաղութեան Աստուածը Իր շնորհը առատօրէն տեղացնէ Ձերդ Ամենապատուութեան, Ձեր Միաբանութեան եւ Սուրբ Քաղաքի Ձեր բոլոր զաւակներուն վրայ»:



Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կը յանձնէ Պապին բանկազին փառելով զարդարուն գեղեցիկ խաչ մը:



Նորին Ս. Օծութեան խօսքէն վերջ Սրբազան Պատրիարքը Ս. Քահանայապետին նուիրեց թանկագին յակինթնեցի շատ գեղեցիկ խաչ մը, որուն ի տեսն. Սրբութիւնը ըսաւ. «Շատ գեղեցիկ է»: Իսկ Նորին Սրբութիւնը Պատրիարք Սրբազանին նուիրեց սակիէ և արծաթէ մետաղներ: Աւելի քան կէս ժամ տևող այս այցելութենէն յետոյ, հեռատեսիլի զործիքներու և նկարող մեքենաներու ձայներուն մէջէն, Նորին Սրբութիւնը հրաժեշտ առաւ Պատրիարք Սրբազանէն և Միաբանութենէն, որոնք զինքը առաջնորդեցին մինչև վանքին աւագ դուռը և աջահամբոյրներու և ծափերու տարափին տակ բաժնուեցան իրմէ:

Պատրիարքարանի դահլիճին մէջ Նորին Սրբութիւնը երբ հրաժեշտ կ'առնէր Պատրիարք Սրբազանէն, սուր ականարկով մը գննելէ վերջ Պատրիարքական չքեղ դահլիճը, ըսաւ. «Երբեք չէի կարծեր որ այսքան մեծ տեղ ունիք Սիոնի բարձունքին վրայ և այս կարգի չքեղ Պատրիարքարան մը, որ վար չի մնար Վատիկանի դահլիճէն»: «Զերդ Սրբութիւն, պատասխանեց Սրբազան Պատրիարքը, «Զեր հոս գալէն առաջ, անիկա չէր կրնար համեմատուիլ Վատիկանի դահլիճին հետ, բայց Զեր գալէն վերջ, ա՛յ կրնայ հաւասարիլ»: Նորին Սրբութիւնը անոյ՛չ մը ժպտեցաւ, յետոյ ըսաւ. «Դուք հայերդ ուրիշ էք, անցեալ ունիք և բրիտանեայ մեծ ժողովուրդներէն էք»:

## ՅՈՒՆԱՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԱԹԵՆԱԿՈՐԱՍԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ՊԱՏՐԻԱՐԷ ԱՍԵՆ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆԻՆ

7 Յունուարին, առտուան ժամը 10.30ին, Աթենական Պատրիարքը իր հետևորդներով այցելեց Հայոց Պատրիարքարանը և շերտօրէն ընդունուեցաւ Սրբազան Պատրիարք Հօրմէն և բովանդակ Միաբանութեան անդամներէն:

Սրբազան Պատրիարք Հայրը իր բարիգալուստի խօսքին տոյժով ըսաւ թէ, իր և բովանդակ Միաբանութեան համար մեծ պատիւ և հաճոյք է մեր մէջ ունենալ Զերդ Ամենապատուութիւն, Օրթոտոքս Եկեղեցիին պետը և վայելել Զեր ներկայութիւնը դարաւոր այս Հաստատութեանը մէջ:

«Շարժառիթը որ Զեզ այս անգամ երուսաղէմ կը բերէ, կը հետաքրքրէ ոչ միայն Քրիստոնէական աշխարհը, այլ համայն մարդկութիւնը: Ի սրաէ կը մաղթենք, ըսաւ Սրբազան Պատրիարք Հայրը, որ ամենաուրաքա՛մ Աստուած Զեզի երկար տարիներ շնորհէ, որպէսզի կարենաք ի կատար ածել Զեր բոլոր բարի յառաջադրութիւնները, նախ յօգուտ Օրթոտոքս մեծ Եկեղեցիին և ապա ամբողջ Քրիստոնեայ աշխարհին»:



Աթենակորաս Պատրիարքը իր սրտագին շնորհակալութիւնը յայտնեց իրեն եղած ընդունելութեան և Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր բարիգալութեան խօսքերուն համար, ըսելով թէ ինքը կը փափաքի իր կողմէն ընել լաւագոյնը՝ որ Քրիստոնեայ քոյր եկեղեցիները կարենան զիրար հասկնալ և աշխատիլ միասնաբար, ի փառս Աստուծոյ և բրիստոնէութեան զազափարներու և խեղճներու իրազորման՝ այս աշխարհի մէջ։



ԵՐԿՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐԸ ԹԵՒԱՆՅՈՒԿ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃԻՆ ՄԷՋ

Աւելի քան կէս ժամուան սիրալիր տեսակցութենէ մը յետոյ, երկու Պատրիարքները թեանցուկ դուրս ելան Պատրիարքական դահլիճէն։ Սրբազան Հայրը Աթենակորաս Պատրիարքին ընկերացաւ մինչև վանքի աւագ դուռը և Միաբանութեան ու ժողովուրդի ծափերուն մէջ ողջագուրուելէ յետոյ, բարի ճանապարհ մաղթեց մեծ Հիւրին և հեռակորներուն։



## Ս. ԳՐԱԿԱՆ

### ՕՏԱՐԱԿԱՆԸ

Առաւելան դէմ, Օտարականն ու իր խումբը շարունակեցին իրենց ճամբան դէպի Կափառնաւաւ, որ լճեզրին նստած կը ժպտէր կարծես, իր խիտ ծառաստաններուն մէջէն: Իրիկնամուտ էր արդէն, երբ անոնք Կափառնաւաւ հասան: Ամբողջ քաղաքը աշխոյժ եռուղեւի մէջ էր, բաւական ալ կ'ուզէին երաւատալէն վերադարձողը տեսնել, որ ամիսներէ ի վեր հեռացած էր իրենցմէ:

Նորաշէն ժողովարանին մօտ, փողոցներէն հսն խուժող բազմութիւնը այնքան ստուարացաւ, որ Օտարականը ստիպուեցաւ կանգ առնել: Բաւորը իրեն կը նայէին, իրենց հեքին մէջ սեղմած կարօտին անձուկը, և իրենց նայուածքներովն իսկ կը թուէին հարցնել իրեն, թէ ինչո՞ւ այսքան ուշ կը վերադառնար: Բաւորի աչքերուն մէջ սերտութեան արցունք կար:

«Երկար եղան օրերը որոնք հեռու պահեցին զիս ձեզմէ, ըսաւ Օտարականը, սովայն անօգուտ չեղան անոնք: Իւրաքանչիւր օրը որ բաժնուեցաւ ձեզմէ, քայլ մը ևս մօտեցուց մեզ մեր երկնաւոր Հօրը, որուն սպասումը քաղցր է և վերջ չունի, հայրենի տուն վերադառնալ ուզող իր սրգիներուն համար:

«Ուրախ եմ որ վերստին ձեր մէջ եմ, ձեր բոլորի անոյշ ու զգուող նայուածքներուն ներքեւ: Ի՞նչ քաղցր է բարեկամներուն հետ ըլլալ, քայլել ու խօսակցիլ միասին, առանց երկմտութեան և կասկածի:

«Հոս ես ինքզինքս իմ տանս մէջ կը զգամ, հոս իրերը բաց են ու պայծառ, և օրերը թեթեւ քայլերով կ'ընթանան: Հոս լուսնիւնը լեցուն է յուշերով և խոհերով, մոռացումն անգամ կանչն է իմաստութեան:

«Սովայն հոն, ուրկէ կը վերադառնամ, խօսքերու սկիւն և յայտին խոստումը կը մնային անարձագանգ, անդունդին մէջ նետուած քարերու նման:

«Հոն, անոնք չէին հասկնար զիս, իմ խօսքերս անոնց համար չէին: Հոգիս պայծառ էր, արշալոյսին մէջ բարձրացող լիբան նման, սովայն իրենք ցուրտ էին և խոժոռ, իրենց ծիծաղին մէջ անգամ ձիւն կար:

«Հոս գտարուն է, և սիրտերը տաք են ու փրփրուն, սերմեր ընդունելու պատրաստ հողին պէս: Սերմնացանն եմ ես բաւոր ժամանակներու, եթէ իմ խօսքերս մոռցուին իսկ ձեզմէ, անոնք պիտի ծփանայս ծովու ալիքներուն վրայ և ձեր դըլխուն վերեւ դիզուող ամպերուն մէջ, կազմելու անկորնչելի տեսիլքն ու ծիածանը բոլոր ժամանակներուն: Իմ խօսքերս ականջներու համար չեն միայն, անոնք խոստումներ են վաղուան, լոյսը խաւար սիրահերուն, արեւը ծովին և լեռներուն և կեանքը մարդերուն:

«Ով որ չ'ընդունիր ճշմարտութիւնը զոր եկած եմ աւանդելու, դաշնակից է չորին և հայհոյիչ ճշմարտութեան, առանց որուն՝ կեանքը աղիքի ու ակռայի արտաւած պայքար մըն է լոկ, զուրկ նպատակէ և իմաստէ:

«Բնութիւնը թշնամի է մեզի, բնազդը՝ մոլորեցուցիչ, անցեալը՝ անիրաւ և Օրէնքը՝ անկատար: Որդերու հետ սողալու համար չէ որ այս աշխարհը եկած ենք: Ով որ կը զգայ թէ իր ստամոքսին հետ հոգի մըն ալ ունի, չի կրնար հաշտուիլ կեանքին հետ զոր կ'ապրին մարդիկ այսօր, և օրէնքներուն՝ որոնք Չորին իշխանութեան դէմ փոխանակ թուժք ձեռնալու, փոխարինած են չորիքը: Ես օրէնքները լուծելու չեմ եկած, այլ ամբողջացնելու: Սովայն լրացնելու համար անկատարը՝ պէտք է փոխանակել զայն Նորով, անգիտանալու չափ Հինը:

«Ըսուած է թէ մի՛ սպաններ, բայց ես կ'ըսեմ, սպաննեցէք անկողնազուրկ սպաններուն, ամենազօր կիրքը մարդոց, ուրիշներու չորիքին մէջ իրենց յագեցումը որոնող:

«Ըսուած է թէ մի՛ ցանկանաք, բայց ես կ'ըսեմ, ցանկալ գիտցէք ձեզմէ անդին, ձեւէն, գոյնէն, հրապոյրէն գերազօր շնորհներուն, երազին՝ զոր տակաւին վեր կը մնայ մեր հաստգութեան:



«Ըստեա՛մ է, աչքի տեղ աչք և ականայի փոխան ականայ: Սակայն ես կ'ըսեմ ձեզի, թէ Չարին հակառակ մի՛ կենաք, մի՛ քրքրէ՛ք վէրքին պալարը, որ կրնայ թու-նաւորել, մի՛ նետէք ցետին մէջ քար, որ կրնայ ձեր վրայ ցայտել: Դիմադրու-թիւնը Չարին, բնութեան օրէնքով, ա-նասնական է, իսկ անդիմադրութիւնը՝ գերմարդկային: Ով որ կրնայ յաղթել իր անձին՝ ան միայն կրնայ յաղթել աշխար-հին: Եթէ չէք կրնար ըլլալ սուրբեր սի-րոյ և խաղաղութեան, եղէք զինուորները անոնց, թող ձեր կեանքը պաշտպանը հանդիսանայ այդ զոյգ դատերուն: Առանց քաջութեան և պայքարի, չկայ ճշմարիտ զոհագործութիւն, ինչպէս նաև ազատա-գրու՛մը զոհերուն: Իրական սէրը, սէրն է մեր երազներուն և յոյսերուն, և մեր երազներն ու յոյսերը պէտք է ըլլան բարձրագոյն մտածումը կեանքին:»

«Ըստեա՛մ է թէ մի՛ շնոր, բայց ես կ'ը-սեմ ձեզի, ձեր իրաւունքէն անդին ձեր պահանջելու մտածումը շնութիւն է ինք-նին: Ով որ կ'ուզէ ինքզինքը մաքուր պահել՝ պէտք է հրաժարի նոյնիսկ անցու-ղական և լռին ցանկութիւններէն: Մտա-ծել, երեւակայել, ցանկալ, մտանութիւն է արդէն: Ով որ կրնայ կտրել ցանկու-թեան նայուածքէն շինուած առաջին թելը, կրնայ փրկուիլ այն նենգաւոր ցանցէն, զոր նայուածքներէն կը հիւսուի:»

«Ըստեա՛մ է թէ սուտ երդում մի՛ բնիք, բայց ես կ'ըսեմ ձեզի, ով որ ճշմարիտ կ'երդնու՝ կը վախնայ: Ով որ սուտ կ'երդնու՝ կը խաբէ: Ծշմարիտ հոգին եր-դումներու պէտք չունի: Այնքա՛ն շատ են դժուար և երդումները, որ անոնց դի-մելը ինքնին ծիծաղելի ընել է ճշմար-տութիւնը:»

«Հոգիին այս փոխակերպումով լսկ կարելի է յաղթել Չարին, որ միահեծան հարկահանի մը պէս կը բռնանայ մեր վրայ: Այս կերպով միայն դուք կը մե-ծարէք ձեր անձը և կը գթաք ուրիշնե-րուն, բաժնելով անոնց ցաւը, առանց ըլլալու ցաւը ձեր շուրջիններուն: Սիրել գիտցէք ձեր նմանները, առելու աստի-ճան ձեր անձերը: Անձին սէրն է աղբիւրը քոյր և արեւիքներուն և նախճիւրներուն:

Երբ զոհերը կարենան գթալ իրենց գա-հիճներուն, այն ատեն մեր բնութեան և կեանքի ցաւագին աղջէն պիտի կրնայ ըսիլ սիրոյ և խաղաղութեան գարունը, իր բովանդակ պայծառութեամբ»:

Այս խօսքերը ըսելէ յետոյ, Օտարա-կանը շարունակեց իր ճամբան դէպի Պետ-րոսի գոքանչին տունը, ուր կը մնար երբ կափառնաում գար: Աղիւսէ պատերով շինուած բնակարան մըն էր ան, քաղա-քին ծայրը, թուզի և արմաւի ծառերով չըջապատուած: Կանաչեղէններու պար-տէզը կը բանար պզտիկ հորիզոնը տունին: Ամիսներ առաջ Օտարականը բժշկած էր ծերունի կիներ իր ծանր հիւանդութենէն, և այս վերջինը իրր երախտագիտութիւն իրեն արամադրած էր իր բնակարանը:

Ուշ ատեն, երբ բազմութիւնը ցրուե-ցաւ, ծանօթներու խումբը ընթրիքի նստաւ: Ծաշը կը բաղկանար անխմոր հոցէ, ձուկերէ և զանազան կանաչեղէն-ներէ: Սեղանին վրայ, հողէ ամաններուն մէջ դրուած էին նոյնպէս մեղր, հաւկիթ, ձիթապտուղ և չոր միրգեր: Երկու հողէ կանթեղներ իրենց տմայն լոյսը կը սրփ-ռէին սեղանին վրայ, առանց հաւասարիլ կարենալու պայծառ լուսնի լոյսին, որ կը շոգար դուրսը և սրուն արծաթ ճա-ռագայթները պատուհաններէն և դուռէն ներս կը թափանցէին, գեղեցիկ ներդաշ-նակութիւն մը կազմելով Օտարականի տեղոյն դէմքին և ձերմակ պատմութեանին հետ: Խաղաղութեան և միութեան քաղցր ինչ մը կը ծաւալէր տունէն ներս և ընթրողներուն շուրջը, վերածելով բո-լորը, մարդ, կին և տղայ, գողտր ամբող-ջութեան մը, մէկ մարմնի և մէկ հոգիի, իրենց Վարդապետով ամբողջացած:

Ծաշէն յետոյ Մատթէոս պատմեց կա-փառնաում մնացող բարեկամներուն իրենց երեսօղէմի ճամբորդութեան և կատար-ուած հրաշագործութիւններու մասին: Նստողներէն ոմանք երկինք կը բարձրա-ցընէին իրենց ձեռքերը, փառաբանելու զԱստուած: Ուրիշները երկիւղած կը համբուրէին Օտարականի պատմութեանին քղանցքները: Բիշ մը անդին, լուռ կ'ար-տասուէր Մագդաղինացին, եղբրական ու քաղցր, տերեւթափ նախնիի մը նման:



«Մի լար, Մազդազինէ, ըսաւ Գուգայի կինը, քաւ առաքինութիւններուդ շուշանը կը ծաղկի ահա մեղքերուդ ազդրին վրայ: Մարդը այն առնէ միայն երջանիկ է, երբ կը մտնայ աշխարհը»:

«Այս գիշեր բաց են հագիւս ազրիւրները, ըսաւ Մազդազինացին, և անոնք արցունք և սէր կը ծորեն հաւատարմայէս: Անտառ մըն էի մութ ծառերու, գիշեր մը մեղսալից: Յետոյ եկաւ լոյսը, նայեցայ իրեն, ընկղմեցայ իր յորձանքին մէջ, և այժմ գիտով եմ երկնային գիշիւն: Մարաւն ունիմ սուրբ և զեղեցիկ բաներու և անձանքի ներկայութիւն մը կը լեցնէ շուրջս: Գեղեցիկ եմ ես նման Սարսնի շուշանին, սակայն հին մեղքերու օձեր տակաւին կը սարսորան արեանս մէջ»:

Այս խօսակցութիւնը ընդհատուեցաւ յանկարծ, երբ առնին ցած պատուհանէն պատգարակ մը ներս հրուեցաւ, որուն մէջ պառկած էր Թոգոյն և զգոյնազիր կ'արգ մը: Երկու ուժեղ բազուկներ վերցընելով պարաններէ կախուած մահիճը, զայն Օտարականին առջև դրին: Կմախքացած հիւանդին շրթները կը դողային, իր քովանդակ մարմինը մեռածի նման էր, բացի իր աչքերէն, որոնք մարելու մօտ եղող ճրագներու նման կը պսպղային տակաւ, իրենց վրայ հրաւիրելով Օտարականին դուրսը:

Մահիճին ետեւէն անընդհատ կը շտաշային նոր դէմքեր, բոլորին անբուական եկող սննեակին մէջ, և ձեռքերու ամբողջ անտառ մը կը կարկառուէր դէպի Օտարականը, աղերսելու Անկէ որ բուժէր հիւանդ մարդը:

Օտարականը ռաքի ելաւ, նախ նայեցաւ իր շուրջը, յետոյ խրելով իր նայուածքը հիւանդին աչքերուն խորը, թրթռուն ձայնով մը ըսաւ. «Ո՞վ մահկանացու, կը հաւատա՞ս որ յանուն երկնաւոր Հօր կրնամ քեզ բուժել»: «Կը հաւատամ», ըսաւ մահամերձը, նուաղուն ձայնով, կարծես եկած հեռունիքէն: «Բու հաւատա՞րդ պիտի փրկէ քեզի, ել մահիճէդ և դնա»: Հիւանդը բուռն ճիգով մը սկսաւ շարժիլ մահիճին մէջ, յետոյ ելաւ և նստաւ: Հոն հաւաքուողները լեցուեցան ներքին դողով մը, անոնց այնպէս կը

թուէր թէ Օտարականին գլուխը տաղերուն կը հպէր, իսկ ձեռքերը կ'երկարէին մինչև աշխարհին ծայրը:

«Տէր, ըսաւ Պետրոս, մեղի ես չնորհէ հրաշքներ դործելու ոյժը»: «Հրաշքը արդիւնքն է հաւատքին, եթէ մանանիսի հատիկին հափ իսկ հաւատք ունենաք, պիտի կրնաք ըսել լեռներուն որ փոխեն իրենց դիրքը, և մարդերուն՝ որ վերածուին իրենց բարձրագոյնին»:

«Մեզի իրարմէ զատարոշողը, անհունին հետ ունեցած մեր յարաբերութիւններն են: Մարդուն համար սակայն կարելի է բազմացնել այս յարաբերութիւնները և ծնիլ ամէն որ նոր ոյժով և մօտենալ Աստուծոյ: Մեր կեանքի մեծագոյն ժամերը կը սկսին այն պահուն, երբ առաւել կամ նուազ հափով մենք մեղմէ դուրս կու գանք, նուաճելով մեր առօրեայ ետը, և գէթ վայրկեանի մը համար կը կենանք յաւիտեանականութեան շեմին, զգալու համար խորհուրդը կեանքին, վեր մեր առօրեայէն»:

«Զեզի պակասող մաքի կեդրոնացումն է, կարենալ տեսնելու իրերու լոյսը, և նայնացնելու ինքզինքնիդ այն հոսանքին՝ որ գաղտնիքն ու փրկարար ստուգութիւնն է կեանքերու և որ միացումն է Աստուծոյ կամեցողութեան և մեր փափաքներուն: Եւ այդ ոյժը կ'աւելնայ անոնց մէջ, որոնք գիտեն կենալ բարձունքներու վրայ, ուր հոգին կը նուաճէ մարմինը, և ուրկէ կարելի կ'ըլլայ մեզի տեսնել ամէն արարք և խորհուրդ, կապուած անվրէպ մեծ և անմահ բանի մը: Կեանքը ձեռքառնելէ առաջ, պէտք է ըմբռնել անոր իսկութիւնը, այսինքն նշմարել տեսանելիէն անտեսանելին գացող մեծ ուղին: Այդ ճամբայէն ընթացողին համար ոչինչ կայ գաղտնի և անկարելի: Հոն իրենք մերկ են և շօշափելի, և անոնց տիրապետելու կարելիութիւնը անսահման»:

«Զեր սիրտերը պէտք է ճանչնան գաղտնիք օրերուն, և ձեր խօսքերը պէտք է հարազատ արտայայտութիւնը ըլլան ձեր մտածումին: Դուք պէտք է կարենաք ձեր սկիական մասնիկով հպիլ ձեր իղձերու մերկ մարմիններուն: Հրաշքը հաւատքին պտուղն է, և պտուղը աւելի չ'արժէր քան ծառը»:



## Բ.

Յաջորդ օրը երբ Օտարականը կափառնառւմի փոքրիկ նաւահանգիստը այցելեց, առաջնորդութեամբ իր ձկնորս աշակերտներուն, հոն հաւաքուած գաւաւրազմութիւն մը, մեծաւ մասամբ հիւանդներէ բաղկացած: Բոլորը իրեն կը նայէին, դառն բայց քաղցրացած սպասումով:

Անոնց մէջ էր նաև հռովմէացի գինւորական մը, իր շուրջ ունենալով քաղաքի աւագանին, երբ Օտարականը ծովեզր հասաւ, իրեն ընդառաջեցին հրէից ծերերը և խնդրեցին որ հարիւրապետին տունը գար իրենց հետ, բժշկելու անոր շատ հիւանդ և սիրելի ծառան, աւելցնելով թէ հարիւրապետը շատ բարի և ազնիւ անձնաւորութիւն մըն է, կը սիրէ մեր ազգը և մեր ժողովարանը ինք շինել տուած է:

Օտարականը նայեցաւ հռովմէացի հարիւրապետին և անոր գէմքին վրայ կարդաց իր վիշտն ու հաւատքը, ապա ըսաւ, «Պատրաստ եմ դալու»: «Արժանի չեմ ես իմ յարկէս ներս ընդունելու ձեզի, ըսաւ Հարիւրապետը, հրամայեցէք միայն, և ես վստահ եմ որ իմ ծառաս պիտի բուժուի»:

Օտարականը այս անակնկալէն զգացուած, դարձաւ իր շուրջիններուն և ըսաւ. «Ըշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ամբողջ իտրայէլի մէջ տակաւին այս կարգի հաւատացեալի մը չհանդիպեցայ: Գնա, ըսաւ Հարիւրապետին, և տունդ չհասած՝ առողջացած պիտի գտնես ծառադ, չնորհիւ ունեցած հաւատքիդ:

«Ամէն մարդ երեք վկաներ ունի, ըսաւ Օտարականը, ինքը, իր ընկերը և Աստուած: Անհատի մը բարոյական, ընկերային և կրօնական արժանիքները այս երեք վկայութիւններով կը հաստատուին: Այդ երեք վկայութիւնները կ'արդարանան այսօր այս օտարականին վրայ:

«Այս համեստ, ազնիւ ու հաւատքով լեցուն Հարիւրապետի հոգին, այսօր, բարեգուշակ տաղի մը նման կը ծաղկի արքայութեան երկնակամարին վրայ, բախտով նոր հորիզոն մը և նոր դաշտ մը կանչուածներուն առջև:

«Համեստ ու սիրելի է ան, որ կուգայ իր բաժինը առնելու արքայութեան

բարիքներէն: Իր հաւատքը ծանրաբեռնուած է աւելորդապաշտութեամբ, որ կը ծանրացնէ մարդոց թախքը դէպի բարին և կատարեալը:

«Սիրելի են անոնք, որոնք կ'ապրին գիտնալու համար, որոնց հոգին լեցուն է իղձերով և խոհերով, աւելի զեղեցիկ քան տաղերը երկնքին: Որոնց աչքը առատ է և որոնք իրենց տուածին փոխարէն ոչինչ կը սպասեն: Որոնց հոգիին նետը իբրեւ զերազոյն ըղձանք, մարդերէն անդին կ'երթայ, մխտակու համար երկնքի սրտին:

«Հաւատաւորներու և բարիք ընել սիրողներու զանձարանը միշտ լեցուն է: Անոնք որ հաճոյքով կուտան՝ ուրախութիւն կը հնձեն, իսկ անոնք որ ցաւով կը վճարեն՝ ցաւին մկրտութիւնը կ'ընդունին: Նոյնիսկ անոնք որ կուտան առանց հաճոյք և ցաւ զգալու, լոկ պարտականութեան մը գիտակցութենէն տարուած, անոնց կը ժպտի երկնաւոր Հայրը, ամպերու ետեւէն:

«Տալը ապրելու կերպ մըն է, օրինակ ձեզի բնութիւնը: Երան իր պտուղով, խոտն իր ծիրով, կենդանին իր ձագով այդ խորհուրդն է որ կ'իրագործեն: Կեանքը փոխ կուտայ կեանքին, զայն յաւերժացնելու համար: Չեր հարտայտուած զգացումները կրնան թոյններու վերածուիլ ձեր մէջ, ի վնաս ձեր ապրումներուն:

«Սիրելի են անոնք, որոնք ոսկի խօսքերու փոխան բարիք գործել կը սիրեն, և կուտան իրենց խոստացածէն աւելին: Անոնք որ գիտեն արդարացնել ապագան և փրկել անցեալը, որոնց սիրտը այնքան է լեցուն, որ կը մոռնան իրենք գիրենք իրենց բաշխումին մէջ, որոնց հոգին զերծ է աշխարհի բոլոր կանչերէն և կապանքներէն:

«Հոգին կեանք է, իր գործունէութենէն կը ծնին վիշտն ու երջանկութիւնը, իսկ արցունքի և արեան մկրտութենէն՝ իր սրբութիւնը: Միայն արծիւները կրնան թռչիլ անդունդներու վրայէն և նայիլ աստղերուն»:

Ե.

(Շարունակելի՝ 7)



## ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ԲԵԹՂԵՀԷՄ ԵՐԹԱԼ ԶՈՒԶՈՂ ՀՈՎԻՒՐ)

Հրեշտակներն ու երկնային զօրութիւնները լոյսերով ու քաղցր երգեցողութեամբ երկինքը կենդանացնելէ վերջ, մեկնած էին: Հովիւները լոկ, իրենց ոչխարներուն հետ կեցած ամսան աստղի լոյսին տակ, տակաւին կը նայէին հեռուն, բլուրներէն անդին, ուր մեծ աստղ մը ինքզինքը կ'այրէր: Անոնց աչքերը մութին մէջէն կրակ կ'առնէին, հեռուններէն տակաւին բխող մեղեդիներուն թևով:

«Բեթղեհէմ երթանք, ըսաւ հովիւններէն ատրէցը, տեսնելու համար այս հրաշալի իրողութիւններուն արդիւնքը, զոր երկինքը կը բանայ մեր աչքերուն առջև այս գիշեր, որդարութեան, բարութեան, սիրոյ և խաղաղութեան պատգամներուն կենդանակերպը աշխարհ զրկելով, աստղերու և հրեշտակներու միաձույլ հանդէսի մը մէջ, յորդումի հանելու համար այս գիշերը, իր անհունաստիւթեամբ սողաւորտով»:

Դաւթի քաղաքը, հեռուն, բլուրի մը բարձունքին՝ կը ցնծար, նորանշոյլ աստղի շողերովը պատմութեանս առաջ: Անոյց խորերէն մոգեր և արքաներ ճամբայ կ'իյնային, ստաշխով ու սկիով բեռնաւոր, խաղաղակեցաւ համար ծնող մանկան վայրը:

Հովիւները կը պատրաստուէին մեկնելու, տակայն անոնցմէ մին, որ Ամովս կը կոչուէր, կռթնած իր գաւազանին, լուռ և անտարբեր, չէր ուզեր շարժիլ: «Երթանք, ըսաւ հովիւններէն ամենէն ատրէցը, տեսէք, հա լոյսը կը շառնայ քաղաքին վրայ, պատուելով հորիզոնը, և աստղերու սկիի փոշին կը բարձրանայ արքայավար երկվարներու սմբակներուն վերեւ»:

Սակայն Ամովսը ժխտական շարժեց իր գլուխը և չուզեց ընկերանալ մեկնելու պատրաստ հովիւներուն:

Յետոյ, յանկարծ, լսուեցաւ քաղցր ու խորունկ ձայն մը, երկնքէն ու երկրէն բխող, որ կ'ըսէր. «Այսօր մարդոց համար Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջ, և Անոր փառքն է որ կը շողայ երկնքին վրայ»:

«Երթանք, ըսին հովիւները Ամովսին, չե՞ս լսեր հրեշտակին ձայնը որ նոր Փրկիչ ծննդեան բարի լուրը կ'աւետէ մեզի»:

«Ոչինչ կը լսեմ ես, ըսաւ Ամովս, հոգիս լուռ է և անարձագանգ, ամառուն երկնքին պէս»:

Սրտմտեցաւ ատրէց հովիւը ընկերոջ այս անտարբերութեանը համար, ու ըսաւ. «Դուն աչքերովդ տեսար երկնային զօրութիւնները և ականջներովդ լսեցիր անոնց քաղցր համերգը, որոնք Տիրոջ փառքը կ'երգէին բարձունքներու մէջ և երկրի վրայ»:

Հովիւներէն ուրիշ մը հեգնանքով ըսաւ. «Որքան տառն որ երկինքը չէ փլած և լեռները կը պահեն իրենց տեղը, Ամովս պիտի չուզէ համոզուիլ եղածին: Անիկա տաւի մեծ ու եղբարկան ապացոյց մը կ'ուզէ, քան Աստուծոյ ձայնը»:

Ամովս աւելի խոր խրելով իր գաւազանը հողին մէջ և կռթնելով անոր, ըսաւ. «Ես կ'ուզեմ լսել ձայն մը որ իմ ականջիս մըմեջէր ձեր ըսածը»:

«Ի՞նչ կ'ուզէիր որ այդ ձայնը ըսէր ականջիդ, խնդացին միւս հովիւները, թէ դուն փաքիկ հովիւն ես հարիւրնոց հօտին»:

Ամովս չկրցաւ զսպիլ իր գայրոյթը և պառթկաց. «Ես փրկիչն ու պահապանն եմ իմ ոչխարներուս, չէ՞ք տեսներ անոնց աչքերուն մէջ ևս կայ սարսափը հրեշտակներուն և զարմանքը երկնային երեւոյթներուն: Աստուած շատ զբաղած է Բեթղեհէմի մէջ, և ժամանակ չունի մեր ոչխարներով հետաքրքրուելու»:

Ճիշդ այդ պահուն, տեսան հեռուն մարդու մը մօտենալը իրենց: Հովիւները զարմանքով նկատեցին որ շուները չէին հաչեր եկողին վրայ: Եկողը ափսոսյն ծերունի մըն էր, որ գաւազանի օժանդակութեամբ հազիւ կը քալէր: Օտարականը իրենց մօտեցաւ և կրակ ու կաթ խնդրեց իր նորածին գաւազին և անոր մօրը համար:

Հովիւները իրենց ունեցած կրակէն բաժին հանել ուզեցին իրեն: «Ո՞ր լեցնենք կրակը զոր կը խնդրես», ըսին ծերունիին: Ան իր վերարկաւին փէշը ներկայացուց: Երբ հովիւները անոր մէջ լեցուցին կրակը, զարմանքով տեսան որ



փէշը չէր այրեր: Յետոյ իրեն տալին կաթ և հաց և ճամբու դրին զինքը:

Ամովս երկար նայեցաւ մեկնողին ետեւէն, սակայն մնաց իր տեղը անշարժ:

Երբունիին մեկնելէն վերջ, հովիւները հետեւեցան իրեն և գացին Բեթղեհէմ: Ամովս շրջեցաւ հօտին մէջ և ջանաց հանգարեցնել ոչխարները, որոնք արտակարգ զգացումէ մը համակուած, անսովոր շարժումներ կը փորձէին, ոկանջնին լարած հեռուն, կասկածոտ սպասումի մը մէջ:

Առտուան դէմ հովիւները վերադարձան, և Ամովսին պատմեցին մտերի մէջ ծնած Մանկան մասին:

Անոնք տեսած էին իրեն տխուր ծառայող այրի մը ազօտ լոյսին մէջ, երիտասարդ կին մը որ լուռ քաղցրութեամբ իր նորածինը կը դիտէր: Տակաւ բացուող մութին մէջ, հովիւները նշմարած էին նաեւ այն ծերունին, որ իրենցմէ կաթ, հաց և կրակ ընդունած էր:

Երբ վերջացուցին իրենց տեսածներուն նկարագրութիւնը, ըսին Ամովսին. «Իսկ դուն ի՞նչ ըրիր հոս, ոչխարներուդ բոլը նստած»:

Ամովս ուրախութեամբ ըսաւ անոնց, թէ այժմ իր հարիւր ոչխարներու թիւը հարիւր մէկի բարձրացած է, և անոնց ցուցուց նոր ծնած ճերմակ գառնուկը:

«Այս նորածին գառնուկին համար դուն լսեցի՞ր որեւէ երկնային ձայն», ըսաւ տարէց հովիւը Ամովսին:

Ամովս շարժեց իր գլուխը և ժպտեցաւ: Սակայն հովիւները իր դէմքին վրայ տեսան զարմանալի պայծառութիւն մը, ճիշդ նման անոր՝ զոր տեսած էին նորածին Մանկան մօրը դէմքին վրայ:

«Ձեր երթալէն վերջ, ըսաւ Ամովս, ես լսեցի ձայնը, և անկէ յետոյ ծնաւ այս գառնուկը»:

Հազիւ Ամովսը վերջացուցած էր իր խօսքը, անոնք բոլորը նշմարեցին որ լուսակապոյտ երկնքին մէջ աստղը փշուր կը տարաղնուէր, գրելու համար դարերով սպասուած կախարդական պատգամը, զոր իրենք չէին կրնար կարդալ սակայն:

Ե.

## ԿՐԹՆԱԿԱՆ

### ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ստեփանոս քրիստոնէութեան նախափական է, ինչպէս նաեւ անոր եօթը նախասարկաւագներէն մին: Երբ Եկեղեցւոյ մէջ հաւատացեալներուն թիւը աճեցաւ, առաքեալներու զբաղումը բազմապատկուեցաւ, և այդ իսկ պատճառաւ գործերու բաժանում ընել անհրաժեշտութիւն մը դարձաւ:

Առաքեալներուն պաշտօնն էր ընդհանրապէս աղօթել և բարոյել: Այս երկու կարեւոր գործերէ զուրս կային ուրիշ երկրորդական պաշտօններ ևս, զոր օրինակ՝ սեղանին սպասաւորել, աղքատներուն նպաստ բաշխել, այրիներուն և չքաւորներուն հոգ տանիլ և այլն: Առաքեալներ իրենց կարեւոր պաշտօնը ձգելով չէին կրնար զբաղիլ այս գործերով: Հետեւաբար կարօտ դասակարգին հոգատարութիւնը լման տեղի չէր ունենար, մանաւանդ հելլէնախօս քրիստոնեաներուն աղքատները անխնամ կը մնային:

Յունախօս քրիստոնեաներ դիտողութիւն ըրին այս մասին և հարցը առաքեալներու նկատողութեան յանձնեցին: Առաքեալներն ալ զայն հաւատացեալներու ժողովին բերին, և անոնց հետ համախորհուրդ՝ ընտրեցին եօթը հելլէնախօս պաշտօնեաներ, որոնք կոչուեցան առաքեալներու գործակիցներ, սարկաւազ անունի ներքեւ:

Այս սարկաւագներուն ընտրութիւնը տեղի ունեցաւ առաքեալներու և հաւատացեալներու միաձայն հաւանութեամբ: Առաքեալներ եթէ ուզէին կրնային իրենց ուզած մարդիկը պաշտօնի կանչել, հարցը հաւատացեալ ժողովուրդին առջև առանց ներկայացնելու, սակայն չըրին այդ և ըսին. «Չի վայելի մեզի Ասուծոյ խօսքը բոլոր եւ սեղաններու ծառայութիւն ընել, ուսի եղբար՛ք, ընտրեցէ՛ք ձեռք բարի վկայուած Հոգւով Սրբով եւ իմաստութեամբ լեցուած եօթը այր մարդիկ զորս ղեկնէ այս



գործին վրայ, եւ մեկն պարագլխին աղօթից եւ Աստուծոյ խօսքին պաշտօնով: Այս խօսքը հանդի երեւցաւ բոլոր բազմութեան առջեւ, եւ ընտրեցին, ...» (Գործք, 2. 3-5):

Սարկաւազներու պաշտօններէն մին էր չքաւարներուն խնամք տանիլ: Ասիկա ցոյց կուտայ թէ առաքելական դարու եկեղեցին ազգասիրուն հոգատարութիւնը պարտականութիւն համարած էր առաջին օրէն սկսելու: Նոյնպէս Պետրոս առաքելալին սարկաւազներու ընտրութեան հարցը հաւատացեալներուն ներկայացնելը կը մատնանշէ թէ առաջին դարու եկեղեցին կղերականական ըլլալէ հետեւ էր, և իր վարչական դարձերը կը կատարէր ժողովրդավարական (democracy) սկզբունքներու հիմանց վրայ, ինչ որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին ալ սկզբունքը եղած է սկիզբէն ի վեր:

Երբ ընտրութիւնը լինեցաւ, նորընտիր պաշտօնականներ գործի սկսելէ առաջ առաքելներուն բերուեցան, և ասոնք իրենց ձեռքերը դնելով անոնց վրայ աղօթեցին, և այսպէս կատարուեցաւ սարկաւազներու ձեռնադրութեան արարողութիւնը: Զեռք դնել սակայն նոր չէր հրեաներուն համար: Յետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած էր, քանզի Մովսէս իր ձեռքերը անոր վրայ դրած էր, ուրիշ խօսքով՝ ձեռնադրած էր զայն (Թուոց, ԻԷ. 18-23, Բ. Օր., ԼԷ. 9):

Սահմանոս ձեռնադրուած այս եօթը սարկաւազներուն ամենէն ազգեցիկն էր, այս իսկ պատճառաւ իր անունը ցանկին գլուխը դրուած է (Գործք, 2. 5): Սարկաւազներ քարոզչական ու աւետարանչական գործերով ալ կը զբաղէին: Փիլիպպոս՝ որ Սահմանոսի նման եօթը նախասարկաւազներէն մին էր, կը քարոզէր Սամարիայ մէջ (Գործք, Ը. 5), և եթովպացի ներքինիին դարձի գալու ինք պատճառ եղած էր (Գործք, Ը. 37-38): Հետեւաբար սարկաւազ ըլլալով հանդերձ աւետարանիչ (Գործք, ԻԱ. 8-9) ալ կը կոչուէր: Աւետարանիչ ոչ թէ այն իմաստով որ Աւետարան դրած է, այլ այն իմաստով որ Աւետարանը կը քարոզէր ամենուրեք: Իսկ Սահմանոս շատ աներ-

կիւղ քարոզելուն համար մարտիրոսացաւ կորճ ժամանակէն և եղաւ Քրիստոսի եկեղեցիին նախավկան:

Սահմանոս հելլենացած Հրեայ մըն էր որ յունարէն կը խօսէր ու շատ խիզախօրէն կը վիճարանէր Հրեաներուն հետ, ըլլալով ուսնալ, ազատախոհ, անկախ ու երիտասարդ քրիստոնեայ մը: Հրեաներ չէին ախորժիւր իրմէ և չքացնելու համար անոր ազգեցեալութիւնը կը հալածէին զայն, և օր մըն ալ իրենց ատեանին տաջեկերին զինքը, դատելու համար իբր հայհոյիչ և հերձուածող:

Սակայն Սահմանոս իր ազգու ու ցնցիչ ատենախօսութեամբ հրէից ատեանին առջև պատմականօրէն ցոյց տուաւ թէ Քրիստոնէութիւնը Մովսէսական կրօնին հասցուցած պտուղն էր, օրինաց և մարդարեութեանց լրումը: Ատենախօսութեան վերջին մասին մէջ յանդիմանեց նաեւ զիրենք իբրեւ խստապարանոցներ ու ճշմարտութիւնը արհամարհողներ: Հրեաներ չկրցան մարտել ասիկա և զինքը իսկոյն քարկոծեցին ու սպաննեցին:

Յանցաւորը քարկոծելով սպաննել հրէից մէջ սովորութիւն մըն էր՝ որ թոյլատրուած էր Մովսէսի օրէնքով (Բ. Օր., ԺԷ. 5-7): Երբ մարդ մը պիտի քարկոծուէր, հրեաները նախ անոր զօրուսը գինի կը խմցնէին որ շատ չզգայ մահուան սարսուռը, ապա վկանները կու գային և յանցաւորին ոտքերն ու ձեռքերը կապելով կը տանէին այնտեղ՝ ուր պիտի քարկոծուէր: Վկանները վկայութիւն տալէ վերջը իրենց հանդերձները կը հանէին և առաջին անգամ մեծ քար մը անոր սրտին վրայ իրենք կը նետէին, ապա միւսները կը սկսէին քարկոծել և կը սպաննէին զայն քարակոյտին տակ:

Սահմանոսի քարկոծութեան պարագային այս ձեռակերպութիւնները չկատարուեցան: Նոյնպէս հրէից ատեանին առջև անիկա մահուան դատապարտուելէ ետքը կառավարութեանէն այս վճիռը պէտք էր որ վաւերացուէր. ասիկա ալ տեղի չունեցաւ: Այլ անոր քարկոծուելը շատ անպարտաքով եղաւ և թէ ապօրէն: Սոքոս անուն հրեայ մը քարկոծողներուն

185-98



հանդերձներուն հոգ կը տանէր և կամակից էր անոր սպաննութեան (Գործք, է. 57-59):

Աւանդութեան մը համաձայն Գամաղիէի լսելով Ստեփանոսի քարկոծութեան պարագան, իր սիրելի աշակերտը՝ Սողոսը յանդիմանած է, անոր համար որ ինքը հրէից օրէնքը և անոր մանրամասնութիւնները իր մօտը սորված ըլլալով հանդերձ այդպիսի ապօրէն տրարքի մը կամակից եղած է. քարկոծողներուն հանդերձներուն վրայ հակադրութիւն կատարելով: Այս յանդիմանութիւնը Սողոսի խղճմանքը յուզած էր սաստկօրէն, և առաջնորդած էր զինքը Մովսիսականութիւնն ու Քրիստոնէութիւնը բողոքատելու իրարու հետ, և գիտակցելու երկրորդին ունեցած առակելութիւններուն և գերակշռութեան առաջինին վրայ:

Միւս կողմէն, Ստեփանոսի քրիստոնէութեան ճշմարտութիւնը քաջարար վկայելը, իր հակառակորդներուն համար աղօթելը և անոնց իրեն դէմ ըրած անարդարութիւնը ներելը Սողոսի մտքին վրայ շատ աւելի խորունկ ապաւորութիւններ ձգած էր և ապա Դամասկոսի ճամբուն վրայ իր դարձի գալէն հաք Պողոս անունի ներքեւ ինքն ալ եղաւ քրիստոնէական կրօնի մեծ ախոյեաններէն մին:

Օգոստինոս կ'ըսէ. «Պողոսին դարձի գալը Եկեղեցին կը պարսի Սեփականի աղօթքին»: Ժամանակ մը վերջը Պողոս առաքեալ ևս Ստեփանոսի նման իր կեանքը մարտիրոսութեամբ վերջացուց, ըլլալով ինքն ալ Քրիստոսի քաջ վկաներէն մէկը:

Քրիստոս կը վկայուի երեք կերպերով: Նախ՝ խօսով, որ քիչ աղղեցութիւն ունի: Երկրորդ՝ գործով, որ աւելի ապաւորիչ է: Երրորդ՝ աւիւնով, որ ամենէն աղղեցիկն է: Այս իսկ պատճառաւ Ստեփանոսի վկայութիւնը մեծ աղղեցութիւն ունեցաւ թէ՛ հաւատացեալներու և թէ՛ հրեայ հասարակութեան վրայ: Ստեփանոսի նման «Վկայք Քրիստոսի» կոչուելու արժանի քրիստոնեաներու հաւատքի դիւցազնութեամբ է որ Քրիստոսի Եկեղեցին աճած, այսքան զօրացած և ծաւալած է աշխարհի վրայ: Ըստ Տերտուլիանոս Հայ-

րապետի, «Մարտիրոսաց աւիւնը Եկեղեցւոյ սերմնն է»: Ստեփանոսի արիւնը իսկապէս սերմը եղաւ Եկեղեցիին, և Եկեղեցին աճեցաւ ու զօրացաւ, իսկ ինք կոչուեցաւ նախավկայ, ինչպէս Սրբունի Սանդակաւ կը կոչուի Քրիստոսի Եկեղեցիին նախավկայունէն:

Ըստ Օրմանեանի, «Ուրիշ Եկեղեցիներ իբր նախավկայունի կը հռչակեն Պողոս առաքեալի առակներ՝ Սրբունի Թեկոյ(\*) Լիկայոնացին, որ բուն մարտիրոս ալ չէ, այլ խոսովանող միայն, քանի որ քանգանքներ

(\*) Իկոնիոյ մէջ Թեկոյ անուն աղջիկ մը կար որ հարուստ ընտանիքի մը զաւակն էր: Երբ Պողոս առաքեալ իր առաքելական առաջին մեծ ճամբորդութեան ընթացքին (Գործք, ԺԴ. 1) Բառնաբասի հետ միասին Իկոնիոյ մէջ կը քարոզէր, այս աղջիկը իր տան պատուհանէն լսեց անոր քարոզութիւնը: Այդ տեսնելը Թեկոյ նշանուած էր Դամարիս անուն երիտասարդի մը հետ, բայց երբ լսեց Աւետարանի պատգամը, քրիստոնեայ դարձաւ և զատուելով իր նշանածէն, ինքզինքը նուիրեց Աւետարանի քարոզութեան:

Իր ընտանիքին և ազգականներուն կողմէ եղած բոլոր դիմումները ապարդիւն անցան, և ինք (մեր Սանդակաւ կոյսի նման) իր հաւատքին վրայ հաստատուն մնաց: Ասոր վրայ Պողոս առաքեալը ձեռնելով քաղաքէն վաճառեցին, իսկ Թեկոյը մահուան դատապարտեցին ողջ ողջ այրելու համար: Քանզի կը մերժէր Դամարիսի հետ ամուսնանալ և կ'ուրանար նաև իր հին հեթանոսական կրօնը:

Երբ մահուան վճիռը գործադրելու օրը եկաւ և կրակը վառեցին որ Թեկոյը այրեն, յանկարծ անձրև մը տեղաց և մարեց կրակը, և Թեկոյը փախչելով Անտիոք գնաց, Պողոս առաքեալին քով: Հոն հաւատացեալներու հետ կը շրջէր Կենաց Բանը քարոզելով: Հոս ալ հալածուեցաւ, բայց Թրիմիշա անուն աղղեցիկ տիկնոջ մը պաշտպանութիւնը վայելելով օղորտուեցաւ վերջապէս հալածանքէն ու մահէն:

Տերտուլիանոս Հայրապետի (Թ. Տ. 150-122) վկայութեան համաձայն, Թեկոյ Լիկայոնացիին այս աւանդութիւնը գրի առնուած է Երկրորդ դարու մէջ Փոքր Ասիոյ Եկեղեցիներու հովիւներէն մէկուն ձեռամբ:

Թեկոյ վկայունիին յիշատակը կը տօնուի ուրիշ հին Եկեղեցիներու կարգին՝ Հայց. Եկեղեցիին մէջ ևս, իբր առաքելական դարու սուրբերէն մին (Տե՛ս Օրմանեանի Վայոց Եկեղեցին, էջ 217):



անվնաս ազատելով՝ լրացեալ տարիքի մեջ խաղաղութեամբ վախճանած է: Ըստ այսմ նախազգացումի լինելու փառքը կրնանք աւելի իրաւամբ մեր Սանգուլիսին սեփականացնել» (Ազգապատում, Ա. Հատոր, էջ 36):

Ս. Ստեփանոս նախազգացումի կեանքը լի է քրիստոնէական առաքինութիւններով և ներշնչող յատկանիշերով. շատ ի դէպ է յիշել հոս գէթ անոնցմէ մի քանին: —

Ա. — Ազատախոն եր: Ունէր սուր իմացականութիւն և խօսելու մասնաւոր ընդունակութիւն, կը խորհէր առանց կաշկանդումի և կ'արտայայտուէր ազատ ու անկախ: Եթէ Ստեփանոս վախկոտ մէկը ըլլար ու կեղծէր հրէից տառանին առջև, հաւանաբար տարածած մահով չէր վերջանար իր կեանքը, բայց քրիստոնէութեան գործը ետ կը մնար: Ինքը իր ազատ ու անկախ արտայայտութեամբը թէև քարկոծուեցաւ ու սպաննուեցաւ, սակայն իր արիւնը Եկեղեցին աճեցնող սերմը եղաւ, որմէ նորանոր ուրիշ Ստեփանոսներ յառաջ եկան հետագային:

Ազատախոնութիւն կը նշանակէ լայնախոնութիւն, խորհելու անկախութիւն, արտայայտուելու քաջութիւն և ճշմարտութիւնը վկայելու տրամադրութիւն, առանց կեղծելու ու առանց շողոքորթելու: Անձնասէր մարդիկ սակայն ճշմարտութիւնը վկայելէ կը վախճան, հետեալաբար կը կեղծեն, կը ստեն ու կը շողոքորթեն որպէսզի իրենց անձին կամ շահուն վնաս մը չհասնի: Յեղեղուկ նկարագրի տէր մարդիկ ցանկապատին վրայ կը կենան միշտ, իրենց շահուն համար այս և կամ այն կողմը կը ցատկեն և գեանառիւծի պէս տեղւոյն համեմատ գոյն մը կ'առնեն: Այս տեսակ մարդիկ չեն կրնար մարդկութեան վերելքին և ոչ ալ քրիստոնէութեան արդար գաւառին նպաստ մը բերել:

Խորհելու և խօսելու ազատութիւնը մարդոց արդար իրաւունքն է: Հին տառն սակայն մարդիկ չէին կրնար յարգել ուրիշին ազատախոնութիւնը և զայն կը լռեցնէին սպառնալիքով և մահուամբ: Քրիստոսի իրական վկաները Ստեփանոսի

նման մարտիրոսացան բայց յետ կոչում չըրին: Ահա՛ այս իսկ պատճառաւ քրիստոնէութիւնը կրցաւ տարածուիլ ամէն տեղ, խոնարհեցնելով իր առջև հեթանոս երկիրներու կրօնքները:

Ամերիկացի նշանաւոր քարոզիչ Պիշըր կ'ըսէ. «Խօսիլ ազատութիւնը ժողովուրդին վրայ այն ազդեցութիւնը ունի՝ ինչ որ հովր կ'ունենայ ովկիանոսի երկիրներուն համար, օրինակէն հիւանդութեան մանրեկները մեկդի Բեռլինը եւ առողջաբար մթնոլորտ մը ստեղծելով: Ուր որ խօսիլ ազատութիւնը արգիլուած է՝ հոն զարեանդութիւն երեւան կու գայ եւ մահը կը փութայ իսկոյն անոր ետեւէն»: Ուրիշներուն անձը և զգացումը յարգել և անոնց խօսքի ազատութեան հանդուրժել՝ քրիստոնէական աւելի բարձր քաղաքակրթութեան հետեանքն է:

Բ. — Հաւատով լի եր: Հաւատքը հոգեւոր իրականութիւններու վստահելիութեան մասին ներքին համոզում է: Ստեփանոսի համար հաւատքը կը նշանակէր այսպէս ստուգութիւն, վստահութիւն և ճշմարտութեան հանդէպ մտքի համոզում: Ըստ Թովմաս կըթրիի, «Հաւատքը ողնայարն է ընկերական կեանքի. վերցուր զայն մարդոց մէջէն, անա՛ ընկերութիւնը կը կործանի»: Ստեփանոս ճշմարիտ հաւատքի տէր մէկը ըլլալուն համար էր որ կրցաւ դիմադրել հրէից հալածանքներուն ու նախատինքներուն, և զոհեց նաև իր կեանքը սիրայօժար, որ կարենայ հաստատուն մնալ իր քրիստոնէական սկզբունքներուն վրայ: Ստեփանոս տակաւին չձեռնադրուած՝ վկայուած էր արդէն թէ հաւատքով լի մէկն է (Գործք, Զ. 5): Իր այս հաւատքի դիւցազնութեամբ քրիստոնէական կրօնի ներքին անպարտելի ուժը ցուցադրեց թէ՛ քրիստոնեայ աշխարհին և թէ՛ մարդկութեան:

Ստեփանոս հաւատքով լի ըլլալուն համար քաջ և անվնէր էր և հոգեւոր իրականութիւններու հանդէպ պայծառ տեսիլ ունէր և խորունկ համոզում: Իր գաղափարները վճիռ և արտայայտութիւնները յստակ էին: Աստուած իրականութիւն մըն էր իրեն համար, իրերը Աստուծոյ ակնոցովը կը դիտէր և չէր վախնար որեւէ բանէ:



Քրիստոնէութիւնը կրօնք մըն է որ չ'ապրուիր առանց կենդանի հաւատքի: Եթէ մենք կը խորհինք թէ մեր անուանական հաւատքով քրիստոնեաներ ենք, կը սխալինք չարաչար: Իրական քրիստոնեայ կոչուելու համար պէտք է մեր հաւատքը ըլլայ հաստատուն, անպարտելի ու անսասան: Ծաքսպին կ'ըսէ. «Անկաւելի է հերոսանալ որեւէ բանի մէջ, առանց հերոսանալու հաւատով»: Ստեփանոս հերոսացաւ իր անսասան հաւատքին պատճառաւ: Աշխարհ պէտք ունի այսօր ալ Ստեփանոսի նման իրական հաւատացեալներու, անոնցմով է որ Քրիստոսի Եկեղեցին կրնայ կանգուն մնալ, զարգանալ ու աճիլ աշխարհի վրայ:

Գ. — Համարձակասու եր: Համարձակասութիւն կը նշանակէ ճշմարտութիւնը խօսելու բարոյական քաջութիւն, ազատ ու անվախ արտայայտութիւն, առանց երկիւղի ու նկատումի իրողութիւնները եղածին պէս նկարագրելու բարի արամագրութիւն: Ըստ Պաքոնի, «Համարձակասութիւնը կոյր է, բանգի չի տեսներ վսանգն ու դժուարութիւնները»: Բայց համարձակասութիւնը ճշմարտութիւնը չխեղաթիւրելու համար վտանգը նկատի չ'առնելու: Ստեփանոս նկատի չ'առաւ որեւէ վտանգ և հերոսացաւ իր համարձակասութեամբը:

Հին Ուստի մէջ Եղիա մարգարէն ալ համարձակասութիւն էր: Իր օրով՝ Յեղարելի թելադրութեամբ, Աքաբը նախաձեռնեց այգին գրաւած էր: Մարդ մը չկար որ թագաւորին ցոյց տար իր ըրած անարդարութիւնը, բացի Եղիայէն, որ քաջաբար Աքաբը թագաւորին քովը գնաց և խօսեցաւ անոր այս անիրաւութեան մասին և անոր հետեանքներուն նկատմամբ, առանց նկատի առնելու որեւէ վտանգ (Գ. Թագ., ԻԱ. 17-24):

Յովհաննէս Մկրտիչ ևս համարձակասութիւն էր Եղիայի և Ստեփանոսի նման, առանց նկատումի ու կաշկանդումի: Երբ Հերովդէս իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ հետ ապրէին կեանք մը կը վարէր, Յովհաննէս քաջաբար և համարձակօրէն յանդիմանեց զինքը այս սխալ արարքին համար, հոգ

չէ թէ իր այս արարքով ապրելու պատահութեանէն զրկուեցաւ:

Կեանքի մը արժէքը տարիներու երկարութեամբ չի չափուիր, այլ անոր արդիւնաւորութեամբը: Մթաւաստող ինքնահարկը վաթսուն ինը տարի ապրեցաւ, բայց յիշատակութեան արժանի բան մը չթողուց իր ետին: Իսկ Յովհաննէս Մկրտիչ և Ստեփանոս նախաձեռնեցին թէ և քիչ ապրեցան այս աշխարհի վրայ, սակայն իրենց հետը թողած բարի ապաւորութիւնները թարմ են միշտ քրիստոնեաներու մտքին մէջ: Մեզան բայց կը խօսին տակաւին մեզի իբրեւ ճշմարտութեան մեծ ախոյեաններ:

Դ. — Ասուծոյ Ս. Հոգիին շնորհներովը զարգարուած եր: Ստեփանոս ոչ միայն հաւատքով՝ այլ Ս. Հոգիով ալ լի քրիստոնեայ մըն էր (Գործք, 2. 5): Հաւատքը զինքը առաջնորդած էր Ս. Հոգիով ալ լեցուած կեանք մը ապրելու: Տակաւին ձեռնադրութեամբ Ս. Հոգիին երկնային շնորհներուն շարժանացած՝ արդէն զարգարուած էր անոնցմով: Հաւանական է Պենտեկոստէի առթիւ վերնատունը գտնուող 120 հոգիներէն մէկն ալ ինքն էր, որ արժանացած է այդ առիթով Ս. Հոգիի օրհնութիւններուն:

Յիսուս մեր մոլորակին վրայ ապրած ատեն ինք կը կառավարէր Եկեղեցին, բայց երկինք համբաւնալէն հետք՝ իր Ս. Հոգին զրկեց և սակաւ եղաւ Եկեղեցիին շարժուն ոյժը: Առանց Ս. Հոգիի՝ Եկեղեցին անզօր է, կը նմանի թռչունի մը՝ որուն թևերը փեղատուած են և ինքնաշարժի մը՝ որուն իւզը հատած է: Առանց թևի՝ թռչուն մը չի կրնար թռիլ, առանց իւղի՝ ինքնաշարժ մը անկարող է շարժելու, նմանապէս Եկեղեցի մը եթէ Ստեփանոսի նման հաւատքով և Ս. Հոգիով լի անդամներ չունի իր մէջը՝ չի կրնար շարժուն ու յեղաշրջող ոյժ մը ըլլալ մարդկային ընկերութեան կեանքին մէջ:

Ինչո՞ւ առաքելական դարու մէջ Քրիստոսի Եկեղեցին յեղաշրջող մեծ ոյժ մըն էր՝ որ ազգերն ու երկիրները յեղաշրջեց և քաղաքակրթութեան պատմութեան մէջ



նոր էջ մը բացաւ, իսկ այսօր զուրկ է անկէ: Որովհետեւ Ստեփանոսի, Պողոսի և այլ առաքեալներու նման Ս. Հոգիով լի անդամներ ունէր, ինչ որ այժմ չունի և կամ քիչ ունի:

Այլ բառերով, եկեղեցիի մը յաջողութեան դադանիքը Աստուծոյ Ս. Հոգին է: Ինչպէս եկեղեցական պատմութիւնը ցոյց կուտայ, երբ Ս. Հոգին իր շնորհներովն ու օրհնութիւններովը եկեղեցիին հետ եղած է, եկեղեցին միշտ աճած ու զարգացած է, և երբ քաշուած է անկէ, եկեղեցին տկարանալով սկսած է քաշկռակ իր գոյութիւնը:

Հարստութիւնը, դաստիարակութիւնը, զեղարուեստը և աշխարհիկ այլ միջոցներ կրնան եկեղեցւոյ յառաջդիմութեան նպաստել, սակայն եկեղեցիի մը իրական ու ներքին ուժը կը կազմեն միայն Ստեփանոսի նման Ս. Հոգիին օծումը ունեցող անդամներն ու պաշտօնականները: Եկեղեցի մը չի կրնար իրագործել իր սրբազան կոչումը երբ աշխարհիկ հաշիւներով կը կառավարուի և երբ իր անդամները կը հրաժարին Աստուծոյ Ս. Հոգիին շնորհներովը օժտուելու իրենց առանձնաշնորհումներէն: Ամերիկացի մեծ հեղինակ Էմըրսոն կ'ըսէ. «Մեծ են այն մարդիկ որոնք հոգեկան ուժը Ֆիզիքական որեւէ ոյժէ աւելի գերադաս կը համարեն»: Քրիստոնէութիւնը հոգեկան այս ուժի կրօնքն է: Այս ուժէ զուրկ եկեղեցի մը չի կրնար յեղաշրջել անհատներուն և ազգերուն կեանքը:

Յրէզնօ, Գալիմ.

\*\*\*

Լաւ է քիչ բայց լաւ ապրիլ քան թէ երկար կեանք ունենալ և անօգուտ ըլլալ մարդկութեան: Ստեփանոս, Յովհաննէս Մկրտիչի նման քիչ ապրեցաւ, բայց մեծ ու խորունկ ապաւորութիւն ձգեց իր ետին:

Ստեփանոս իր պաշտպանողական ուղերձին մէջ իր մասին խօսելէ աւելի ճշմարտութեան նկատմամբ խօսեցաւ, և իր անձը փառաւորելէ աւելի Յիսուսը փառաւորեց, որուն համար վկայ մըն էր ինք:

Ճշմարտութիւնը կը վերաւորէ բայց կը բուժէ: Բարի ձեռնարկներ յաջողած են ոչ թէ ճշմարտութիւնը ծածկելով, այլ խօսելով: Եթէ մարդիկ մեղք գործելէ չեն ամչնար, ինչո՞ւ ճշմարտախօս անձինք ամչնան ճշմարտութիւնը յայտարարելու և անոր վկայ ըլլալու:

Հրեաներ Ստեփանոսը քարկոծելով չկրցան քրիստոնէութեան շարժումը կասեցնել, ընդհակառակը անոր տարածման պատճառ դարձան: Գոյնաւորութեան հակառակողը անոր բան մը չի կրնար ընել, բայց կը փնտսուի անկէ վերջ ի վերջոյ: Հին առակախօսը կ'ըսէ. «ձեմարսուրիւնը ծախու առ ու զայն մի ծախեր» (Առակք, ԻԳ. 23): Իսկ ծէյմօ կիրալա կը յայտարարէ. «Մարդիկ կը մեռնին, սակայն երեմարսուրիւնը կը մնայ յաւիտեան»:

Ճշմարտութիւնը կը նմանի կրանիթէ քարին, որուն զարնուողը կը փշրուի, բայց զայն չի կրնար փշրել: Անիկա կը մնայ անսասան:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ







Առունը կուլայ պատահանիս տակ,  
 Զիթենիները կը դողան ցուրտէն,  
 Խինգի դուռները ամէն կողմէ փակ,  
 Անձրեւ ու մրշուց, երկինք՝ քախծադէմ:

Սիրս իմ, մի սրգար, ա՛խ սիրս իմ, տոկա՛,  
 Վաղը Գարունը նորէն պիտի գայ,  
 Լեռները նորէն մեզ պիտի կանչեն,  
 Դաւսերը նորէն պիտի կանաչեն,  
 Պիտի մանկանաս, սիրս իմ, դուն նորէն,  
 Ըջեղ ծոցս առած մեղմիկ օրօրեմ:

Պաշտանքի թեով լեռները նախրենք:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



### ՔԱՌԵԱԿ

Ի՞նչ տեսար բացի սուս ու սրխալ,  
 Ա՛լ ինչո՞ւ յամենալ ու մըխալ,  
 Բոցի մ' պէս բըռընկիր ու անցիր,  
 Տեսնողը գէթ փայլիդ նախանձի:

Մ. Մ.



## ԵՓՐԱՐԱՅ...

«Պարսէ՛զ փակեալ, բոյր իմ հարսն,  
պարսէ՛զ փակեալ եւ աղբիւր կնքեալ»:

(ԵՐԳ ԵՐԳՈՑ)

Շառէ Վ.րդ. Աճէմեանին, 1962 ին

Յուդայի լերկ սարակներու ծոցին մէջ  
Եդեմ մըն է այս անկիւնը, վարսագեղ  
Բարսիներու երգով օրուն՝ ձորամէ՛ջ,  
Հոգիներու վըրայ բացուած՝ մե՛ծ հեղեղ

Մը ժըպիսի ու խնդութեան երկնացօղ,  
Որուն տակ ես ամէն առտու հաւատսիս  
Կը յարգարեմ յոյսի սեղան, բարձրացող  
Արեգակին՝ եթերաբաղձ իմ հոգիս:

Ակունք մը յորդ, մաքրակայլակ կը բղխի  
Անոր սրէն, ու կ'երթայ վար, հոգածու՝  
Արբուցանել ծառ ու ծաղիկ, եւ ուղիսի  
Տակ ոռոգել ամէն ակօս եւ ածու:

Հոծ թուփերու տակ թալթըլայ, սողոսկի  
Նուագի մը ֆաղցրութեամբ, եւ իր համբուն  
Ցանցընելով յուրթի կանաչ ու ոսկի,  
Կ'երթայ կորսուիլ մութ ալեւրուն մէջ թափուն

Սողոմոնի աւազանին, ուր այդ հին  
Ցոփակեացը ու նաե՛ւ մե՛ծ Խմասուն,  
Կը բանար յորդ ծորակն «Կնքեալ աղբիւր»ին,  
Ի վայելումն իր անհամար հարճերուն:

Եփրաթա՛յ, դո՛ւ երկիր Յուդայ, երկնի  
Կապոյտ վիզէն առկախ պարսէ՛զ պողալից,  
Աղբիւրներուդ ակունքներէն նոր հոգի  
Մը սիրախայտ՝ մարմին առած կուգայ ինձ,

Հակիլ սրսիս ջինջ աղբիւրին զլզլուն,  
Նման լերան կատարներուն թափառկոտ  
Հէ՛ք եղնիկին, որ նեւահար՝ օրն ի բուն  
Կ'ուզէ հանգչիլ առուններու ակին մօտ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Բեթղեհեմ, 10 Յունիս 1909)



## Ա Ն Ց Ե Ա Ն Ս

Կանաչ օրերուս  
Գարունն էիր դուն,  
Պայծառ ու աղբուր.  
Ի զո՞ւր կը յիշեմ  
Շրջանն այդ հիմա,  
Եւ կաօրսն անոր  
Մըսիս մէջ կուլայ:

Դալար անցեալիս  
Սիրահարն եմ ես,  
Բայց կը զգամ, աւա՛ղ,  
Որ չէ՛ կարելի  
Վերագարձն անոր:

Բայց ինչո՞ւ կրկին  
Դէպ՝ հոն կը թռչին  
Կաօրսներս վառ,  
Յուներս բոլոր:

Անցեալըս կանաչ  
Աւստարն մ'էր զուարթ,  
Գեղ ու երփներանգ,

Նայրուպի, Քենիա  
Արեւելեան Աֆրիկէ

Աչներս՝ սիրաւառ  
Ինչ որ տեսնէին  
Ուրախութիւն էր:

### II

Այլ սակայն հիմա  
Ուր որ կը նայիմ  
Մօրք է ու խաւար:

Ըսէ՛, ո՛վ Աստուած,  
Աղբուր օրերուս  
Դիւեհ՞րն է արդեօք  
Որ տոճու չ'ըլլար:

Մասդաւ օրերուս  
Արեւոյսն էիր  
Պայծառ ու շեղ.  
Ի զո՞ւր կը յիշեմ  
Շրջանն այդ հիմա,  
Եւ կաօրսն անոր  
Մըսիս մէջ կուլայ:

ՅՈՎԱԼՓ ԹՐԳՂՐԵԱՆ





## ԳՐԱԿԱՆ

## ԱՄԱՆՈՐԻ ԽՈՂԵՐ

Ամանորի սա գիշերուան մեծախորհուրդ ու մեծիմաստ լռութիւնը բզկտող զանգակներուն յուսապարգէս ու կորովաբաշխ զօղանջիւնը ժամեր առաջ գիտէի թէ մարդկային իմաստութեան անսահման տարածութիւններուն այժմէն անկէ բաւիղները մինչեւ յառաջանալու ակտուար յանդգնութեամբ տառապող իմ միաքը վերստին պիտի մղէր մեծ ու խորունկ՝ ինչպէս նոյնքան հիւանդ ու ցնորական խոհերու:

Հին Տարին Նոր Տարիին օղակող սա բոպէն, հինը նորին ագուցող սա կամաւը, այն պահը՝ ուր մեր յոյսին ջերմաշափը կը հասնի իր բարձրակէտին, ուր մէկ կողմէն նոր ու առինքնող երազներ իրենց հմայիչ քաղցրութեամբ կը բազմապատկեն մեր սէրը դէպի կեանքը, ու

միւս կողմէն՝ փախչող տարին, դառն ու հեզնախառն ժպիտը դէմքին, իր հետը անվերադարձ կը տանի 365 օրերու վարդազոյն փունջ մը՝ այս գեղահրաշ մոլորակին վրայ մեզի սահմանուած քանի մը տասնեակ հազար օրերէն, մեզ զգացնել տալով ժամանակի անհուն տարածքէն մեզի տրուած այդ քիչը լուսագոյնաւոր դիւնաւորելու անհրաժեշտութիւնը, ժամանակ կոչուած անտարազելի իսկութեան նուազագոյն կատարակն իսկ մեր յաւիտենական փրկութեան ի խնդիր ծառայեցնելու տարաշխարհիկ իմաստութիւնը: Այս ժամը, ուր օնցեալ ու ապագայ եզրերը կը հազնին բուն նշանակութիւնը իրենց, հակառակ իւրաքանչիւրին տարիի մը սահմաններէն ներս կաղապարուելուն, ու թերեւս այդ իսկ պատճառաւ: Այս պահը, միա՛կը տարուան բոլոր պահերէն, ուր բոլոր մարդիկ հաշտուած ըլլալ կը թուին ժամանակին հետ (օ՛, մարդուն յաւիտենական անհաշտութիւնը ժամանակին հետ, զանգատը՝ անոր արագ թաւալումէն կամ դանդաղ գնացքէն): Այն պահը՝ որ պիտի ուզենք երկարէ՛ր ու

## ԵՔԷ ՁԻՍ ՕՐ ՄԷ ԼՔԷՔ...

Եթէ զիս օր մը լիք, ո՛վ երազներս իմ վերջին,  
Կամ պարսլըիմ դուք յանկարծ ձեր հմայքէն գերհօր,  
Ա՛լ չգտնեմ պի՛ս՝ կեանքին ինձ կապող յոյս մը չնչին,  
Ու չապասեմ օրերէն բան մը աղէկ, բան մը նոր:

Ձեզ սրիս մէջ գործով փայփայեցի շարունակ,  
Դուք զիս խաղցր, անապակ, մոլեխիմդին դէմ կեանքին,  
Եւ օրերուն իմ տգոյն՝ ապրումներով ձեր ուժգին  
Իմաստ մը նոր դուք տուիք, տուիք իմաստը միակ:

Իսկ լիելու չափ զիս թէ ըլլաք անգուք, վասափրս,  
Ո՛վ երազներս, ինձ իբրեւ վերջին շնորհք, մեկնեցէ՛ք  
Ձեզ պէս երազ մը հօր նարեկէ ետք սրիս հէք:

Ձի խոցերը՝ մեզ տրուած հարուածներէն կեանքին բիրս  
Լոկ երազն է որ կրնայ բուժել բեռովն իր կախարդ,  
Ահա ք՛ինչու երազին միջ կը փարի ամէն մարդ:

Գ. ՃԱՐՏԱՐ



երկարէ՛ր, անվերջանալի ըլլալու աստիճան։ Ուր, ակնթարթի մը համար գոնէ, անկարեկիր ժամանակը իր ձեռքէն կը նետէ մեր կեանքին օրերը սղոցող ա՛լ հինցած սղոցը, զոյն նորով մը փոխարինելու համար։ Բայէն՝ ուր մենք ամենէն աւելի կը մանկանանք հագուով ու երջանիկ միամտութեամբ մը կը պարտուինք ժամանակէն։ Ու կը դիմաւորենք Նոր Տարին նոյն զգացումներով՝ որով մանուկ մը պիտի դիմաւորէր կողանդ պապան, նուէրներու պարկը շալակին, վատա՛նանոր անթիւ ու տենչալի պարզեներէն իրեն տրուելիք բաժինին։ Բայէն՝ ուր պատրաստ ենք խիզախելու ապագայի ոսկի սեմէն ներս, անկէ քաղելու համար ամէն բարիք ու գեղեցկութիւն։ Ուր պիտի ուզենք բանալ ու ետե ետեի թերթատել փակ գիրքը եկող տարւոյն, անոր իւրաքանչիւր էջին վրայ կեանքի լուսեղէն քերթուածէն առկեր կարգալու երջանիկ լաւատեսութեամբ։ Ուր մեր խանդավառութեան հետ ու չափ մեր հետաքրքրութիւնն ալ կը ստանայ նոր ու արտասովոր թափ մը, գալիքին անորոշութենէն տագնապելու կամ տարիներուն բերելիք բարիքները այժմէն իր սեփականութիւնը ընելու վտառառ ըզձանքովն ու արտակարգ միամտութեամբը սպառազէն։

Ու կ'երեւակայեմ, մտքի անհուն սաւառնումով, գիշերը յաջորդ Ամանորին, ուր մենք քայլ մը աւելի մօտեցած պիտի ըլլանք մոհուան, եթէ մինչ այդ անոր համայնակուլ երախին մէջ ինկած, անոր մեղի համար լարած անհաշուելի որսգայթներէն բռնուած չըլլալու բախտը վիճակուի մեզի, ուր այս րոպէին կայթատներ սարքող քիչ-չատ երջանիկ համարուած ընտանիքներէն քանինն՝ պիտի զգան իրենց հոգիներուն վրայ ճնշող թաթը սուգին, ուր ներկայիս աշխարհի «տաքն ու պողո՞ տակաւին չճաշակած անփորձ ու անմեղ մանուկներ պիտի ցաւով հոստատած ըլլան Չարին ու Վիշաին գոյութիւնը, անխուսափելի ներկայութիւնը կեանքի կոշուած այս առեղծուածին մէջ, ուր չափահասներ, այս պահուն երանելի անհոգութեամբ մը

ծուարած տակաւին կանաչագորգ իրենց կեանքի ծառին ներքեւ, ամսասանքով պիտի նշմարեն սո՞գունիլն ու դողդողը այդ ծառի տերեւներուն, մօտալուստ ձմրան կարապետ հիւանդ աշնան գեղին համբոյրէն։ Ու աւելի խենթ սիրով մը պիտի փորին կեանքին, որ պիտի սկսի երերալ իրենց ստաքերուն ներքեւ, ու ստակումով պիտի տեսնեն մա՛հը իրենցմէ բաժնող խրամատին լեցուիլը՝ օրերու պատկառելի դեզով։ Եւ տակաւին ուրիշներ, որոնք պիտի գիտակցին անգօրութեանը իրենց հոգիները արբշիւ ու կենսախայտ պահուլու աշխարհիկ հեշտանքներու և աժան վաշեքներու մատուցած խորդախառած գինիով։ Ու պիտի փոխած ըլլան ուղղութիւնը իրենց կեանքի նաւուն, կա՛մ իրենց հոգիները ընկղմելով յուսահատութեան անյատակ անդունդին խորը և կա՛մ բանալով զանոնք Գերագոյն Յոյսին, անկէ ճառագայթող աննուագ ու անսպառ լոյսէն առնելով կեանքի հորսածներուն արիւթեամբ դիմադրելու և կեանքի գոյամարտէն յաղթական ու ճակատաբաց դուրս գալու անհատնում կորովը։

Ու գիշերը կը քալէ ժամ մըն է արդէն որ մտած ենք Նոր Տարւոյ սեմէն ներս, ու գիտեմ թէ բոլորս ալ ինքնակոչ հիւր մը ճամբած ըլլալու գոհունակութեամբ է որ ճամբեցինք հին տարին, ու վստահ եմ թէ միշտ նորին ու նորութեան սիրահար մարդու հոգին այս Ամանորը ևս դիմաւորեց ցարդ հառաւ ապրած ունեւոր եղբօր մը առաջին հանդիպումին առիթով մեր իրեն մատուցած ջերմ ու սրտազին սղջոյններով, անոր բարիքներէն նպաստաւորուելու, անոր բերած նուէրներէն բաժին մը ունենալու պայծառ ակնկալութեամբ։

Օ՛, հրաշալի ու հրաշագործ զօրութիւնը Յոյսին, որ ա՛յնքան բուռն կերպով կը յայտնուի Ամանորի գիշերներուն, կեանքի ամենէն բիրտ հորսածներէն խոցոտուած հոգիներուն իսկ մէջ, կեանքի սէրը արթնցնելու կեանքէն միայն փուշ ու տատասկ ընդունած խղճալի մարդերու սրտերուն մէջ։

ԳԵՈՐԳ Ո՛. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

1/1/64



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԼՍՀՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ 1635-ԻՆ ԳՐՈՒԱԾ ՈՍԿԵ- ՓՈՐԻԿ (ՀԱՒԱՔԱԾՈՅ) ՄԸ

**Կազմ.** — Հին արևելեան տախտակեայ կա-  
շեպատ, իրան ննչուած դարդերով: — **Մեծու-  
րիւն.** —  $14 \times 10$ : — **Նիւթ.** — Հաստ ողորկուած  
թուղթ: — **Թուղթ.** —  $244 + 1 = 245$ : — **Գու-  
րիւն.** — միասիւն, գրութիւնս առնուած է կար-  
միր սեկեզոյն և կապոյտ շրջանակի մը մէջ: —  
**Դատարկք.** թղ. 1, 234ր, 236, 237ա, 244: —  
**Հանգամանք.** — Բաւական գահացուցիչ, քիչ մը  
կարբ թուլցած և քանի մը պրակներ կազմէն  
խախտած, կարգ մը թերթեր խնայուած թիւն տե-  
սած և աղտոտած: — **Խորան.** — թղ. 2ա: —  
**Լուսանցազարդ.** — թղ. 2ա: — **Խորագիրք.** —  
կարմրատառ: — **Գրիչ.** — Պետրոս քահանայ: —  
**Ցէր.** — Հայրապետ: — **Տեղի.** — Ի յերկիրս  
Հեղկաց, ի մայրաքաղաքս Լահու: — **ժամա-  
նակ.** — Թ27 (= 1435): — **Յիշատակագրութիւնք.**  
— թղ. 62բ, 73բ, 91ա և 95բ, 106ա, 2(3բ, 232ա,  
231, 235բ: — **Տեղեկութիւնք.** — Ձեռագրի տալժմու  
տէրն է Զուգայարեակ Պր. Գրիգոր Աղազարեան:

Մատենան է ՈՍԿԵՓՈՐԻԿ (հաւաքածոյ),  
ուր կան: —

1. Թղ. 2ա, (Անվերնագիր). «Յանեղ  
և յանպարագիր լուսոյն կնքեալ լուս հա-  
մասութիւն կրկին աղղումար մսեմական գի-  
տութեամբ և կենդանախարոյկ մօքրու-  
թեամբ հոգոյն՝ իբրև գական գտուելն հան ի  
գմրեթալ յարգ խորանիս եկեղեցոյ» ևն:

2. Թղ. 17բ, «Յովհաննէս Վարդապե-  
տի Եզնկացոյ տապեալ վասն յիշողաց ինն-  
երորդ կանոն գրեմք վասն անեղ և մեծ,  
և գառն, և զարհուրելի մեղացն, որ ասի  
յիշողք գեղջուկ բառով» ևն:

3. Թղ. 21ա, «Նորին Յոհան Վարդա-  
պետի վասն ատելութեան: Տասներորդ կա-  
նոն գրեմք, որ չէ պարտք քրիստոնէից  
զխրատ ատեն: Զի այդ՝ զոր Աստուած Մով-  
սէս ի մորինաքն տաաց թէ մի սպանա-  
նիւր» ևն:

4. Թղ. 24բ, «Նորին վասն սիրոյ: Եւ  
է առաջին պատուիրանս, էրն Ի համար  
կանոնաց ԺԱ զլուխ զոր հին աւրէնք Մով-

սէսի և այս, որ է Աւետարանն Քրիստոսի»  
ևն:

5. Թղ. 26Աբ, «Նորին վասն աղաւ-  
թից: Պարտք է քրիստոնէին աղաւթք առ-  
նել, Գ աւուրն, ի լուսանալ աւուրն յոր-  
ժամ յանէ ի քնոյ և ի ժամ հացին» ևն:

6. Թղ. 29բ, (Նորին) «Վասն խոստո-  
վանութեան: Գրեմք վասն խոստովանու-  
թեան՝ որ մեղ յԱստուծոյ մեծ պարի պար-  
ձնէ և հոգոց կենդանութիւն և բժշկու-  
թիւն» ևն:

7. Թղ. 31բ, «Նորին Յոհաննէս Վար-  
դապետի վասն հաղորդութեան: Պարտք է  
քրիստոնէին որ ամէն Խ աւուր մի հետ հա-  
ղորդի. Գ օր ի յետ կենայ յանկողնոյ և  
հաղորդի» ևն:

8. Թղ. 32բ, (Նորին) «Վասն ողորմու-  
թեան: Ողորմութիւն արարէք աղքատաց  
և կարաւոնից. զի ողորմածացն է ար-  
քայութիւն յերկնից» ևն:

9. Թղ. 33ա, «Նորին վասն պահոց  
խրատ: Պահքն սուրբ և անարատ, պարտ  
է պահել քրիստոնէից, զի որք սրբութեամբ  
պահեցին՝ արդարացան, և որք ոչ պահե-  
ցին՝ կորեան» ևն:

10. Թղ. 34բ, «Խրատ նորին Յոհաննէս  
Վարդապետի վասն հաղորդութեան: Ար-  
եւմտն քրիստոսի փրկեալ եղբայրք ի  
Քրիստոս, վասն զի պարտ է քրիստոնէին  
խոստովանելով և ապաշխարելով լուսնալ  
զանձն ի մեղաց և ապա հաղորդել մարմնոյ  
և արեան Քրիստոսի» ևն:

11. Թղ. 41բ, «Վասն Հաղորդութեան  
կարճ և պիտանի: Լուարուք Քրիստոսի  
Աստուծոյ փրկեալ ժողովուրդք, զի որպէս  
Քրիստոս ճշմարիտ Աստուած է, ի Քրիս-  
տոսէ այս ուսեալ քրիստոնեայքս զսուրբ  
հաց» ևն:

12. Թղ. 43ա, «Վարդան Վարդապետի  
աղօթք և վասն հաղորդութեան: Ով ամեն-  
աւրնեալ հայր սուրբ մեղա յերնիս և յա-  
ռօջի քո, բարեխաւսութեամբ չարչարա-  
նաց և արեան որդւոյ քո» ևն:

13. Թղ. 44ա, «Նորին Վարդան Վար-  
դապետի: Աւրհնեցին և ելին ի լեւան ձի-  
թենեաց, Քրիստոս փառաց թափաւորն ե-  
լից և կատարեաց զհինն և տիրեաց զնորս  
և ահա գահացան» ևն:



14. Թղ. 45, «Նորին Վարդան Վարդապետի: Աստուած իմ Յիսուս Քրիստոս կառավար և զարապետ երկնից, զոհացուցիչ և հանգիստ ամենայն եղելոց, Հաւր և փառակից սուրբ Հոգւոյն» են:

15. Թղ. 49ր, «Տեսիլ սրբոյն Արամասի Աղեհանգրու հայրապետի, զոր ետես ի սուրբ խորհուրդն եկեղեցւոյն Աստուծոյ: Ամենեցունցն Աստուած սքանչելի տեսիլ էրեւցոյց մարգարէիցն և առաքելոցն և մարտիրոսացն նոյնպէս և ինձ անարժանիս Արամասի, սքանչելակերպ, ևս առաւելացոյց, որ ահագին է պատմութեամբ և զարմանալի յոյժ, որ ևս իսկ սոսկամ և զարհուրիմ, առ ի բացայայտել ձեզ, զորեցոյց ինձ բարձրեալն: Արդ իբրեւ կայի ևս ի ժամապաշտման պատարագին ի սուրբ եկեղեցին Աստուծոյ և տարածեալ ունէի զբազուկս իմ առաջի աստուածընկալ սեղանոյն և սկսայ ասել զպատարագոյցն զոր Աստուած պարգեւեաց ինձ» են:

16. Թղ. 54ր, «Ար. հաւրն Թեոփիլոսի վասն արտասուաց: Երբժամ միտքդ զբաղեալ լինի և կամիս որ ի զղջումն ածես, դու որպէս զայլ մարդոյ, ահ արկքեզ առանձինն և ասայ, ոչ երկնչիս ահեղ զատաստանաց Աստուծոյ» են:

17. Թղ. 63ա, «Նուստս վարդապետին Յովնաննէս Լզնկացոյ խրատ հասարակաց, քահանայից և ժողովրդոց, ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց, և հարց, և վարդապետաց և սուրբ հաւրն մերոյ Վարդան Վարդապետի, յորոց ժողովեցի և գրեցի: Ամենազաւր թագաւորին մերոյ Քրիստոսի և բարերար Փրկչին հաւատարիմ ծառայք զնեալք և ազատեալք անբիծ և աւարատ արեամբ նորա» են:

18. Թղ. 66ա, «Նորին յաղագս հաւատոյ: Նախ պարտ է իմանալ՝ եթէ զինչ է քրիստոնէութիւն և զինչ հաւատ քրիստոնէութեան: Եւ արդ զիտեիլ թէ հաւատն Աստուծոյ առ մարդիկ միջոց է և չաղկապ, զի յԱստուծոյ ի մեզ հաստատի հաւատ, և մարդկանէ յԱստուած հլանէ, զոր և աւրինակաւ ծանուցուք խողացոյ» են:

19. Թղ. 71ա, «Նորին վասն մկրտութեան: Արդ քրիստոնէութեան սկիզբն և զլուխ մկրտութիւն է, որ ևս ի բառով

կնունք ասի, և թէ զինչ է մկրտութիւն քրիստոնէութեան հոգեւոր ծնունդ է, որպէս ասաց Քրիստոսն ևն:

20. Թղ. 76ա, «Յաղագս զտղա սնուցանել: Արքութեամբ և անարատութեամբ սնուցանեն քրիստոնէքն զիւրեանց դաւակն, և զգոյշ կենան ի մկրտութեան աւրէն մինչ ի կատարել հասակին, մինչդեռ երեխայ է» են:

21. Թղ. 76բ, «Տեսնոն Ներսէսի Ընդհանրականէն: Առ վաճառականոց և արուեստաւորոց: Ասացուք և առ վաճառափողոցսն նստիցիք զնի և վաճառել և արուեստաւորոց՝ զի ուղղութեամբ տանիցիք զկեանս ձեր և անարատ քաղաքաւարութեամբ, և մի ոք խտրելութեամբ և նենգութեամբ վաճառեսցէ զստացուածս իւրս ևն. (Հմտ. 1871 թ. Երուսաղէմ ապուած. Ընդհանրական Թուղթք Արքոյն Ներսիսի Շնորհալուոյ, էջ 79-80):

22. Թղ. 78ա, (Նորին) «Առ համաւրէն ժողովականք: Սաւեսցուք և առ համաւրէն ժողովականքդ զխրատ պատուիրանին Աստուծոյ, զոր աւանդեալք ձեզ, որոյ մանաւանդ պիտանացու է զեղ հոգեւորական առ ի բժշկութիւն հոգոյս ևն. (Հմտ. անդ, էջ 80-2):

23. Թղ. 80բ, «Տեսնոն Ներսէսի յընդհանրականէն առ կանանց դասս: Պատուէր տամք և կանանց ազգի, պարկեշտութեամբ և բարեձեւութեամբ լինել ամենայն որպէս վա(յ)ել է քրիստոնէից» (Հմտ. անդ, էջ 82-3):

24. Թղ. 82բ, «Տեսնոն Ներսէսի Ոսանաւոր: Երբժամ զրեալքն կատարին, որ զայնմ աւուր մեզ պատմեցին, մարգարէից բանքն յարգին, առաքելոցն վճարին» են:

25. Թղ. 91ա, «Տեսիլ սր. վարդապետին Յովնանիսի, որ մականունն Կողբուն կոչի: Ի ժամանակին յորում էր թմականն հայոց Գժձ թագաւորն հոռոց Վասիլ յարեւելս և եկեալ աշխարհն հայոց անթիւ բազմութեամբ զաւրաւք խուժաղուժ ազգաց, և խնդրեաց զԱնի քաղաք, և զամենայն տունն Շիրակայ, ի Յովանիսէ յորդոց Գազկայ հայոց թագաւորին» են:

Այս Յովաննէս Վարդապետին, ինչպէս նաեւ ծանօթ է Երզնկացի և Կողբուն անուններով, տեսնան մէջ թաւականի սխալ զրէս-



գրութիւն մը կայ, այս ծանօթ է այլուտոյ, թուականը ըլլալու է ԴՃՀ, կամ ՆՀ, տես Ն. Թ. Տաշեան, Մայր Թուրքի շախմատ Զեռագրաց, Հտ. Ա., Վիեննա, 1896, էջ 657-8, § 2, ա.

26. Թղ. 106ա, «Ի Հարանց Վարուցն, վասն խոնարհութեան: Արքայն Անտոնիոսն հայեցաւ ի խորս դատաստանին Աստուծոյ, խնդրեաց և ասէ. Տէր որպէս ոմանք սակաւկայք լինին և ոմանք ծերանան, և ընդէր ոմանք փարթամք, արդարքն տառապին և անիրաւ քն հանգչին» ևն:

27. Թղ. 110բ, «Երաւաք նորին աստուածաշունչ գրոց և պարզաբանին յայտնումն բարոյն և շարին, զոր մեղաւոր հոգս և հին խաբերայս փարդապետս յարմարեալ գրեցի վասն խնդրոյ Թաղեոսի շնորհալից քահանայի՝ սրբասիրի և ընտրելոյ առաջնորդ, և ինձ Տէր իմ Աստուած Յիսուս Քրիստոս: Ով որդեակք վերջին է ժամանակս և լցաւ մեղաւք ամենայն երկրի, զի սառնացան և խաւարեցան հոգիք և սիրտք մեր ի շնչոյ պիղծ զիւսան» ևն:

28. Թղ. 128 «Թուղթ վասն կիւրակէին, զոր էջ ի հօտ եկեղեցին. Աստուածային բառքառոյն պատուէրք և խրատք: Եկի ի տաճարն սուրբ, գտի զսայ ի մէջ խորանին, յաւոս արհնեցի զԱստուած և ասացի. Մեծ ես դու և հզար, և սքանչել զարմանք ցուցեր ծառայիս քո, արժանի արայ զիս անսանել զքեզ» ևն:

29. Թղ. 134բ, «Տեսիլ սրբունոյ Աստուածածնին ժաւրն Տեսնն Մարիամու: Եւ եղև երթալ Աստուածածին մայր Տեսնն ի լիտոն Զիթենեաց, կալ յաղաթս վասն ամենայն քրիստոնէից, զի թերես փրկեցէ ամենայն փորձութենէ» ևն:

30. Թղ. 144բ, ա «Պատմութիւն սուրբ հարցն և յառաջգիտութեամբ կատարումն նոցի ագ. և հարց ոմն ցարբան Անսոնիոս և ասէ. Զթնչ պահեցից, զի արժանի եղէց Աստուծոյ» ևն: — Բ Թղ. 148բ, «Վասն մտաց բացութեան: Ասաց արքայն Անսոնիոս առաջի աչաց ձերոց կալարոյք զերկիւղն Աստուծոյ, յամենայնի յիշատակեալ զմահն ատենցոյք զաշխարհս և զամենայն որ ինչ ի նմայ» ևն: — Գ Թղ. 150բ, «Վասն ժուժկալութեան ոչ միայն կերակրոց այլ յամենայնէ որ շարժէ զանձն: Ասաց Արքայ Դա-

նիկ վասն արքայ Անսոնիոս: Եթէ յամենայն գիշեր կատարէր զհսկումն և յորժամ կամէր առաւաւտոյն նստիլ սակաւի, վասն քնութեան ասէ ցքունն ի բաց կայ յինէն չար ծառայ, և յափշտակէր փոքր մի նստեալ ի քնոյն և ի բաց ելանէր» ևն:

31. Թղ. 153բ, «Այլ բանք ի Հարանց Վարուցն վասն զգուշութեան ի պոռնկութենէ: Ասէ արքայն Անսոնիոս, եթէ մտածեմ, զի ունիմ մարմինս շարժումս բնական» ևն:

32. Թղ. 128բ «Սուրբ հօրն Նեղոսի խրատ պիտանի: Զամբարշտին: Յորժամ ամենայնին լուսաւորին, նա միայն խաւարի: Վայ հա(յ)հոչին, քանզի կապի լեզուն և պատասխան տալ դատաւորին ոչ կարէ» ևն:

33. Թղ. 180բ, «Երանելոյն Արամասի արեւիսկոպոսի Աղեկաւանդու հարցումն վայելուչ և պատասխանիք կիւրղի հայրապետին յաղագս մակացութեան և հանձարոյ: Աւգնեայ հոգի Աստուծոյ, զի հասից հաւարտ ի կատարումն. հետեւումն համարիմ ընդ Աստուծոյ էր իս բանս և ապայն հետեւի ի մէջ գալ, քանզի բազմաց խնդիր լինել վասն այսմ իրի քննութեանց» ևն:

34. Թղ. 218բ, «Երաւ սրբոյն Կալիստոսի: Յարուցեալ ոմն ի նոցանէ անուն Դաղմատիոս, ասէ սուրբն Կալիստոսի: Աղաչեմ զքեզ տէր քրիստոնէացոյ զմեզ և ուսոյ մեզ զբանն Աստուծոյ» ևն:

35. Թղ. 221բ, «Տեսնն Ներսէսի բանից գրեմք սակաւ բանք, որ նայ գրեաց թուղթ ի Միջագետս Ասորոց: Աւգնեա հոգիս սուրբ: Թէպէտև մերոյ Լուսաւորչի աւանդեալքն ընդունելի էին, որպէս հոգւոյն սրբոյ, բայց նա ոչ յանձնէ եղ զգառին զենումն զատկին» ևն:

Թղ. 235, կուտայ ցանկը ԺԴ.էն մինչև ԻԵ. բայց անկէ անդին չի շարունակեր. այնպէս սկիզբի կարմատողերը չեն գրուած զայս ամբողջութեամբ կուտայ Աստ § 36, Թղ. 237բ:

36. Թղ. 237բ, «Յանկ գրոյս: Այս է գիրս սակաւ բանք ի լուսաւոր բանից սրբոց վարդապետաց հաւաքել յաւգուտ և շահ



ընթերցողաց և կարդացողաց», յետոյ ցանկը:

37. Թղ. 238թ. «Այս է հաւատոյ դաւանութիւնք զոր գրեաց մեծ Վարդապետն Յոննէսն Որոսնեցի, հրամանաւ պարոն Խուրլուեի, ի Հայր, առ ի կաթուղիկոսն Տէր Կոստանդին (զ)րեալ է Վարս Հարանցն, թէ ձեր ոմն ետես քացեալ զգժոխս, և այր մի անկեալ յատակս զժոխոցն» են: Կը մնայ թերի:

ՅԻՇԱՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՔ. —

1. Թղ. 62թ. «Ջատացող սուրբ գրոյս զՀայրապետն և զձնաւորսն իւրս»:

2. Թղ. 73թ. «Ի թվականին ՌՁԴ» (= 1635):

3. Թղ. 94ա. և 95բ. (վարի լուսանցքներուն վրայ)՝ «Այստեղ լցեալ անպիտան գժոխս զձեզ աղաչէ ով հանդիպողք թողութիւն շնորհեցէք առաւպելոյս»:

4. Թղ. 106ա. «Նուաւստ գրիչս զձեզ աղաչէ մի բերան ողորմիայ» յիշել առ (ի) Բրիտոս և զձնաւորսն իմ ով հանդիպողքդ»:

5. Թղ. 103թ. (Տարբեր գրչէ չհաղորդի)՝ «Նուաւստ տէր Մարտիրոս Գասպարս Մովսէս Երիցանց Սանգիպարանցի (մէկ անձի անուն) զնացի Հաղաթրիպ սրբայ կրօն Աւաք քահանայ սէր Ասուածատու սէր Սեւփաւնոսի տունն, տեսի այս քարոզգիրն: Ամի Տեառն 1841ին, ապրիլի եօթն, Աւետեաց տօնի օրն»:

6. Թղ. 232ա. «Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ և զլուսազարդ մատենան՝ ես նուաւստ ծառայս ամենայն ծառայիցդ Աստուծոյ Պետրոս մեղուցեալ և անարժան քահանայ ի թվականին հայոց ՌՁԴ (= 1635) քաղոց ԺԶ փետրվարի ԻԴ. ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի և յառաջնորդութեան մերոյ քաղաքիս Ջուղայոյ Խաչատուր սրբազան և մաքուր եպիսկոպոսի, ի երկիրս Հնդկաց, ի մայրաքաղաքս Լոմսուռ, բազմամարդ և անթընկի: Ի խնդրոյ բարի և հաւատարիմ ծառային Աստուծոյ Հայրապետին, որ մեծաւ յուսով և բազում փափաքանաւք և ցանկութեամբ խնդրեաց զսայ ի լուսաւորութիւն անձին իւրոյ և ի միսթարութիւն լսողաց հաւատացելոց: Կրկին անգամ աղաչեմ զամենեւեմն յիշել

Տէր զոտացողս սորա Հայրապետն և զմայրն իւր՝ մեր Տաթևիկն: Դարձեալ յիշեցէք ի Բրիտոս զՀայրապետն»:

7. Թղ. 233ա. «Դարձեալ յիշեցէք ի Բրիտոս զՀայրապետն և զհղբարսն իւր՝ Խաչատուրն, և զքրեւերն իւր՝ Փարսն, Իսխուսն, Մարիամն, և հանգուցեալքն առ Բրիտոս՝ Մարիամն, Մեքմեքն, Հովսիսիմէն յիշեցէք ի Բրիտոս և Աստուած ողորմի առաջէք: Դարձեալ յիշեցէք ի Բրիտոս զՀայրապետն և զհարեղբայրն իւր՝ Սիմոնն և զհարաքոյրն իւր՝ Խանգաւսէն: Դարձեալ յիշեցէք ի Բրիտոս զՀայրապետն և զիս անարժան և զառաւապեալ և զանյիշելի նըվաստ Պետրոս սուտանուն երէցս, առ ուս: հանդիպողացդ անկանիմ և լալազիւն պաղատանաւք հայցեմ զթողութիւն մեղաց իմոց և զձնաւորացն իմոց: Եւ դուք հայրք և եղբայրք հանդիպողք սորայ զաւելորդն հանէք և զպակասն լցէք. զի կար մեր այս էր, և զաւելորդն ի Տեառնէ հայցեմք աղաւթիւք ձերովք, որում պարգեւեսցէ զիւր առաւտ ողորմութիւնն, հանուրց ծնելոց աւագանին, մանաւանդ վերագրելոցս ի սմա, որում փառք . . . » են:

8. Թղ. 235թ. (Տարբեր գրչէ չհաղորդի)՝ «Յիշատակ է այս հոգեկիր մոզովածուս տէր Աղէքսանդրին, և իւր որդի տէր Սեւ. փառնոսին, և թոռանցն Ասուածատուին, և զստերացն իւրոց, յիշեցիք և դուք յիշեալ լիջիք ի Փրկչէն մերմէ: Գրեցաւ թիւն ՌՄԼ» (= 1781):

ԱԻԵՏԻՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ,

Պէյրուս





## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ԹՈՒՂԹ ՅԵՐՈՒՍԱԳԵՄԷ Ի ՀԱՅՍ

## ՎԱՍՆ ՏԵԱՌՆՐՆԴԱՌԱՋԻՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

Ի ժամանակս Յուստին[իմ]անոսի<sup>(1)</sup> կայսեր, յերեսներորդի երրորդի<sup>(2)</sup> ամի<sup>(3)</sup> թագաւորութեան նորա, էր խաղաղութիւն ի քաղաքին երուսաղէմի և յամենայն եկեղեցիսն Սատուծոյ: Զի եպիսկոպոսք և քահանայք և ամենայն ուխտ սրբոյ եկեղեցւոյ, որպէս<sup>(4)</sup> հուր<sup>(5)</sup> վառեալք ի պաշտաւն յուղիղ հաւատս, եկաւք և բնակաւք<sup>(6)</sup>, աղքատաւք և մեծամեծաւք երուսաղէմի: Իսկ բարխառեացն սատանայ<sup>(7)</sup>, մախացեալ ընդ իրան, կամէր եղծանել<sup>(8)</sup> զլուսաւոր կարգս եկեղեցւոյ, զոր սրբոց հարցն կարգեալ և երանելոյն կիրարդ հաստատեալ: Եղև զի չարախորհուրդ հրեայ մի<sup>(9)</sup>, համակամ բանասրկուին, բանալուր<sup>(10)</sup> առնէր զթագաւորն<sup>(11)</sup>, թէ պարտ է զՏեառնընդառաջն ըստ ծննդեանն առնել<sup>(12)</sup> և ոչ ըստ յայտնութեանն քառանձաւեայ: Որում հաւանեալ՝ զրէ թուղթ յերուսաղէմ առ Յոստոս հայրապետն և առ երուսաղեմացիսն ամենայն, զի փոխեցին զսուրբ Տեառնըն-

դառաջին աւրն ըստ ծննդեանն ի քսան և ի հինգն զեկտեմբերի ամսոյ, որպէս և յայլ քաղաքսն ստութեամբ<sup>(13)</sup> առնեն զայս:

Եւ լուեալ հայրապետին զհրաման կայսերն, յոյժ խոռվեցաւ, և ամենայն երուսաղեմացիքն ընդ նմա, և ամենայն քաղաքն առ հասարակ ի սուրբ եկեղեցին<sup>(14)</sup> ընթանային, արք և կանայք, երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք, և զպաղատանս ամենատեառնն մատուցանէին, բազում հառաչանաւք և արտասուաւք: Եւ զամենասուրբ կոյսն աստուածածինն և զամենայն սուրբսն ի բարեխաւսութիւն և յաւգնութիւն<sup>(15)</sup> անձանց կարգային: Եւ ուխտեցին միաբան<sup>(16)</sup> զմահ ընդունել վասն այնորիկ, քան թէ անցանել ըստ սուրբ հարցն կարգսն և<sup>(17)</sup> աւանդութիւնս: Եւ այսպէս վառեցան զինու սուրբ Հոգւոյն, և եղին միախորհուրդք<sup>(18)</sup> ի սէր աստուածութեանն, և կային ընդդէմ հրամանի թագաւորին երուսաղեմացիքն, իսկ կայսրն, իրրե լուաւ եթէ ստունգանեցին<sup>(19)</sup> զհրամանն, զգուքս ոմն առաքեաց յերուսաղէմ, զի զՏեառնընդառաջն ըստ ծննդեանն արացցեն քոնարար<sup>(20)</sup>:

Եւ իրրե և հոս գաւրն<sup>(21)</sup> ի քաղաքն երուսաղէմ, ոչ անսացին<sup>(22)</sup> հրամանի թագաւորին, այլ վառեցին քահա և մամեղէնս

Բնագիր Ա = ԶԵԱ. Ո. Յ. Թ. 3152, էջ 315. ԹԿ. 1384, բաւորգիր: — Հմմտ. Բ = ԶԵԱ. Ո. Յ. Թ. 71, էջ 486. ԹԿ. 1321, բաւորգիր: — Դ = ԶԵԱ. Ո. Յ. Թ. 1 ա. էջ 190. ԹԿ. 1419, բաւորգիր: — Դ = ԶԵԱ. Ո. Յ. Թ. 1-4 ա. էջ 450, ԹԿ. 1737, նոսրագիր: — Ե = ԶԵԱ. Ո. Յ. Թ. 764, էջ 148. Նոսրագիր: համընթաց է Ա արխիւէն:

(1) Յուստինանոսի, Ա Դ Դ Ե:

(2) երրորդի, երկրորդի, Դ. Չուցին, Ա Դ:

(3) ամի, Չուցին, Բ Դ:

(4) որպէս, Չուցին, Բ:

(5) հուր, Չուցին, Բ Դ Ե:

(6) բնակաւք, բնակչաւք, Ա Բ Ե:

(7) սատանայ, Չուցին, Ա Դ Ե:

(8) եղծանել, լուծանել, Ա Ե:

(9) եղև չար խորհուրդ հրամանի, Դ:

(10) բանալուր, բանալսելոյ, Ա Ե. Չուցին Դ. Ե Լ ա, Բ:

(11) թագաւորն, Դ:

(12) զմահ ընդունել, Դ:

(13) ոչ ստութեամբ, Ա. ոչ ճշմարտութեամբ, Դ:

(14) եկեղեցիսն, Դ:

(15) յաւգնութեանութիւն, Բ Դ Ե:

(16) միահամուս, Դ Դ:

(17) կարգսն և, Չուցին, Ա Ե:

(18) միախորհ, Ա:

(19) անկանեցին, Դ:

(20) քոնարար, Չուցին, Բ:

(21) հրամանն, Ա Ե:

(22) անսացին, Դ Դ:



և ելին ընդ առաջ<sup>(23)</sup> Տեառն<sup>(24)</sup> ի սուրբ Պրահայոս<sup>(25)</sup>։ Կատարել զառանն ըստ Բայտնութեանն<sup>(26)</sup>։ Եւ զաւրն արգելոյր զնոսա, և նոքա սպասէին մահու քան կենաց։ Եւ մինչդեռ յայտմ մարտի<sup>(27)</sup> էին, յանկարծակի երեւեալ նշան ի Տեառնէ, զի ի սուրբ Սիւնին ի քրիստոսոպարզ սեանն<sup>(28)</sup> ջուր բղխեաց վերստ ի վայր, և տեսեալ պաշտաւնէիցն ազգ ամենին ամենեցունց։ որք միահամուռ<sup>(29)</sup> անգր հասանէին, զի տեսցեն զսքանչելիսն զոր Տէր եցոյց ի զաւրութիւն<sup>(30)</sup> քրիստոսառէր ժողովուն<sup>(31)</sup> և յաւատ չակոսակորդացն։ Եւ ամենին ջրսն ամենեքեան և փառաւոր ամենին զԱստուած։ Եւ տեսեալ զքօին և զաւրացն երկիւրիւ ի սուրբ Սիւն անկանէին, և առաջի սուրբ սեանն ծուր կրկնեալ խնդրէին ի Տեառնէ զթողութիւն։ Եւ ժողովուրդքն կատարէին<sup>(32)</sup> զՏեառնընդառաջ սուրբ տաւնն, որպէս էրն<sup>(33)</sup> ըստ Բայտնութեանն ի փառս Բրիտտոսի։ Այս առ Բոստոսի<sup>(34)</sup> հայրապետիւ եղև նշանս և զաւրութիւնս։ Իսկ ի միասում<sup>(35)</sup> ամին Մակարիոս յաջորդէր յաթոռն<sup>(36)</sup>, և զարձեալ խոսովութիւն յուզէր ի մերձեանս սուրբ տաւնին։ զի զարձեալ զաւրս կրկին սաստիկ<sup>(37)</sup> առաքեաց կայսրն, շարժեալ ի բանաբարէն, զի արասցեն զսուրբ Տեառնընդառաջն ըստ ծննդեանն, և ոչ ըստ Բայտնութեանն։ Իբրև եհաս զաւրն ի հայրապետն և զուքսն և այլ իշխանքն առաքեալքն ի թագաւորէն<sup>(38)</sup>, և կամէին<sup>(39)</sup> առնել զՏեառնընդառաջն ըստ հրամանի կայսրն ըստ ծննդեանն

բռնութեամբ, ապա և<sup>(40)</sup> Երուսաղեմացիքն պնդեցան նովին հաւատով, և միահամուռն ի սուրբ եկեղեցին ընթանային<sup>(41)</sup> և անկանէին առաջի սուրբ և աստուածընկալ<sup>(42)</sup> սեղանն, և զձեռս ի վեր<sup>(43)</sup> տարածելով և զարտասուս յերկիր<sup>(44)</sup> հեղիով, լային և աղաղակէին, խնդրելով վերստին<sup>(45)</sup> ի Տեառնէ զաւրնութիւն<sup>(46)</sup>, որպէս յառաջ նույն եցոյց զզաւրութիւն։ Եւ էր աղաղակ մեծ և խոսովութիւն երուսաղեմացւոցն ամենեցունց<sup>(47)</sup>, մինչ զի ընտրեցին<sup>(48)</sup> զմահ, որք և կանայք և մանկունք<sup>(49)</sup>, քան զառանն խղճիւ կատարել։ Եւ ի սուրբ եկեղեցիսն ոչ լսուր ձայն պաշտաման, այլ լալոյ և աղաղակի<sup>(50)</sup>։ Եւ զաւրն զինեալ էր ի զուրս եկեղեցւոյն, ահ արկանելով։ Իսկ նոցա ոչ զկենաց փոյթ էր<sup>(51)</sup>, այլ ի մահ գիւժէին։

Իսկ իբրև ետես հայրապետն և զուքսն զՋերմեոսեանդն հաւատաց պնդութիւնն զԵրուսաղեմի, և առ ոչինչ համարել զմահ<sup>(52)</sup>, զաղաղակ բարձեալ տեսն զաղաղեացի խոսովութիւնս և աղաղակս ի ձէնջ<sup>(53)</sup>, զի որպէս Տէր հրամայեցէ, աշխատաւորացուք։ Եւ մինչդեռ չփոխեալ էին, և սատանայ իւրովքն<sup>(54)</sup> զուարճացեալ<sup>(55)</sup> քրքուէր<sup>(56)</sup>, եցոյց Տէր զսքանչելիս իւր։ Եղև զի եպիսկոպոսն մատուցանէր զպատարագն, ետես ազգեցութեամբ սուրբ Հոգւոյն, զի ցոլացաւ ի տեսութիւն իմն անճառելի<sup>(57)</sup>,

(23) առաջ, Չուեի, Դ։

(24) Տեառն, Չուեի, ԱԵ։

(25) եպիսկոպոսն, Բ. Պրոկոպիւսն, Գ. Պրոկոպոս, Դ։

(26) ըստ յայտնութեան և ըստ սովորութեանն, Գ Դ։

(27) մարի, Գ։

(28) սեանն, ԱԵ։

(29) միահամուռ ամենեքեան, ԱԵ։

(30) ի զաւրութիւն, զորութեամբ, Դ։

(31) ժողովուրդեանն, Գ։

(32) կատարէին, Չուեի, Դ։

(33) որպէս էրն, Չուեի, Դ։

(34) Բոստոսիւ, ԱԵ։

(35) ի մես այլ, Դ։

(36) զաթոռն, Բ Դ Դ։

(37) սաստիկ, Չուեի, Բ Դ։

(38) ի բռնաւորէն, Բ։

(39) կամեցան, Բ Դ Դ։

(40) ապա և, Բայնթամ, Կ Դ։

(41) հաւատով, Բ Դ։

(42) և աստուածընկալ, Չուեի, ԱԵ։

(43) ի վեր, ի յերկրս, Բ. Չուեի, ԱԵ։

(44) յերկիր, Չուեի, Կ Դ։

(45) վերստին, Չուեի, Բ Դ Դ։

(46) զաւրնութիւն, Բ Դ։

(47) յերուսաղեմ ամենեցուն առ հասարակ, Դ Դ։ ամենայն երուսաղեմի, Բ։

(48) ընտրեցին առ հասարակ, Դ։

(49) և մանկունք, Չուեի, Բ Դ։

(50) ողորակի, Դ։

(51) իսկ նոքա ոչինչ զկենաց փոյթ ամենէին, Բ Դ Դ։

(52) զմահ, ԱԵ։

(53) ի մէնջ, ԱԵ։

(54) իւրայովքն, Դ։

(55) զուարճանայր, Դ։

(56) քրքուէր, Դ. Չուեի, Դ։

(57) զի զաւրութիւն իմն անճառելի ի նմանութիւն հրեշտակի ցոլացեալ ընդ սուրբ զաւրն



ի նմանութիւն հրեշտակի, ի սուրբ Գողգոթայ, ի սուրբ դուռն Տեառն, և եհառ մինչև ցերկրորդ սիւն<sup>(58)</sup> սրբոյ մատարանն, և եհար զաջ բազուկն իւր ի նմա, և անդէն բեռնեցաւ<sup>(59)</sup> աջ Տեառն ի վերայ սեանն, և ինքն աներկելով եղև։ Եւ նա անկաւ ի վերայ երեսաց խորաց, և ի դարմացման մեծի եղեալ՝ յարուցեալ պատմեաց գտեսին։ Եւ լուեալ<sup>(60)</sup> ամենեցուն փառաւոր առնէին զԱստուած ի վերայ անպատում սքանչելեացն՝ որպէս զաւրացոյց զժողովուրդն վտանգեալ, և կորացոյց զժողովուրդն հաւատակող<sup>(61)</sup>։

Եւ մինչդեռ յայտմ մեծի դարմացման էին ամենեքեան, ա՛յլ նշան երեւէր։ Զի ամենասուրբ կոյսն Մարիամ աստուածածինն տպաւորեցաւ ի նմին սեանն, ունելով զմանուկն Բիսուս ի զիրկս իւր<sup>(62)</sup>, և խաչ մի ծիրանի՝ յաջոյ ձեռին Տեառն, և խաչ մի ի միստում սեանն երեւեալ։ Եւ զայս նշան ամենեքեան տեսին<sup>(63)</sup> արդարք և մեղաւորք<sup>(64)</sup> առհասարակ, ի քսան և ինն մեհեկանի<sup>(65)</sup> ամսոյ, յաւուր Կիրակէի<sup>(66)</sup>, ի ժամ պատարագին, և բազում ուխտաւորք և<sup>(67)</sup> աստաժեռք բժշկեցան յաւուրն յայնմիկ։ Զի եղև քարի<sup>(68)</sup> նշանս այս բժշկութեան նախ<sup>(69)</sup> ի վերայ Հայոց։

Զի կին մի ի Սոկաց, Սողոմէ անուն<sup>(70)</sup>, որոյ քսան և երեք ամբ էին<sup>(71)</sup> զի կարկամեալ էր, եկն սողալով մերձ ի սիւնն, և

բազմութեանն առնթիւր կացեալ<sup>(72)</sup> տեսանել թէ զինչ լինիցի։ Եւ իրբն մերձեցաւ ի սիւնն յոր կայր աջ աստուածութեանն, և սուրբ կոյսն հանդերձ մանկամբն Բիսուսիւ, և քունն եհար զսիւնէն<sup>(73)</sup> պինդ հաւատով, և խկոյն յարուցեալ եկաց ի վերայ ոտից խորաց ողջ<sup>(74)</sup>, և ետ ողջոյն ամենեցուն<sup>(75)</sup>, և գնայր և գոհանայր զԱստուծոյ<sup>(76)</sup>, և փառաւոր առնէր զԱստուած<sup>(77)</sup>։ Եւ ամենեքին տեսին զկինն բժշկեալ և ի մի բերան փառաւորեցին զԲրիտոս<sup>(78)</sup>։

Էր զի զգիւահարսն ածէին մերձ ի սիւնն<sup>(79)</sup> ուր էր պատկերն և նոքա աղաղակէին<sup>(80)</sup> և ասէին։ Տիրուհի Մարիամ, զի<sup>6</sup> երեւցար զմեզ հաւածել<sup>(81)</sup>։ Եւ անդէն զարկուցեալ շարժէին, և վաղվաղակի չքոտէին ի նոցանէ յորս էին։ Եւ յարուցեալ տեսանէին զսուրբ աջ աստուածութեան, և զսուրբ կոյսն և զԲիսուս, և կնքէին զինքեանս<sup>(82)</sup> նշանաւ սուրբ խաչին, և այլ ոչ ևս դառնային ի նոսա, և տային ողջոյն ամենեցուն<sup>(83)</sup>, և փառաւոր առնէին զԱստուած ի վերայ այսոցիկ։ Եւ ամենեքեան աւրհնէին զԱստուած ի վերայ մեծամեծ սքանչելեացն որ երեւցանին։

Եւ ահիւ<sup>(84)</sup> և զողութեամբ<sup>(85)</sup> կանխեալք յաղաթս և ի խնդրութեան, զցայգ

(72) եղեալ, Ա Ե։

(73) զսիւնէն, Բ։

(74) ողջ, ուղիղ հաւատով ողջացեալ, Ա Ե։

(75) և ետ փառս Աստուծոյ, Ա Ե։

(76) և գնայր և աւրհնէր զԱստուած ամենեքեամբ հանդերձ, Ա Ե։ և գնայր և գոհանայր և աւրհնէր զԱստուած, Բ։

(77) և փառաւոր առնէր զԱստուած, Չուրիմ, Ա Բ Ե։

(78) Եւ որք ոչ էին մերձ ի սիւնն տեսին զկինն բժշկեալ, և ի մի բերան փառաւոր առնէին զԱստուած, Ա Ե։ Եւ որք ոչ էին մերձ տեսանէին զկինն բժշկեալ, ի մի բերան փառաւոր առնէին զՏէր Աստուած, Դ։ Չուրիմ, Բ Ե։

(79) նաև զգիւահարսն ածէին մերձ ի սիւնն, Բ։ էր զի զիւահարս մի բերին մերձ ի սեանն, Դ Ե։

(80) յոր հայէին պատկերքն, աղաղակէին, Դ։ և հայէին ի սիւնն՝ աղաղակէին, Ա Ե։ որ հայէին ի պատկերն, աղաղակէին, Դ։

(81) որ զմեզ հաւածեա, Բ Գ Դ։

(82) զանձինս իւրեանց, Գ Դ։

(83) միմեանց, Ա Ե։

(84) Եւ ահիւ, և երեսաղեմի, ամբոյց պարբրութիւնը չուրի, Դ։

(85) խնդրութեամբ, Դ։

Տեառն, Բ։ և տեսանէր աղղեցութեամբ սուրբ Հոգւոյն ցաղացեալ դաւառութիւն իմն անճառելի, Դ։ և տեսանէր աղղեցութիւն իմն անճառելի, Դ։

(58) յերկրորդ դուռն, Բ Դ։ յերրորդ դուռն, Դ։

(59) երեւցաւ, Ա Բ Ե։

(60) տեսեալ, Ա Բ Դ։

(61) և կորացոյց զժողովուրդն հաւատակող, Չուրիմ, Ա Ե։ և կորացոյց զհաւատաւորքս, Բ։

(62) զսուրբ մանուկն ի զիրկս իւր, Բ։ ունելով զՏէրն տղա նորածին ի զիրկս իւր, Դ։

(63) Եւ զայս ամենայն նշան տեսին, Բ Դ։

(64) անցաւորք, Ա։

(65) ի մեհեկի, Դ։

(66) յաւուր Կիրակէի, Չուրիմ, Ա։

(67) ուխտաւորք և, Չուրիմ, Բ Գ Դ։

(68) քարի, Չուրիմ, Ա Ե։

(69) նախ, Չուրիմ, Ա Ե։

(70) Զի կին մի անունն Սողոմէ ի Սոկաց, Եւրպան, Բ։ Զի կին մի Սողոմէ անունն ի Սոկաց, Դ։ Զի կին մի սողունն, ի Սոկաց, Սողոմէ անունն, Դ։

(71) քսան և երեք ամբ էր, Դ։



և զցերեկ գոհանալով ի վերայ անպատում սրանչեղեացն և պարզեացն Քրիստոսի<sup>(86)</sup>։ Զի զիսահարքն բժշկէին, կոյրքն լուսաւորէին, կաղքն գնային, խուլք լսէին<sup>(87)</sup>, անդամաւորձքն անողջանային և փառաւոր առնէին զԱստուած, որ ա՛յսպիսի շնորհս եցոյց որպէս ի յայտնութեան իւրում և ի գալստեան<sup>(88)</sup>։ և արար խաղաղութիւն, և բարձաւ ամպրոպն խոռովութեան<sup>(89)</sup>։ Երուսաղեմիս։

Եւ կատարեն զՏեառնընդառաջին սուրբ առնեն ըստ Յայտնութեան, ըստ զրութեան սրբոյ առաքելոյն Յակոբայ<sup>(90)</sup>, և մարտոցեալքն ի խաղաղութիւն զառնային և ներուսողէմ յարախութիւն<sup>(91)</sup> հանգերձ գոհութեամբ ի փառս Աստուծոյ։

Զի ըստ մարգարէութեանն էր անսանել, ի Սիոնէ ելանել աւրէնք և բան Տեառն յերուսաղեմէ։ Եւ դարձեալ եթէ աղբիւր ի տանէ Տեառն ելցէ և արբուցէ զձորն վիճակաց, զի յերուսաղեմէ բաշխեաց զպարզեւ յազգս ամենայն։

Զայս փան զգուշութեան գրեցի ի Հայս, զոր ինձէն<sup>(92)</sup> իսկ ականատես եղեալ մեծամեծ սքանչելեացն զոր Տէր եցոյց<sup>(93)</sup>, և զի մանաւանդ<sup>(94)</sup> զգուշանայցէք ի չար խորհոյց անտի, որք ստարանութեան բանիւք<sup>(95)</sup> խոտորին ի կարգադրութենէ ընթերցուածոց<sup>(96)</sup> սրբոյն Եսկովբայ, և այլափոխեն զտառս և<sup>(97)</sup> զտաւնս։ Այլ զուրպէս ուսարուք<sup>(98)</sup> ի նմին կացէք և մեացէք<sup>(99)</sup> մինչև ի գալուստն Տեառն։

Արդ որք սրբութեամբ հաւատովք և արգարութեամբ<sup>(100)</sup> կատարեն զսուրբ տաւնս, զոր ինչ և խնդրեացեն ի վերուստ<sup>(101)</sup>, տացի նոցա ի վերնատուողէն, քարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու, և աղաւթիւք սուրբ ծերունւոյն Սիմէոնի, և խնդրուածովք<sup>(102)</sup> մարգարէուհոյն Աննայի զի և այժմ, և յաւուրն երեման, ընդ առաջ ելեալք մարքութեամբ և արգարութեամբ, ժառանգեացուք զխոստացեալ<sup>(103)</sup> երանութիւնն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս<sup>(104)</sup>։

Այս շահեկան Թուղթը առաջին անգամ հրատարակած էինք 1953ին, մեր Զեռագրաց Յուցակին երկրորդ հատորին մէջ (էջ 34-36), համաձայն թիւ 154 ձառնարկին, որ զերձ չէր թերութիւններէ։ Այդ պարագան նկատի առնելով պատշաճ սեպեցինք հրատարակել ձևովն աւսագրին մէջ թուղթիս աւելի յաւ մէկ օրինակը, համեմատելով մեր մօտ գտնուող սրիչ չորս ձեռագրերն, բուն հետ, և նշանակելով կարեւոր տարբերութիւնները։

Ն. ԵՊՍ. ԾՈՒՂԱԿԱՆ



(86) Եւ լաւագեացն Քրիստոսի, Տեառն, Դ։

(87) Կաղքն գնային, խուլք լսէին, Զունի, Դ։

(88) զի այսպէս զաւրութիւն շնորհաց երեւցոյց Տէր, որպէս ի գալստեան իւրում և յայտնութեան, Բ։ զի այսպէս զօրութիւն շնորհաց երեւցոյց յայտնութեամբ իւրով և գալստեամբն, Դ։

(89) ամպրոպն խոռովութեան, աղմկեալ խոռովութիւնն, Դ։

(90) ըստ ընտրութեան սրբոց առաքելոցն, ԱԵ։

(91) զառնային և երուսաղէմ յարախութիւն, Զունի, Դ։

(92) անդէն, Դ Դ։

(93) եցոյց իմ աղքատութեանս, Բ։

(94) մանաւանդ, Զունի, Ա Բ Ե։

(95) սնարանութեան բանիւք, Դ. արաքանութենէ բանից, Բ։

(96) ընթերցուածոց, Զունի, Դ։

(97) զտառս և, Զունի, Բ Գ Դ։

(98) լուարուք, Դ. ընդաւառք, Դ։

(99) և մեացէք, Զունի, Բ Գ Դ։

(100) Արդ որք հաւատով և արգարութեամբ, Բ. Արդ որք հաւատով, Դ. որք հաւատով և մարգարութեամբ, Դ։

(101) զինչ և խնդրեացեն յանուն Տեառն, Դ։

(102) խնդրուածովք, Զունի, ԱԵ։

(103) զխոստացեալ, Զունի, Բ Գ Դ։

(104) զերանութիւնն ընդ ուղղափառսն ըստ անստա խոստման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից ամէն, Բ. ընդ ուղղափառսն՝ որ անդուստ խոստումն է ի Ք. Յ. ի Տէր մեր՝ որում փառք յաւիտեանս, Դ։



## ՕՇԱԿԱՆԻ ԱՆՏԻՊՆԵՐԷՆ

## ՆԱՐԵԿ

•

4<sup>0</sup>. ՇԱՀԵԿԱՆՈՒԹԻԻՆ: Նարեկացիին ձեռք բերել անգամ կը դադարի շահեկան մնալէ: Եթէ մտածումներու միօրինակութիւնը, նոյն զգացումներու նոյնակերպ կրկնութիւնը շատ բան կը խորտակեն գիրքին արժէքէն, բայց չեն կրնար մեղանտարբեր ձգել: Վասնզի այս ամէնը, — այսինքն մտածում ու զգայնութեան ստորուած — կը պաշտպանուին մէկէ աւելի առաքինութիւններով: Երբեմն մարդ կը տարուի միակ վիճակ մը տեսանելի ընկելու համար կանչուած պատկերներուն, բացատրութիւններուն անսպառ բերումով: Երբեմն հոմանիշներուն անհուն ու ընկճող տեղատարափը կ'երկնայ ու կ'երկնայ առանց որ ձանձրոյթը կամ տափակութիւնը հետեւի այս շափազանցութեան, վասնզի իւրաքանչիւր օղակ, կամ կաթիլ ինքնիր մէջ արժէք մըն է և կամ յաւելում մը նրբրանգի: Յետոյ անհատականութեան շատ զօրաւոր շեշտ մը բոլոր այս գիծերը կը ասղանցէ, բոլոր այս շերտերը, ճակատները կը թափանցէ ու ամենէն աննշան անկիւններուն իսկ կը հաղորդէ բարախուն ու արիւնտ բան մը, համ մը, գործը ընկելով խռովիչ, յուզիչ ու շահեկան:

Եթէ պէտք ըլլայ ճիշդ տարազներ փնտռել, որոնք այս ազօթքներուն այսպէս ցոյց տրուած շահեկանութիւնը բացատրել ջանային, դժուարութիւնը պիտի ունենայինք ընտրութեան: Վասնզի հակառակ իր շատ զօրաւոր անհատական շեշտին, անոր ազօթքները որոշ մարդու, այսինչ ժողովուրդին, այսինչ օրջանին արտայայտութիւնը չեն ներկայանար անմիջական ձևով մը: Անոնք դուրս են ժամանակէն, որ աննպաստ պիտի ըլլար ու գիրքը պիտի զետեղէր շատ պզտիկ սահմանի մը մէջ: Անոնք դուրս են դարձեալ միջոցէն, քանի որ իր ազգին ընդգդայութիւններէն, զգայնութիւններէն, մտայնութիւնէն շատ քիչ բան կը

խտացնեն: Ուրկէ՞ ուրեմն այդ շահեկանութիւնը:

Ինծի կուզայ թէ պէտք է այս պարագան վերագրել գրողէս իր տուրքերուն: Իր ընտրած նիւթը ինքնին խորագէտ լայն՝ ունի բոլոր աստիճանները տեւական շահագրգռութեան մը: Ի՞նչ է իր գիրքը եթէ ոչ ճամբայ մը դէպի մեծ երանութիւն մը, ճամբայ որ կ'անցնի խորխորատներէն ու երեւակայելի բոլոր տառապանքներէն հասնելու համար լոյսի մեծ աւազանին: Ո՞վ է մարդը որ շտապնուցեալ այս ճամբորդութեամբ, Ու մանաւանդ մի մոռնաք Միջին դարը և 1000-ական թուականներուն մասնակի շահեկանութիւնը:

Փոխադրեցէք խորքի այս շահեկանութիւնը իր ոճին մէջ, ու բաւական բան բացատրած կ'ըլլաք:

5<sup>0</sup>. ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹԻԻՆ: Հակառակ բոլոր դժուարութիւններուն, հեղինակին կողմէ այնքան մեղանշումներուն, Նարեկացիին ոճը ունի հաղորդականութիւն, իմաստի հասկացողութեան անկախաբար, մեր ժողովուրդը կը համակրի այդ գիրքին: Ես պզտիկ եղած օրերուս գլուխներ կը յիշեմ կարգացած ըլլալ տարաբախտ հիւզակներուն խորը, երբ խսիրին վրայ հիւանդ մը երկարած է աչքերը բաց կամ գոց: Ու հիմա կը վերաշինեմ վիճակը որ ընթերցումը կը ստեղծէր այն ատեն: Ու բառերը որոնք կ'ըլլէին իմ բերնէն, մարմինի կը նմանէին: Ու անոնք նոյնպէս կը տպուորէին հիւանդը շրջապատողները: Ու յոգնութիւն ու սարսուռ կը բռնէր իմ բոլոր մարմինը: Այս ամէնը գիրքին խորհուրդին հետ մեր ժողովուրդին դարեւոր ընտանութեամբ կը կապուին:

Հիմա անոր ընթերցումը կը համակէ զիս ուրիշ պատճառներով: Ու ինծի հետ բոլոր կարգացողները՝ որոնք խորհուրդէն պարպելով հանդերձ այդ տողերը տակաւին կը գտնեն անոր մէջ

Նորուրիւն: Եկեղեցական մատենագրութեան մէջ աւանդականը, ընդունուածը, խելօքը հասարակաց առաքինութիւններ են: Գրողէսը ամէն բանէ առաջ



պաշտօն ունի ոչ թէ զարմացնելու, այլ համոզելու: Ու այս գլխաւոր ձգտումն է որ եկեղեցւոյ հայրերուն այնքան միջակ ու անմոլ գրականութիւնը կը շինէ: Նաբեկացին խղղուած է անշուշտ այս տափակութեան ալիքովը: Բայց անիկա յաճախ գիտէ շարժումը որ ինքզինքը կ'ազատագրէ: Ու անոր իբր հետեանք սճին մէջ երեան կուգան այդ փայլակները, արտակարգ յանդգնութիւնները, բոլորովին անտիպ բառերն ու աստիճանները, պատկերներն ու փոխաբերութիւնները, որոնք կը տպաւորեն մանաւանդ արուեստագէտ խառնուածքները:

Յանդգնութեան այս աստիճանը ոչ մէկը փորձած է իրմէն առաջ: Ու իրմէն վերջը մինչև նորերը պէտք է հասնիլ, հանդիպելու համար բառերու ներքին արժէքներէն այնքան բան հասկցող դէմքի մը:

60. ԿԵՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Շատ քիչ բան կը գատէ Նարեկի ոճը չափուած բարբառէն: Արդէն շատ մը տեղեր ինքնիրեն ոճը կը վերածուի տաղաչափութեան: Գիտակից թէ բնագրական: Երկու պարագան ալ կրնանք ընդունիլ բայց բացառութեամբ չենք ըլլար այդ տարօրինակ կշռականութիւնը որ իր նմանը չունի մեր գրականութեան մէջ:

Անոր տողերը, անհուն զանազանութեամբ, կ'երկնան, թաւալուն ու աճող յառաջատուութեամբ մը, որպէսզի տարազն մտածումը կամ պատկերը երբ ասանք իրենք իրենց համար ունին խճող ու իրերանցիկ նկարագիր: Անոր տողերը կտոր կտոր կը փառին երբ միակ պատկեր մը, կամ մեծ մտածում մը կը զգեստեն գրողը և կ'ողողեն զայն իրենց կայծակներուն անսպառ աղբերացումովը: Բանաստեղծը կը զարնէ ու կը զարնէ իր սկիի մուրճը ու աղամանդ կոյտը զգացումին՝ հրաշքով կարծես կ'աճի: Այս ձև յօրինումներուն առջև Նարեկացիին ոճը աշխատանքին, նիւթական ճիգին հեքը ունի ու այդ հեքը կ'ըլլայ շատ յատկանշական կշռութիւն մը: (Ուրիշներ ուղած են մարմնական ճօճումներու անդրադարձ մը ընդունիլ այդ չափը բացատրելու համար):

Յետոյ պէտք է խորհիլ երրորդական մտանդաբանութեան մէջ շատ յարգի գրա-

կան ուրիշ կեանքեան մը (parallélisme) զուգակեանականութիւն ըստած ձևին:

Ծանօթ. — (Իր տաղաչափեալ լերնամոնեւուն մէջ կայ մասնաւոր եղանակ մը որուն կը հանդիպինք աշուղներու, մասնաւորաբար Քույակին մէջ: Կրկնել վերջացող տունի մը վերջին տողը՝ սկսող տունի մը վրայ: Ասիկա շարժումը փոխադրելու ճարտար ձև մըն է, որմէ ձայնական զեղեցիկ արդիւններ կարելի է ստանալ: Նորեւուն մէջ Միսաֆ Մեծարեց փորձած է ևս յաջողած):

70. ԶԱՅՆԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ: Երաժշտական շեշտ հասկացողութիւն մը, աւելի ճիշդ ճաշակ մը, Նարեկացիին կ'առաջնորդէ իր Ֆրագին բոլոր ծաղկածուկերէն: Ինչ որ ալ ընէ, անիկա չի կրնար ազատիլ ձայներու թելադրած համաձայնութիւնէն: Նոյն այդ պէտքին ծնունդ են բոլոր իր ածանցումները, բարդութիւնները, որոնց յանդգնութիւնը վար չի մնար յղացումներու, փոխաբերութիւններու համար գործածուածէն:

Քերթումներու մէջ բառեր, այսինքն ձայներ կը մանեն որոնք իմաստին հետ չունեցած աղբերակ մը նշանաւոր են: Ժողովրդական յօրինումի այս եղանակները անոր տողերուն մէջ յանկարծ կը ցցուին ու մեր աշուղներուն երգերը և գանձերը կը նետեն քանի մը դար աւելի հտ:

Ձևի այս ամփոփ վերլուծումը Նարեկացիին գործը կը դնէ նոր, անկապտելի փառքի մը լուսապսակին տակ:

10. Անիկա ձևն է շատ մեծ գրողէտի մը որ զօրաւոր զգայութիւններ ունեցաւ, բայց որուն մտածող մեքենան անկարող եղաւ այդ զգայութիւնները իմացական ինքնատիպ գրութեան մը տանելու:

20. Անիկա ձևն է շատ զօրաւոր արուեստագէտի մը որ ականջի բացառիկ զգայութիւններ ունեցաւ և ասանց արտայայտութեան համար չվարանցաւ նետուիլ յանդգնութիւններու, բանադրօսիկ կերպերուն, թանձրացնող սխալներու մէջ:

30. Անիկա ձևն է վերջապէս բանաստեղծի մը որ զգայութեան և երեակայութեան զօրաւոր ճնշումին տակ չի նեց իր Ֆրագը պակասաւոր, խենթ, բայց յարգ, բայց գիւտով և կայծակով թրթրուն:



Գ.

Ձ Գ Ա Յ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Տարրեր. —

- 1<sup>0</sup>. Երեւակայութիւն
- 2<sup>0</sup>. Միսթիքականութիւն
- 3<sup>0</sup>. Իրապաշտութիւն
- 4<sup>0</sup>. Յեղաշին գիծեր
- 5<sup>0</sup>. Միջին դար և ընդհանրականութիւն:

1<sup>0</sup>. ԵՐԵԻԱԿԱՅՈՒԹԻԻՆ: Բացարձակ (flamboyant) է անոր առաջին վերագիրը, որ հասարակաց է բոլոր ճեսպնով-ճետուն: Անիկա իրերը չի կրնար ընդունիլ իրմէն ներս, առանց անոնց յօրինումութիւնը եղծելու: Իր ճանաչումը կը փռէ անոնց վրայ: Յետոյ, գոհացում չունի: Իրերուն տուածը կը զարգացնէ, կը ստուարացնէ, տանելով զանոնք իրենց անդրադոյն կարելիութեանց: Այս յատկութիւնը՝ անոնց չի նկէ կուտայ դժոխքներ կամ արքայութիւններ: Նոյն ուժն է որ բարոյական ըմբռնումները նիւթական զգայնութիւններու կը վերածէ ու միտքն ու մեղքերը տեսանելի առարկաներու և էականերու ձևով կը տեսնէ:

Նարեկացիին երեւակայութիւնը յոգնիլ չի գիտեր: Ընդհակառակը շատ կ'ախորժի դիմանալէ, պայմանով որ ամբողջական պարագրիում չունենայ կատարելիք: Նման պարագաներու համար կը տկարանայ անիկա: Բայց մասեր, հատուածներ, երանգներ գտնելու և գիգելու աշխատանքին համար անիկա սպառում չունի:

Նարեկին մէջ վիճակներու, տարումներու, գուշակութիւններու էջեր կան, որոնք կը տպւորեն իրենց այդ պզտիկ գիծերով կազմուած կցկտուր բայց պճուրտուն կողմերով: Յետոյ այդ երեւակայութիւնը օգտակար եղած է մանաւանդ ձեւի ստեղծումներուն: Անկէ կը մեկնին Նարեկացիին բացատրական բոլոր գիտերը, պատկերները, փոխարեութիւնները, տկարկութիւնները և նմանութիւնները:

2<sup>0</sup>. ՄԻՍԹԻԲԱԿԱՆՈՒԹԻԻՆ: Խորքի ուսումնասիրութեան մէջ խօսուած է արդէն այս մասին: Հոս հարցը կը ներկայանայ իբրեւ խառնուածքի մաս: Ու այդ լոյսով, մենք կը տեսնենք աւելի գործօն, գործնական նկարագիր մը քան հանդարտ,

երկնահայեցողութեան մէջ պշտեցեալ մարդու մը պատկերը:

Նարեկացին մշտաբար քննարկէր և գերազուած երեւակայութիւն մը ունի: Իր գործին մէջ չենք հանդիպիր հոգեբանական դրուագի մը որ հետեանք ըլլար միսթիք ընկղմումին:

3<sup>0</sup>. ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՆ: Հակառակ սարսափի զգայնութեանց առատութեան, սատանաներու խառնումին, գիրքը կտրուած չէ իրականութենէն: Այնքան ճիշդ է որ առարկայէն աւելի ձեն է որ կը ճշդէ գիրքերուն ճակատագիրը: Տանթէի բոլոր յղացումները կը կապուին իրականութեան:

Նարեկացի անապատական խմորէն զուրկ գրագէտ մըն է: Անիկա չէ կլլուած երկինքին անդոհանքէն: Ինչպէս չէ խորտակուած մեղքին լեռնացող ճնշումէն:

Միւս կողմէն գործնական բարոյախօսութեան քիչ մը նեղ սկզբունքներ չեն խաթարեր իր ներքին մտահոգութիւնները:

Ու կ'ունենանք գիրքը ուր խորքի այս հէնքերուն վրայ ձեւին թելերը կը նետուին ու կը ստեղծուի ոճը՝ որ հակառակ իր բոլոր թռիչներուն կը մնայ իրական:

Ծանօթ. — (Արուեսի Տեսութիւնով մը չե որ զործածուած և հոս քաջաբար խելը: Նիւր, շրջան, պայմաններ, գրողի սնունդ, բոլորը կը միանան որպէսզի զիրք կրնի իրականութենէն ու երազի կջ մը դառնայ: Բայց ամենն ալ կը յաղթուի գրագիտին քեցիկին, արուեսի ըմբռնումին, քերես երեւակայութեան ձեւին):

4<sup>0</sup>. ՏԵՂԱՅԻՆ ԳԻԾ: Այս իրապաշտութիւնը գիտակցուած, գրագէտի դաւանութեամբ արմատաւոր երեւոյթ մը չէ Նարեկացիին գործին մէջ: Դուք քիչ տարբեր պիտի գտնէք այդ հարիւրի մօտ աղօթքներուն մէջ, որոնք ցեղ մը, անոր մէկ պահը, անոր զգայնութեան քանի մը մեծ գիծերը սեւեռած ըլլային:

Նարեկը իբր յղացում քիչ բան ունի հայկական: Ու ասիկա մեղադրանք մըն է Նարեկացիին պէս գրագէտի մը գէմ, երբ անդին գիտենք թէ նոյն այդ զգացումը, այսինքն կրօնական զգացումը մեր մէջ երեւան կը բերէ գոնէ արտայայտութեան նոր երեսներ: (Շարականները և քանի մը աղօթքներ օտար չեն ազգային գոյնին):



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՏԻՈԿՈՄԻՏԷԻ ԹՂԹԱԿՅԻ ՀԵՏ

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԻՐ ԶՈՐՐՈՐԴ ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

Հ-ր-ը. — Վեհափառ Հայրապետ, թոյլ տուէ՛ք Սովետական Հայաստանի ռաաիո-կոմիտէի անունից Ձեզ մաղթել բարի վե-րադարձ Մայր Հայրենիք և Ս. Էջմիա-ծին: Ձեր երկար ճանապարհորդութեան ընթացքին թէև մենք հետեցինք Ձեր գործունէութեան և այդ մասին հաղորդե-ցինք մեր ռաաիոյ ունկնդիրներին, սա-կայն չաա հաճելի պիտի լինէր մեզ հա-մար, եթէ բարի լինէիք Ձեր կենդանի խօսքով պատմել մեր ունկնդիրներին Ձեր ուղեորութեան և Ձեր ապաւորութիւն-ների մասին:

Պ-ր-ը. — Մեր այս չորրորդ ուղե-ւորութիւնը արաասահման տեւեց աւելի քան երկու ամիս, այսինքն Հոկտեմբեր 7էն մինչև Դեկտեմբեր 17, չհաշուած այն օրերը, որ անցուցինք Մոսկուայի մէջ, մեկնումի և վերադարձի առթիւ: Սոյն ճանապարհորդութեան ընթացքին օդային գծով մենք կարեցինք աւելի քան 30,000 քիլոմէթր ճամբայ, այցելելով Անգլիա, Յորդանան, Եգիպտոս և Հնդկաստան:

Բոլոր այս երկիրները մենք տարինք կենարար ողջոյն և օրհնութիւն մեր հաւատքի բազմադարեան կեդրոն Մայր

Ձկայ անոր գիրքին մէջ մեր ժողո-վուրդը, եթէ ոչ ուղղակի, գոնէ կազմակի իրականութեամբ մը: Ազօթքի այդ ընդ-հանրականութիւնը չէ պատճառը այս առգունութեան: Հռոմէական բարսյա-խօսներու գրիչին տակ թափանցողները երեան կրնան հանել ապրելու ու զգալու հղանակներ: Յունական աստուածաբանու-թիւնը թելեր ունի որոնք մինչև փիլի-սոփաները կ'իջնեն:

Բացի բուն, արագ գրգռումէն, որ մեր ցեղին կարեւոր գիծերէն մէկն է, և որ այդ աղօթքներուն մէջ ամենէն աւելի յաճախուած պարպումի ձև մըն է, դժ-ուար է հանդիպիլ ուրիշ տարրերու, մեր նկարագիրը յատկանշող երկպառակու-թեան, անիշխանականութեան, ասորնու-թեան, արհամարհաա ըմբոստութեան, ի-րերադիտութեան ու դասական մեղքերուն որոնք քաւութեանը համար հազարամ-եակներ բաւ չհղան:

Մանօր. — Մեր գրականութիւնը ընդհա-րակա աղիս է այս կարգի տալիներով: Բայց պատկիներուն զործին ի հնանկա իրենց կր-նակ բարձրանալ քանի մը երակացութիւններու:

Յ՞. Միջին ԴԱՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆՈՒ-թիւն: Մեր Միջնադարը իբր բարսյական

բարեխառնութիւն, իբր ճնշում (pression) դարձեալ ենթակայ չէ եղած լուրջ, վըճ-աական սեւեռումներու:

Դուք պարապ տեղը պիտի աշխատիք նիւթի կապել այդ ծփուն զգացումները որոնք աւելի չաա դիրքերէն կը փախչին քան թէ մարդերէն կը ցրուին՝ գալ, թափելու համար առածը անհամեմատ խո-չարցնող հայելիի մը ծային:

Դասական գրագէտները ճիշդ է որ չեն տխարժիր մասնաւորներէ, քիչ մը չաա մասնաղ ցուցումներէ: Բայց ասոր փո-խարէն ընդհանրական լարերու վրայ իրենց հարուածները վճռական գործա-դրութիւններ կ'ընեն: Այնպէս որ Նարե-կացիի գիտակցութիւնէն դէպի ընդհանուր մարդկութիւն ճաադայթում մը դարձ-եալ անբաւական է գործին մէջ: Մնաց որ իր անձին զերադրումը, զայն քանի քանի անգամ յանձնարարելը, զայն մեղքերու տաղմուտքին տակ ծակծկելէ հաքը, Աս-տուծով լուալու արբշտանքէն հաքը, մարդերու միջինին իբր միջնարդ ընծայե-լու իր միամտութիւնը հակառակէն փաստ կը բերեն:

Յ. ՕՇԱԿԱՆ

(Մնացեալը-յաջորդիւ՝ 4)



Աթոռ Ս. Էջմիածնէն և մեր վերածնած Մայր Հայրենիքէն: Իրօք, նաև այս անգամ, արտասահման ապրող Հայ ժողովուրդը, ժմէն տեղ ուր մենք գտնուեցանք, անսահման հրճուանքով և ցնծութեան ազդակներով ընդունեց այդ կենարար օրհնութիւնը, որ մեր միջոցով իրենց կը բաշխուէր և լսեց մեր խօսքը նոյն ոգևորութեամբ ի մասին Մայր Աթոռիս հոգեւոր, կրթական և շինարարական կեանքի յառաջդիմութեան, ինչպէս և մեր Մայր Հայրենիքի վերաշինութեան և ծաղկման:

Անգամ մը ևս մենք զգացինք և խորապէս մխիթարուեցանք տեսնելով, թէ Սփիւռքի հայութիւնը ինչքա՞ն հարազատութեամբ և քերականութեամբ կը սիրէ իր պապերու Ս. Երկիրը՝ Հայաստան և իր կրօնական հաւատքի Սրբութիւն Սրբօցը՝ Ս. Էջմիածինը:

Ամէն տեղ նոյն հայը, նոյն հաւատաւոր և հայրենակարօտ պանդուխտ հայը, որ չի կրնար իր արցունքը զսպել, երբ կը խօսուի իրեն Արարատի, Մայր Հայաստանի և Ս. Էջմիածնի մասին:

Մենք պիտի ոգեկոչենք միայն մէկ դրուագ, արտայայտութիւնը անմեղունակ աղջնակի մը, որ գուցէ լաւագոյնս կը բնորոշէ արտասահմանի հայութեան ապրումը Հայրապետական այցելութեան տալիս: Այդ պատահեցաւ Աղեքսանդրիտ: Մեր այցելութեան նախորդող օրը, Մելքոնեան Մանկապարտէզի գոտարարակէսէն կը խօսի իր աշակերտներուն, յայտնելով, թէ յաջորդ օրը Հայոց Հայրապետ իրենց մօտ պիտի գայ այցելութեան: Հինգ տարեկան աղջնակը, դուստրը Աղեքսանդրիտ չափ ծանօթ ազգայիններէն մէկուն, երբ տուն կը վերադառնայ, կը վազէ մօրը մօտ և բորբոքածայն կը բացագանչէ. «Մամա, վաղը Հայաստանը մեր գպրոցը պիտի գայ»:

Ամէն տեղ ուր մենք եղանք, բազմահազար հայեր, բոլորը անխտիր, երազող քաղցր տէքերով և բաբախուն սրտով կը խնդրէին մեզմէ, որ մեր վերադարձին իրենց հարազատ սիրոյ և հաւատարմութեան աղջոյնը բերենք հայոց մայր հողին և Ս. Էջմիածին, մայրաքաղաք Ե-

րևանին և խաղաղութեան մէջ ապրող ու աճող իրենց Հայաստանի քոյրերուն և եղբայրներուն:

Համաձայն մեր ծրագրին, նախ այցելեցինք Լոնտոնի հայոց եկեղեցին և համայնքը, ուր այժմ կ'ապրին աւելի քան 3000 հայեր:

Լոնտոնի մէջ չափ հաճելի եղաւ մեզի հանդիպել Անկլիքան եկեղեցւոյ Պետ, Քէնթըրպերի Արքեպիսկոպոս Գերաշնորհ Տաթթ. Մայքլ Ռեմդիին, որ ամբողջ աշխարհի մէջ հոգեւոր բարձր հեղինակութիւն վայելող եկեղեցական մեծ դէմք մըն է, քերականութեամբ հայ եկեղեցիին և Ս. Էջմիածնին:

Սուրբ Քաղաք Երուսաղէմ այցելութեան եր մօրերը մեզի պարգևեցին հոգեկան անփոխարինելի մխիթարութեան պահեր, վասնզի մենք գրեթէ ժմէն օր նոր Սրբավայր մը տեսանք և քերած հանդիպումներ ունեցանք բարձրաստիճան հոգեւորականներու, կրօնական հաստատութեանց և պետական բարձր պաշտօնատարներու հետ: Բացառիկ գոհունակութիւն պատճառեց մեզի մեր այցելութիւնը Ամմանի արքայական պալատ և մեր զրոյցը Նորին Վերափառութիւն Հիւսէյն Թագաւորին հետ, որ երիտասարդ, իրապէս իմաստուն, լուսամիտ և քաջակորով վերապահ մըն է, բարեխնամ բազուկը և պաշտպանը Ս. Տեղեաց, Հայոց Պատրիարքութեան և Յորդանանի հայ ժողովուրդին:

Մենք ուրախ եղանք նաև Ս. Քաղաքին մէջ անձամբ ճանչնալու և հանդիպումներ ունենալու Երուսաղէմի Յունաց Ամենապատիւ Պատրիարք Բենեդիկտոսի հետ, որ մեր օրերու եկեղեցական պետերու շարքին բացառիկ տեղ մը կը զբաւէ: Մենք ուրախութեամբ մեր օրհնութիւնը տարինք նաև Երուսաղէմի Յորանչիսկեան Միաբանութեան և Ապոսոց, Ասորւոց, Եթովպացւոց և Անկլիքան եկեղեցիներուն և հոգեւորականութեան:

Երուսաղէմի Հայոց վանքին մէջ վանեկեցիներ մահնադարձային հիւրասիրութիւնը եղիչէ Սրբազան Պատրիարքին և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Նսրին Ամենապատուութիւնը ոչ ինչ խնայեց, որպէսզի մեր այցելութիւնը



մնայ միշտ իր բարձրագոյն մակարդակին վրայ, զառնայ արգիւնաւէտ և մնայ յիշատակութեան արժանի գալիք ժամանակներուն համար: Այս առթիւ Մենք անգամ մը ևս մեր ջերմագին գոհունակութիւնը և շնորհակալութիւնը կը յայտնենք Մեր սիրեցեալ հղբօրը՝ Եղիշէ Սըրբազան Պատրիարքին և խորապէս կը հաւատանք, թէ մեր սոյն պատմական այցելութեամբ, սերտ և շինարար դորձակցութեան նոր սկիզբ մը հաստատուեցաւ Մայր Աթոռիս և Երուսաղէմի Հայոց Առաքելական Ս. Աթոռին միջև:

Երուսաղէմի մէջ մենք նախագահեցինք Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան Համազգային Յանձնաժողովի նիստերուն, որոնց արգիւնքը հղաւ ամբողջապէս դրական:

Ս. Քաղաք մեր այցելութիւնը ուրախութեան աղբիւր հանդիսացաւ նաև այլ տեսակէտով: Այնտեղէն, հղբայրական հրաւէր ուղղեցինք Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալին և երջանիկ հղանք, երբ Հոկտեմբեր 26-ին Նորին Սրբութիւն Խորէն Ծննդնադարդ Կաթողիկոսը պատասխանելով մեր հրաւէրին, մեծ շքախումբով մը Անթիլիոսէն Երուսաղէմ ժամանեց: Մեր երկուքի հղբայրական սիրոյ սղջագոյնումով և փոխադարձ համաձայնութեամբ, վերջ դառն 1956-էն ի վեր ծայր տուած անհասկացողութիւնները, վերահաստատուեցան բարեկամական և հոգևոր գործակցութեան կապերը մեր նուիրապետական բոլոր Աթոռներու միջև, նոր էջ մը բացուեցաւ մեր եկեղեցական-ազգային կեանքի մէջ, որու վրայ մենք հաւատացած ենք, թէ հեղհեղէ պիտի արձանագրուին մեր բոլորի միասնական ճիգերով ձեռք բերուած եկեղեցաշէն ու ազգանուէր դորձերը:

Այսօր, Մեր երկար ճանապարհորդութենէն վերադարձին, մենք անգամ մը ևս կը յայտնենք մեր հաստատ համոզումը, թէ մենք և մեր սիրեցեալ հղբայրը Խորէն Կաթողիկոս, արթուն կերպով պիտի հսկենք, որպէսզի Հոկտեմբեր 26-ի ոգին ամբապէս արժատանայ մեր եկեղեցական ու ազգային կեանքէն ներս և դառնայ կենսաբեր ու պողոտա:

Մեր ուղևորութեան երրորդ հանգըրուանը հղաւ մեր այցելութիւնը Գահիրէ և Աղեքսանդրիա, ուր կ'ապրին մօտ 40,000 հայեր:

Այնտեղ, բացի կրօնական արարողութիւններէ, մենք և մեր ուղեկիցները յաճախ առիթը ունեցանք գտնուելու մեր ժողովուրդին հետ, մշակութային միութեանց սրահներուն մէջ, երբ մեր կենդանի խօսքով և պատգամներով կամեցանք հոգեպէս զօրացնել ու ջերմացնել մեր հաւատացեալներու սրտերը, որպէսզի անոնք հաստատ ու անշարժ մնան իրենց կրօնական հաւատքի վէմին վրայ և մնան հաւատարիմ հայ ազգային ու հայրենասիրական լուսաւոր աւանդութիւններուն: Մշակութային զանազան դահլիճներուն մէջ դասախօսելու համար հրաւիրուեցաւ մեր շքախումբի անդամ ճարտարապետ Միքայէլ Մաղմանեան, որ հայ ճարտարապետութեան և հայրենի վերաշինութեան նուիրուած իր հմուտ դասախօսութիւններով մեծ հետաքրքրութիւն և ոգևորութիւն ստեղծեց ամենուրեք: Ժողովուրդի մէջ մեծ խանդավառութիւն առաջացուց նաև «Էջմիածին» ֆիլմի ցուցադրութիւնը թէ՛ Լոստան, թէ՛ Երուսաղէմ, Եգիպտոս և թէ՛ հետազոյին Հնդկաստան:

Նոյեմբեր 15-ին Եգիպտոսէն ուղևորուեցանք Հնդկաստան: Սոյն ճանապարհորդութեան, բարի հղաւ մեզի ընկերանալու Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արքեպիսկոպոս, որ հրաշալիօրէն լրացուց և ամբողջացուց մեր առաքելութիւնը ի Հնդկաց աշխարհ, իր թանկագին գործակցութիւնը ընծայելով մեզի բոլոր առիթներով:

Նախ հղանք Տելի, ուր այցելեցինք Հնդկաստանի Հանրապետութեան Նախագահ Վախաշուք Տաթթ. Ռաոհա Քրիշնային, մեծանուն Վարչապետ Ճառանարուլ Ներսուրին և այլ պետական անձանց:

Երեք օր Տելի մնալէ յետոյ, Մատրասի վրայով մեկնեցանք դէպի Բոմբայում, կեդրոնը հնդիկ քրիստոնեայ Մալապար եկեղեցիին: Հնդկաստան կ'այցելէինք յատուկ հրաւէրով՝ ձերուհագորդ Պասիլիոս Բ. Սըրազան Կաթողի-



կոսին, զերազոյն պետք Մալապար Եկեղեցիին, որու իշխանութեան ներքե կը գտնուին մօտ մէկ և կէս միլիոն հնդկի քրիստոնեաներ, ուղղափառ միաբնակներ: Այցելեցինք իրենց ութը թեմական կեդրոնները, եկեղեցիներ և վանքեր, և ամենուրեք հանդիպեցանք բազմահազար հնդկի քրիստոնեայ հաւատացեալներու, որոնք արտասովոր ցնծութեամբ կը դիմաւորէին և կ'ողջունէին Մեզ, անվերջանալի հանդիսուար թափօրներ կազմած, նաւագախումբերով, ծաղկազարդ կամարներով և երբեմն նոյնիսկ փիղերով և զիշերային հրալուսութեամբ: Քոթթայամի մէջ հարկ եղաւ, որ մենք պատարագենք և քարոզենք բացօդեայ, 15,000 քրիստոնեայ հնդիկներու ներկայութեան:

Նորին Սրբութիւն Պատիլիս Բ. Կաթողիկոսի հետ ունեցանք յատուկ խորհրդակցութիւններ, որով առաւել ամբապնդեցինք մեր երկու դաւանակից եկեղեցիներու կապերը և միասնաբար փոփոք յայտնեցինք աշխատանք տանիլ, որպէսզի մեր եկեղեցիները և մեզի դաւանակից միւս եկեղեցիները՝ Ասորական, Եթովպական և Ղպտաց, առաւել իրարու մօտենանք, առաւել իրարու հետ աշխատակցինք միջեկեղեցական գործունէութեան գետնի վրայ:

Այցելեցինք նաեւ Հնդկաստանի հայ եկեղեցական համայնքները՝ Մաթրոս, Պամպէյ և Կալկաթա: Հայկական հին կեդրոններ, փառաւոր անցեալով և յաւաքածաններով և նուիրական գերեզմաններով:

Այսօր գոլկի աշխատանք կը տանին Կալկաթայի և Պամպէյի եկեղեցական վարչութիւնները և Հայկական Միութիւնը: Մեծապէս գնահատելի է Կալկաթայի Մարգարտիական ծննդարանի գոյութիւնը և անոր տարած աշխատանքը, ուր հայեցի դաստիարակութիւն և միջնակարգ ուսում կը ստանան շուրջ 140 երկսեռ աշակերտներ, շատերը եկած Պարսկաստանէն և Միջին Արեւելքէն:

Վստահ ենք, թէ Ս. Էջմիածնէն մեր տարած օրհնութիւնը և վերածնած Մայր Հայրենիքի կենդանի իրողանութիւնն ու ծաղկումը, հոգեկան տմուր պատուանդաններ և կեանքի ազրիւրներ կը հանդիսանան նաեւ հնդկահայ պատուական ժողովուրդին համար:

Ամփոփելով մեր խօսքը և եզրակացնելով, կրնանք վկայել, թէ սոյն Հայրապետական ուղեորութիւնը արտասոյսման, ունեցաւ հետեւեալ դրական արդիւնքները:

Ս. Էջմիածնի աստուածային օրհնութեամբ, անգամ մը ևս մխիթարուեցաւ և հոգեպէս զօրացաւ Սփիւռքի հայութիւնը:

Վերահաստատուեցաւ Հայ Եկեղեցւոյ միասնականութիւնը, որով առաւել ամբապնդուեցաւ և խողաղեցաւ Սփիւռքի հայութեան եկեղեցական-ազգային կեանքը և նոր, լուսուար հեռանկարներ բացուեցան հայապահպանման նուիրական գործի աւելի յաջող կազմակերպման համար միացեալ ճիգերով:

Լիակատար յաջողութեամբ պատկուեցաւ Երուսաղէմի Ս. Գարութեան պատմական Տաճարի վերանորոգութեան գործը:

Առաւել ամբապնդուեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ եղբայրական կապերը Անկլիքան Եկեղեցւոյ, Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ և Մալապարի Հնդկի Քրիստոնեայ Եկեղեցւոյ հետ:

Եւ վերջապէս, մեր ուղեորութիւնը նպաստ մը հանդիսացաւ աշխարհի խողաղութեան և ժողովուրդներու բարեկամութեան համար մղուող մարդասիրական պայքարի ճանապարհի վրայ:

Մենք այս անգամ ալ կը վերադառնանք Մայր Աթոռ խորապէս մխիթարուած ու լուսատես դէպի Հայ Եկեղեցիին և Հայ ժողովուրդին ապագան:

Այստեղ, Հայրենի երկրի մէջ, Ս. Էջմիածնի կամարներուն ներքե, մեր սփռած սուր հոգը ամուր է և ապահով, մեր կեանքը խողաղ է և յառաջընթաց, իսկ այնտեղ, Սփիւռքի մէջ, հայութեան հոգին առողջ է և կենդանի, վառ ամէն տեղ մեր սուրբ հաւատքը և մեր մշակոյթի լուսեղէն ջահը:

Թող Աստուած օրհնէ մեր Եկեղեցին, մեր նուիրապետական Աթոռները և համայն մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի Սփիւռս աշխարհի, և պահէ ու պահանէ զանոնք խողաղութեան և բարօրութեան մէջ, այժմ և յաւիտեան: Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐԷ ԵՒ ԿԱՌՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՂԱՅՈՑ

28 Դեկտեմբեր 1963

ԷՋՄԻԱԾՆ



## ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՅՐԻԱՐԲ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20 Դեկտեմբեր 1963

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ

Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻՆ,  
ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍ ԼՂԼՄԻ,

Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Քրիստոսի Սուրբ Ծննդեան աւետիսով կը շնորհաւորենք Ձերդ Սմենապատուութիւնը եւ Սուրբ Էջմիածնէն կը յղենք Հայրապետական Մեր օրհնութիւնը Ս. Աթոռիդ յարգարժան Միաբանութեան, բոլոր խորհուրդներուն, ինչպէս նաեւ համայն Ձեր հաւատացեալ հօտին:

Խաղաղութեան եւ ի մարդիկ հաճութեան երկնային պատգամը թող մեր օրերուն ալ լուսաւորէ մարդկանց աշխարհը, եւ ժողովուրդներ ու պետութիւններ թող միասին ողջունեն զալուստը «խաղաղութեան արեգակին» որ գերագոյն նուէրն է համայն մարդկութեան:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

«Սէր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ: Ամէն»:

ԿՆԻՔ

Հայրապետական

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՑ  
ԱՆԹԻՒԼԻԱՍ — ԼԻԲԱՆՈՆ

Անքիլիա, 4 Յունուար 1964

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպ. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Մեր Տիրոջ Ա. Ծննդեան Տօնին առիթով, Ձերդ Ամեն. եղբայրութեան, Սրբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութեան եւ ժողովուրդին կը ներկայացնենք մեր սրտազին եւ ջերմ շնորհաւորութիւնները, աղօթելով առ

Աստուած որ յարսնուն բարգաւաճութեան մեզ պահէ Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը, անոր Ամեն. Պատրիարքին շնորհելով արեւուս ու երկար կեանք եւ բարի գործերու յաջողութիւն:

Կ'աղօթենք նոյնպէս որ Մանկացեալ Փրկիչը Իր աստուածային խաղաղութիւնը պարզեւ աշխարհի եւ մարդոց խռովեալ հոգիներուն:

Նղբայրական զգացմամբ եւ սիրոյ ողջունելով

Աղօրակից

ԽՈՐԷՆ Ա.

Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



Ն. Ս. Պապին Ս. Երկրէն մեկնումէն երկու  
 րորէն ետք, Ն. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հե-  
 տեհալ հեռագիրը ստացաւ Ն. Սրբաբնէնէ:

#### Վասիլան Սիրի, 8 Յունուար 1964

Նորին Ամեն.

Հայ Օրթոքսոս Պատրիարք Տէրտէրեան

Երուսաղէմ

Հռոմ վերադարձիս, Սուրբ երկիր մեր  
 ամուսնանալի ուխտագնացութենէն յետոյ, վե-  
 րստին կը յայտնենք մեր ուրախութիւնը Ձերդ  
 Սրբազնութեան հետ մեր հանդիպիլ կարե-  
 նալուն համար. եւ կը վստահեցնենք Ձերդ  
 Ամենապատուութիւնը մեր մաղթանքներուն  
 եւ աթոռներուն համար, որպէսզի Աստուծոյ  
 բարեհաճութեամբ այս հանդիպումը ըլլայ  
 բեղմնաւոր ամբողջ Քրիստոնէութեան բա-  
 րիկին համար:

ՊՕՂԱՍ Զ.

Ս. Ծննդեան տօնին առիթով, Ամեն. Սրբ.  
 Պատրիարք Հայրը հետեհալ շնորհաւորական  
 գիրը ստացաւ Քէնէտիլի Արքեպիսկոպիտէն:

Լամպէթի Պալատ  
 Լոնտոն

#### Ս. ԾՆՆՈՒՆԴ — 1963

Ձերդ Ամենապատուութիւն

Սիրեցեալ Սղբայր մեր ի Քրիստոս

Շնորհ եւ խաղաղութիւն ի Տեառնէ  
 մերմէ եւ ի Յիսուսէ Քրիստոսէ:

Այս նուիրական եղանակին, Քրիստոնեայ  
 ժողովուրդներ ամենուրեք արտաբայա հա-  
 նոյնով կը տօնեն իրենց Տիրոջ եւ Փրկչին  
 Յիսուսի Քրիստոսի Մարդեղութիւնը. «Եւ  
 Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ  
 տեսաք զփառս նորա, զի առաքել զՍիւ-  
 ժնի առ ի Հօրէ, լի զնորհօք եւ ճեմարտու-  
 րեամբ» (Յովհ. Ա. 14):

Երբ Աստուած ծանոյց իր նպատակը Գաբ-  
 րիէլ հրեշտակագետի միջոցաւ, Ան խնամահ  
 աղախինին արտին մէջ գտաւ հնազանդ պա-  
 տախան — «Եղիցի ինձ ըստ բանի քում»  
 (Ղկա. Ա. 38): Այս բառերով Սուրբ Կոյսը  
 ընդունեց իր բարձր կոչումը Տիրոջ Մայրը  
 ըլլալու, եւ բոլոր սերունդները զինքը ե-  
 րանեցին: Մեր աղօթքները կ'երբան բոլոր

անոնց՝ որոնք Քրիստոնեայ անունը կը կրեն,  
 որ հետեւին Սուրբ Կոյս Մարիամի օրինակին  
 եւ ընդունին յոծաբակամ հնազանդութեամբ  
 իրենց բարձր կոչումը Աստուծոյ օրհնութեան:

Քրիստոս Մանուկը ծնաւ աղիւսութեան,  
 պարզութեան եւ խոնարհութեան մէջ: Աս-  
 տուծոյ Որդին ունայնացաւ իր բոլոր մեծու-  
 րեան եւ իշաւ բաժնեւոր մեր մարդկութիւնը:  
 «Մեզի մարդոցս համար եւ մեր փրկութեան  
 համար Ան վար իշաւ երկինքէն»: Իցիլ թէ  
 Քրիստոնեայ ժողովուրդներ կ'աւանդին զսեւ,  
 հետեւաբար, իրենց հրեշտակներ եւ զօհոնա-  
 կութիւնը պարզ եւ խոնարհ ծառայութեան  
 մէջ: Աւստի առջեւ աղիւս ենք, բայց Աս-  
 տուծոյ եւ մարդկանց ծառանք ենք: Յով-  
 հանէս տեսարանիչ մեզի կ'ըսէ թէ լոյսը  
 կը հառազայրէ խաւարին մէջ եւ թէ խա-  
 ւարը անոր չէ յաղթած: Մենք որ Սուրբ Հո-  
 գիով մկրտուած եւ լուսաւորուած ենք, այդ  
 լոյսը կը կրենք մեր արտին մէջ, որպէսզի  
 մեր շուրջը զսնուող այս աշխարհի խաւա-  
 րին մէջ նոյնիսկ հրեշտակ կ'արեւանք: Մեր  
 արտին եւ մեր արտին մէջ կը բարձրանայ  
 անդադար սուրբ հրեշտակներու մեղեդին.

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յե-  
 կիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»  
 (Ղկա. Բ. 14):

Եղբայրական սիրոյ սղջունիւ Ձեր սիրեց-  
 եալ եղբայրն ի Քրիստոս.

Մ Ի Ք Ա Յ Է Լ

Արքեպիսկոպոս Քենթըրպրիի

Առաջնորդ եւ Մետապոլիս համայն Անգլիոյ

Նորին Ամենապատուութիւն

Եղիշէ Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
 Երուսաղէմ.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, անցնող Նոյմ-  
 24ին, հետեհալ ցաւակցական հեռագիրը յղեց  
 Սրբազալ Նահանգաց Նոր Նախագահին, Ողբ-  
 Նախագահ Քէնէտիլի սպաննութեան առիթով:

Պր. Լիւսիւն Ժոնսըն

Նախագահ Միացեալ Նահանգաց

Ճերմակ Տուն, Ուաշինկթըն

Խորապէս զրաւունք ենք անակնկալ եւ  
 ցաւալի մահուան առթիւ Միացեալ Նա-  
 հանգաց մեծագոյն առաջնորդ, զիւսմա.



գէտ, խաղաղութեան, ազատութեան եւ համաստեղութեան նախադասութեան Պր. Բենեքիի: Խորագրեալ ողբալով իր անփոխարինելի կուրուսը, մենք կը ներկայացնենք Միացեալ Նամակաց ժողովուրդին մեր խորին համակրանքն ու ցաւակցութիւնը եւ կ'ողորենք առ Աստուած իր հոգւոյն հանգիստին համար: Կ'ողորենք նաեւ Ձեր յաջողութեան, շաւուանակելու համար իր ազնիւ գործը յօգուտ ամերիկեան ժողովուրդի եւ ամբողջ աշխարհի բարօրութեան:

### ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԳԼՄԻ

Իսկ հետեւեալը պատասխանն է Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր վշտակցական հեռագրին, ստացուած տեղւոյն Ամերիկեան Հիւպատոսէն:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԴՀ. ՀԻՊԱՏՈՍ

31 Դեկտ. 1963

Նորին Ամենապատուութիւն

Նոյեմբեր 24ին, Միացեալ Նահանգներու Նախագահ Պր. Լինքոլն ձոնարնի ուղղուած Ձեր հեռագրով Ձեր ցաւակցութիւնը յայնժամ եի՛ք հանգուցեալ Նախագահ ձոն Բենեքիի մահուան առթիւ ու նաեւ ներկայացուած Ձեր մաղթանքները Նախագահին այն ծանր պատապանաստութեանց համար՝ զոր ան կը սանձենք:

Հրահանգուած եմ իմ կառավարութեան Ձեզի յայնչելու իրենց խորին գնահատանքը Ձեր արտայայտած զգացումներուն համար, քե՛ հանգուցեալ Նախագահի ողբերգական մահուան առթիւ եւ քե ալ Ձեր մաղթանքներուն՝ Նախագահ ձոնարնի բարօրութեան ու յաջողութեան համար:

ՈՒԻԼԻԸՄ ՀԵՄԻԼԹԸՆ  
Ընդհ. Հիւպատոս

Ամենապատու

Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
Երուսաղէմ.

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 5 Յուն. — Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Հրեշտակապետ ժամարարն էր Հոգչ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառով մուտք գործեց Մայր Տաճար, որ Նախագահեց Դաւիթ մարգարէի և Յակոբոս Տեառնեղբոր մեծանշանդէս նախատօնակին և Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ քարձրացաւ Պատրիարքարան:

● Բշ. 6 Յուն. — Ս. Դաւիթ մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբոր տօնին առիթով, բոս սոփութեան, առաւօտեան ժամերգութեան առեւ, Ս. Պատրիարքը զգեստաւորուած քարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին: Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց հիւրարար Ս. Աթոռ գտնուող Անթիլիասի Միարան և Պէշրուի Առաջնորդ Գերշ. Տ. Տաճատ Արքեպս. Ուրֆալեան, որ քարոզեց, բնարան ուշ նենալով վթազուոր երկնաւոր, զեկեղեցի քանդարժ պահեալ, և մաղթանքներ բրաւ Ս. Աթոռոյ անշարժութեան ու անասանութեան համար: «Հայր մերէն առաջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն» Ս. Աթոռոյ հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար:

— Ս. Ստեփանոսի նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Դշ. 7 Յուն. — Ս. Ասեփանոսի նախապաշտօն: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Աթոռոյ Բարշ. Սարկաւաղներն ու Ուրարակներն, առաջնորդութեամբ բարձրաւանդէր Հոգչ. Տ. Դանիէլ Արդ. Եամիլեանի և Հոգչ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեանի, պանծացուցին յիշատակը իրենց մատրիպարին: Հանդիսութեան Նախագահեց Գերշ. Լուսարարապետ Սրբադանը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Ստեփանոս մարտն — աւանդատան — մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Տաթև Արդ. Դարիպեան:

● Դշ. 8 Յուն. — Դիլաւոր Առաքելոյ Պետրոսի և Պողոսի նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.:

● Եշ. 9 Յուն. — Ս. Պետրոսի եւ Պողոսի առաւելոց տօնին առիթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վահան Արդ. Թափալեան: Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի ուսուցչական կազմը և աշակերտութիւնը Հաղորդուեցան:

● Ուր. 10 Յուն. — Որդւոց Որոտմանի մեծանշանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Տ. Հայրիկ Արքեպս.:

● Եր. 11 Յուն. — Տօն Ս. Որդւոց Որոտմանի Գերշ. Լուսարարապետ Սրբադանը հանդիսարար Ս. Պատարագ մատուց Ս. Դիլաւորի մատարան մէջ և ապա, ամպշովանի տակ և կենաց Փայտի մատունքն ի ձեռին, Նախագահեց մեծանշանդէս Թափօրին, Մայր Տաճարին մէջ:



● Կիր. 12 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ Պատարագեց և քարոզեց Հոգշ. Տ. Դանիէլ Արք. Շամբան, բնաբան ունենալով «Ես եմ հացն կենաց», և ցոյց տուաւ տարբերութիւնը ընդմէջ երկնաւոր, հոգեկան հացին և երկրաւոր, նիւթական հացին, շեշտելով Քրիստոսի կենարար մարմնոյն — երկնաւոր հացին — և արեան հետ յաճախակի հաղորդուելու անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր քրիստոնեայի համար: Ս. Պատարագէն ետք, Ս. Թ. Վարժարանի երկրորդական բաժնի և Նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ Դպրոցի առժամ Տեսուչ Պատարագիչ Հորմէն:

● Դշ. 14 Յուն. — Կաղանդ: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց ժամօրհնող Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ապա Միաբանութիւն և աշակերտութիւն շաբաթական երգեցողութեամբ բարձրացան Պատարագը, ուր Ս. Թարգմանչաց Վարժարանի փոքրիկներէն միոյն ծաղկեփունջով առ Ս. Պատրիարք Հայր արտասանած բարեմաղթական զեղեցիկ ուղերձէն ետք Ն. Ամենապատուութիւնը Նոր Տաւրոյ առթիւ շնորհաւորական խօսքեր քրաւ և բաշխեց ներկաներուն, ըստ սովորութեան, մէյմէկ նարինջ:

● Եր. 18 Յուն. — Ճրագալոյց: Ընդհանրապէս Առաւօտեան ժամը 9:30-ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերու պատկառելի թափօրով մը համբայ ելաւ զէպի Բեթլեհէմ ձամբու ընթացքին զինուորական պատիւներու արժանանալէ և պատուասիրուելէ ետք, թափօրը ժամը 11-ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, և ժողովուրդի բազմութեան, աշակերտութեան շարքերուն ու տեղացող ձիւնախառն անձրեւին ընդմէջէն, Խորհուրդ մեծի երգեցողութեամբ յառաջացաւ զէպի Ս. Ծննդեան Տաճար, մինչ զուարթօրէն կը զօղանջէին հայկական զանգերը Տաճարին: Դիմաւորութեան եկողները պատուասիրուեցան վանուց Տեսչարանին մէջ:

— Կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառող մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար: Ս. Այրի ուխտէն ետք, Տաճարի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ձրագալոյցի արարողութիւն: Իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Ժամարարն էր Արթ. Տ. Կարապետ Քնյ. Անդրէասեան: Ապա պաշտուեցաւ Ս. Ծննդեան Նախատօնակ, որմէ ետք Միաբանութիւնը շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Ս. Ծննդեան հայավանքը:

\*, Իսկ յերուսաղէմ, Ս. Ծննդեան արարողութեանց Նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արք.: — Գիշերուան ժամը 10-ին Միաբանութիւնը արթուն է արգէն Տաճարի զանգերու զուարթ ու խորհրդաւոր զօղանջէն, ու կէս ժամ ետք ընթացք կ'առնէ գիշերային ժամերգութիւնը Տաճարի մեր բաժնին մէջ:

● Կիր. 19 Յուն. — ՏՕՆ ԵՆՆԻԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱՆԱՅԱՅՏԻՈՒԹԵԱՆ ՅԵԱՒՆ: Կէս Գիշերին, Փառք ի բարձունսէն անմիջապէս առաջ, լուցեալ մամբրով, Միաբանութիւնը իջաւ Ս. Այրը, ուրկէ, ձայնասփռուին միջոցաւ, իր պաշտամունքին հաղորդ քրաւ ի սփրնոս աշխարհի ցրուած զաւակները հայ ժողովուրդին: Այդ միջոցին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը տուաւ Ծննդեան իր պատգամն ու աւետիսը, որ կ'երևի Սիոնի այս թիւին սկիզբը: — Գիշերային այս պաշտամունքին, կանուխէն, ներկայ գտնուեցան և մասնակցեցան Երուսաղէմի Կսեմ. Կառավարիչը, Բեթլեհէմի Գայմագամը, Երուսաղէմի և Բեթլեհէմի Ոստիկանագետները, Հիւպատոսական Մարմինն ներկայացուցիչներ և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնք ժամերգութեան աւարտին շնորհաւորեցին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և զոհունակ սրտով մեկնեցան: Ս. Պատրիարքը վերադարձաւ Երուսաղէմ: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Տաճարի հայկական բաժնին մէջ: Ժամարարն էր Անթիլիասէն հիւրաքար Ս. Աթոռ ժամանած Հոգշ. Տ. Կոմիտաս Արք. Սնանեան: Անկէ ետք կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւնը, տպաւորիչ հանդիսաւորութեամբ և Նախագահութեամբ Լուսարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի, որ ապա հանդիսաւորապէս մատոյց վերջին Ս. Պատարագը Ս. Այրին մէջ: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը Խորհուրդ մեծի երգեցողութեամբ բարձրացաւ Ս. Ծննդեան հայավանքը, անցնելով սրնազարդ գաւթէն:

— Նախանաչէն և կարճ դադարէ մը ետք, Միաբանութիւնը նոյն հանդիսաւորութեամբ վերադարձաւ Երուսաղէմ և Խորհուրդ մեծի շարականի երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Ս. Պատրիարք Հայրը ընդունեց եկողներու քերէնն տօնին աւետիսը: Քիստոս ծնաւ եւ յայնճեցաւ.

և իր հայրական փոխադարձ օրհնութիւնը տուաւ բոլորին:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Բշ. 20 Յուն. — Յիւսէպի մեռելոյ: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, Ս. Աթոռոյս Աւագ Թարգմանը՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

● Եր. 25 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանի ձախակողմը գտնուող Ս. Աթանաս խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արք. Պատուէրեան:

— Անուանակոչութեան Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

● Կիր. 26 Յուն. — ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՎՈՐԵԱՆ ՏԵԱՆՈՒ: Առաւօտեան ժամը 8:45-ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառող հանու



դիտութեամբ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.: Վանք վերադարձին, Հայոց թագի մուտքէն, Միաբանութիւնը Վոյս ի իւստոյ շարականը երգելով յառաջացաւ դէպի Մայրավանք ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հօր. նախագահութեամբ կատարուեցաւ Տնօրէնէքի արարողութիւն: Օրհներեցան Ս. Աթոռոյս բարիքները և երգուեցան Ս. Ծննդեան և Մկրտութեան շարականներ, իբրև փակումը Ծննդեան ութօրեայ հանդիսութեանց: Նոյն արարողութիւնը, ժամօրհնող Հօր գլխաւորութեամբ, կրկնուեցաւ մառանին, փուռին, սեղանատան և խոհանոցին մէջ, ուր օրհնուեցաւ նաև օրուան յատուկ հետխայի աւանդական ճաշը:

— Ս. Յովհ. Կարապետի Ծննդեան հանդիսաւոր նախատանկին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Բշ. 27 Յուն. — Ս. Յովնանու Կարապետի ծննդեան տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աստ. Խորանի աջակողմի գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Արթ. Տ. Կարապետ Քնյ. Անդրէասեան:

### ՊԱՇՏՈՆ ԱԿԱՆՔ

● Դշ. 1 Յուն. — Նոր Տարւոյ առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոս և Լիազօր ներկայացուցիչ Պր. Լրմուանի կողմէ, Ամպաստոր պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., Հոգշ. Տ. Գեորգի Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւեան:

● Ուր. 3 Յուն. — Անթիլիասէն Ս. Աթոռ ժամանեցին Լիբանանահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տաճատ Արքեպս. Ուրֆալեան, Կիլիկեան Դպրեմանուց Տեսուչ՝ Գերշ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Սարգիսեան և Գերշ. Տ. Արտաւազդ Մ. Վրդ. Թրթոեան: Գերշ. Սրբադանն ու իր հետեորդները ներկայ եղան Պապին Ս. Քաղաք այցելութեան և Յուն. Եր. Երեկոյ վերադարձան Լիբանան:

● Դշ. 8 Յուն. — Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, Օրթոտոքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առթիւ այցելեց Ղպտոց, Ասորոց և Հայդէշաց Գերշ. Եպիսկոպոսներուն:

● Եշ. 9 Յուն. — Ն. Վեհ. Հիւսէյն Թաղաւորի եղբոր՝ Իշխան Մուհամմէտի ամուսնութեան երջանիկ առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր Ս. Յակոբեանց Միաբանութեան և Յորդանանի Հայ համայնքին անունով շնորհակարարական հեռագիր մը յղեց Ամմանի Արքեպիսկոպոսին:

● Ուր. 10 Յուն. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. Սրբադաններու և Հոգշ. Հայրերու, Օրթոտոքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առթիւ շնորհակարարական գնաց Ծունաց Պատրիարքարան:

— Նոյն օրը, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան և Տիար Կարպիս Հինգիւեան ներկայ եղան Անկիլիքան Արքեպս. Գերշ. Տ. Մաք. Իննէսի կողմէ, Անկիլիքան Արքեպիսկոպոսարանի մէջ տրուած թէյասեղանին:

● Եր. 11 Յուն. — Կէսօրէ առաջ, Ս. Ռաֆայի երեսասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Դաւիթ Վրդ. Սահակեան, որ տարիէ մը ի վեր կը հովուէր Կալկաթայի Հայ համայնքը, վերադարձաւ Ս. Աթոռ: Հոգշ. Հայրը Դշ. 22 Յունուարին մեկնեցաւ Լիոն (Ֆրանսա), Վեհ. Հայրապետին կարգադրութեամբ ստանձնելու համար տեղւոյն տայ գաղութին հոգեւոր հովուութեան պաշտօնը:

● Դշ. 15 Յուն. — Ծառի տօնին առթիւ, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւեան ներկայ եղան Հարամ Շէրիֆի չըֆափակին մէջ կատարուած ծառի տնկման հանդիսութեանց:

● Եշ. 16 Յուն. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, Անթիլիասէն Ս. Աթոռ ժամանեցին Հոգշ. Տ. Եղնիկ Վրդ. Բալայեան, Հոգշ. Տ. Եղիշէ Արդ. Մանճրիկեան, Հոգշ. Տ. Կոմիտաս Արդ. Օհանեան և Հոգշ. Տ. Եփրեմ Արդ. Թապաքեան:

● Ուր. 17 Յուն. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, առաւօտեան ժամը 7էն սկսեալ, Իսրայէլի զանազան քաղաքներէն 250 հայեր սահմանը անցնելով ժամանեցին Ս. Քաղաք և տօնէն ետք, Կիրակի, 19 Յունուարի երեկոյեան վերադարձան Իսրայէլ:

● Բշ. 20 Յուն. — Կէսօրէ առաջ ժամը 9-12, մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորութեան եկան՝ Ծունաց և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքները, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոտը, Ղպտոց, Սսորոց, Հայդէշաց և Յոյն-Կաթոլիկներու Գերշ. Եպիսկոպոսները, իրենց Միաբանութեան անդամներով, Անկիլիքան Արքեպս. և Արար-Անկիլիքան Եպս. և Հայ-Կաթոլիկ և Մարոնիթ համայնքներու Պատր. Փոխանորդները, Լուսերականներու և Արար-Լուսերականներու Երէցները և Հայ-Բողոքական համայնքի հովիւ վեր. Եղիս Հանճեան: Հիւպատոսական Մարմինէն՝ Բրիտանական, Ամերիկեան և Սէնտաական Արարիոյ Հիւպատոսները՝ Պետական ղէմքերէն՝ Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը, Քաղաքապետը, Նոր և Հին Քաղաքի Ոստիկանապետները, Կրօնական Գործոց Գալմազամը, Նախկին Կառավարիչ Անուար Նուսէյպի և բարձրաստիճան սպաներ, անհատաւոր պաշտօնիներ և օտար անձնատուութիւններ: Իսկ Պապական Գերշ. Նուիրակը այցելեց Եր. 25 Յունուարին:



# 1964-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

## ԵՐԵՎԱՆԻԿԵՆ

Գերշ. Տ. Հայրենի Արքեպս. Ասլանեան՝ Վասպուրականի Հայր. Միութեան (Պէյրուսթ):  
Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողոսեան՝ Պողոսեան Գրատան (Հալէպ):

Տիար Հարօլա Աղամեանին (Տօրքէսթըր):

Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան՝ Արթ. Տ. Խաչիկ Քչյ. Գերմանիկեանին (Հա-  
Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրզի): [Էպ]:

Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան՝ Օր. Մելինէ Գովանճեանին (Պրիւքսէլ):

Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիկեան՝ Տիար Միսիթար Գաբրիկեանին (Նիւ Եսրք):

Հոգշ. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան՝ Հոգշ. Տ. Ժիրայր Արդ. Թաճեանին (Գանատա):

Հոգշ. Շ. Գեղամ Արդ. Զաքարեան՝ Տիար Յակոբ Զաքարեանին (Պէյրուսթ):

Հոգշ. Տ. Վահան Արդ. Թօփալեան՝ Տիար Ժիրայր Անժառանգի (Պէյրուսթ):

Բարշ. Յովհաննէս Սրկ. Այվազեան՝ Տիար Յարութիւն Այվազեանին (Պէյրուսթ):

Փանոս Սրկ. Փանոսեանին (Անթիլիաս):

Ուրարակիր Տրց. Տիրան Սամուրեան՝ Տիար Մելքոն Սամուրեանի (Ամերիկա):

Ժառ. սան Եղիա Պալիօղեան՝ Տիար Ներսէս Պալիօղեանին (Հալէպ):

Ժառ. սան Վաղդէն Քէսէրեան՝ Տիար Գեղամ Քէսէրեանին (Հալէպ):

Ժառ. սան Թորոս Մկրտիչեան՝ Տիար Նշան Մկրտիչեանին (Հալէպ):

Տիար Ստեփան Մկրտիչեանին (Բագդա):

Տիկին Հռիփսիմէ Զարբեանին (Հալէպ):

Ժառանգաւորաց Վարժարանի Դ. Դասարանի հինգ սաներ՝ իրենց նախկին ուսուցիչ  
Տիար Մովսէս Ճանոյեանին (Ամերիկա):

Տիար Մուրատ Մանուկեան՝ Տիար Մինաս Գալպիեանին (Լոսանոս):

## ԲԵՐԼԻՆԵՆԿԵՆ

Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Տեփոյեան՝ Գերշ. Տ. Տաճատ Արքեպս. Ուրֆուլեանին (Պէյ-

Տիար Շիւքըր Մուրատեանին (Գամիշլի): [Բուսթ]:

Արթ. Տ. Գրիգոր Քչյ. Աւագեան՝ Տիար Յակոբ Յակոբեանին (Լոս Անճէլըս):

## ԱՄՍԿԵՆ

Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան՝ Տիար Երուանդ Մանուկեանին (Հալէպ):

Տիար Արշակ Սարգիսեան՝ Տիար Հրանդ Նազաշեանին (Գաղա):

## ՊԱՐԻՍԿԵՆ

Տիար Լևոն Յովհաննէսօֆ՝ Տիար Ստեփան Յովհաննէսօֆին (Լոսանոս):

## Ս. ԷԶՄԻԱՃՆԵՆ

Գերշ. Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամեան՝ Տիար Հայկ Օհաննէսեանին (Գահրէ):

Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէյրուսթ):

## ՓԱՐԻՔԵՆ

Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան՝ Տիար Արշակ Սարգիսեանին (Յրէզնօ):

Տիար Մարութ Յովհաննէսեանին (Մօնթէվիտէօ):

Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան՝ Տիար Սարգիս Բապուճեանին (Պէյրուսթ):

## ՀԻՒՍ. ԱՄԵՐԻԿԱՅԵՆ

Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան՝ Տիար Սարգիս Ենիգոմշեանին (Անթիլիաս):

Արթ. Տ. Վարդան Քչյ. Աւագեան՝ Տիար Տիգրան Պաղաւեանին (Նիւ Ճըրզի):

Արթ. Տ. Արաէն Քչյ. Աճեան՝ Տիար Յակոբ Յարութեանին (Յրէզնօ):

Տիար Պետրոս Գոնճոյեան՝ Հոգշ. Տ. Սմբատ Վրդ. Լափաճեանին (Լոս Անճէլըս):

Տիար Մովսէս Ճանոյեան՝ Տիար Յակոբ Ճանոյեանին (Արեւմտ. Գերմանիա):

Տիկին Աննա Ուիլիամսօն՝ Տիկին Սուլթան Եոսուֆեանին (Ամերիկա):

Օր. Խանըմ Սարգիսեան՝ Տիար Մարտիրոս Գաբրիէլեանին (Սան Յրանիսկօ):

Յրէզնոյի Հանրային Մատենադարանին:

Յրէզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Մատենադարանին:

Օր. Էլիզապէթ Տառաեան՝ Տիար Խաչիկ Պարսամեանի (Ամերիկա):



**«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ  
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

- Էլիաս Ապտ էլ-Մէլիք կը նուիրէ 26 հատ Անգլիերէն գիրքեր:
- Ասկի Առուն (Քերթուածներ) - Մ. Իշխան (նուիրատու): Պէյրուս, 1963, էջ 295:
- Ասկի Անճրել (Հէքեաթ) - Ատրինէ Տափեան: Հրատ. և նուէր «Պարտէզ»-էն: Իսթան-պուլ, 1962: [էջ 344:
- Ջինուորի մը Գուշերը Արհաւիրքի Օրերէն - Պետրոս Հերոյեան (նւրա.): Պոսթըն, 1963, Տեղեկագրեր Ազգային Միացեալ Վարժարանի, Իրաք: Պատրաստեց Գ. Սիւրմէնեան: Պաղատատ, 15 Յունիս 1963, էջ 34:
- Յիսուսի Սիրքը - Հ. Եսփ. Վրդ. Մըսրէրեան (նուիրատու): Պատմա-Բարոյական Մատենաշար թիւ 1: Պէյրուս, 1956, էջ 32:
- Գաղափոյ Հայ Մանրակարչական Դպրոցը - Հեղինակ և նուիրատու նոյն ըստ Նախորդին: - Հատուած «Հանդէս Ամսօրեայ»ի 1961 Հոկտ. - Դեկտ. թիւէն:
- Սբ. Գիբս ու կոչի Մառոն - Կ. Պօլիս, Տպ. Պետրոսեան Ստեփաննոսի, 1792, էջ 384: Նուէր Կիւրեղ Վրդ. էն:
- Զաւեստի Փունջեր - Մենծիկ Միսաքեան (նուիրատու): Ուօթըրթաուն, 1963, էջ 67:
- Ուղղագրական Բաղգրոյի - Արտաշէս Արեղեան: Նուէր Մ. Ղարաբէկեանէ: Թէհրան, 1962, էջ 189: [վերդեան, Թէհրան, էջ 194:
- Հին Ասուածներ (Պարսկերէն) - Լեոն Ծանթ: Պարսկերէնի թարգմ. Եովն Լ. Սլլահ: Անլոնի Զանգակատուն - Պարոյր Ասակ: Նուէր «Ալիք»-էն: Մատենաշար և Տպ. «Ալիք»-ի: Թէհրան, 1963, էջ 213:
- Սայաթ Նովա (Հայերէն և Անգլիերէն) և Սայաթ-Նովայի Ֆոտո-Հաւաքածոն: Նուէր ԱՕԲՍէն: Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 36:
- Հայաստանի Կենդանական Աւիաբեր (Հատոր Ա.) - Վախթանգ Անանյան: Նուէր ըստ Նախորդին: Երևան, Հայպետհրատ, 1961, էջ 432:
- Հայերէն Բաղգիրք Աւիաբերաբար Լեզուի - Գեղամ Քերովեան: Նուէր Հ. Բ. Ը. Մ. Ս. Ամերիկայի Կեդր. Վարչութեանէն: Իսթանպուլ, 1962, էջ 566: [197:
- Մեր Ճամբան - Լեոն Լանիս: Նուէր Տկ. Սաթիւրիկ Ծահագրիկեանէ: Պուքրէշ, 1938, էջ Փունջ մը Քերովեան Վ. Թէքէեանէ: Նուէր Պ. Լէփէճեանէ: Հայէպ, 1945, էջ 20:
- Նղելինին Տակ (Հատուածներ) - Հ. Ղևոնդ Ալիշան: Թարգմանեց Հ. Վահան Եովհաննէսեան: Գրական Ցուրթեր թիւ 4: Վենետիկ, Ս. Ղազար, 1944, էջ 110:
- Կովսաս Վարդապետ եւ Հայ Երգը - Յակոբ Բ. Ասատուրեան (նուիրատու): Նիւ Եորք: Տպուած Պէյրուս, 1962, էջ 89:
- «Պայքար» Բացառիկ - Սեպտեմբեր 1931: Նուէր «Պայքար»-էն: Պոսթոն, էջ 128:
- » » - Նոր Տարուան 1942ի: Նուէր ըստ վերնոյն: Պոսթոն, էջ 160:
- » » - » 1944ի: » » » » » 220:
- Զախջախուած Նղեգէն Մեղեդիներ - Եղուարդ Բազուպեան: Պէյրուս, 1963, էջ 340:
- Բ. Ժ. Սիրունի կը նուիրէ իր գործերէն 9 հատորիկներ:
- Ակնարկ մը Գերմանիկ Թատերախումբէն - Հրատ. Պէյրուսահայ Քուլիսականներու Թատերախումբի թիւ 1: Նուէր Դաւիթ Բ. Էվէրէկեանէ:
- (Շարունակելի)

تصدرها - بطريق كية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النافذة رئيس الاساقفة هابكازون أبراهاميان  
طبع في مطبعة دير الارمن - القدس  
يناير - فبراير ١٩٦٤  
العدد ١ - ٢